| Ընթացք 1 | 1. PPCM համակարգում մրցույթը ստեղծելուց հետո մրցույթի տվյալները ավտոմատ փոխանցվում են էլեկտրոնային գնումների ARMEPS (այսուհետ՝ ARMEPS) համակարգ: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ որոշ ծրագրերի շրջանակներում ՀՀ ՖՆ գրավոր դիմելուց հետո պատվիրատուին հնարավորություն է ընձեռվում ստեղծել նոր մրցույթ անմիջապես ARMEPS համակարգում՝ «Ստեղծել նոր ՄՀ» գործառույթի միջոցով, որոնց արդյունքներն ըստ անհրաժեշտության, (օրինակ՝ Դրամաշնորհային առանձնահատուկ ընթացակարգեր) պատվիրատուները պարտավորվում են մուտքագրել PPCM համակարգում՝ պայմանագրի կառավարման հետագա գործընթացները իրականացնելու համար:<br>2. Անմիջապես ARMEPS համակարգում նոր ընթացակարգ կազմակերպելու համար ընթացակարգի քարտուղարը մուտքագրելով «Մուտքանունն» ու «Գաղտնաբառը»՝ մուտք է գործում համակարգ: «ՊՊ գործառույթներ» բաժնում «Ստեղծել նոր ՄՀ» սեղմակով ընտրում է համապատասխան գնման ընթացակարգի տեսակը: Բացված «պարտադիր» դաշտերում լրացնում է ընթացակարգի առանցքային տվյալները՝ (վերնագիրը՝ պարտադիր հայերեն,ռուսերեն և անգլերեն լեզուներով, ծածկագիրը, նկարագրությունը, գնումների տիպը, գնումների միասնական անվանացանկի (ԳՄԲ) կոդերը և այլն) և սեղմում «Ստեղծել ՄՀ-ի աշխատանքային տարածք» սեղմակը:<br>3. Տվյալները PPCM համակարգից ARMEPS համակարգ փոխանցվելուց, ինչպես նաև անմիջապես ARMEPS համակարգում նոր ընթացակարգ ստեղծելուց հետո գնման ընթացակարգի քարտուղարը «Օգտվողի հիմնական էջ» սեղմակի միջոցով կատարում է առաջադրանքների ցուցակում տվյալ ընթացակարգի հետ կապված առաջադրանքները:<br>4. Ընթացակարգի հանձնաժողովի կազմը ստեղծելու համար առաջադրանքների ցուցակից ընտրում է «Կցել ԳՊ/Միմ» առաջադրանքը: Համակարգը որպես ԳՊ/Միմ (մրցույթի համակարգող) օգտվող ավտոմատ ներկայացնում է տվյալ ընթացակարգի քարտուղարի տվյալները, որը համապատասխան սեղմակների միջոցով ավելացնում է հետևյալ օգտվողներին ԳՊ/ԲԱ՝ Գնման Պատասխանատու/ Բացման Աշխատակազմ (2 օգտվող), ԳՊ/ԳԱ ու ԳՊ/ԳԱՊ՝ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ (նվազագույնը 2 օգտվող): Մեկ գնահատող պետք է կցվի որպես գնահատման հանձնաժողովի ղեկավար (ԳԱՊ): ԳՊ/ԲԱ դերերով կցված գնման պատասխանատուները պետք է լինեն տվյալ պայմանագրային պատվիրատուի գնման պատասխանատուները: Կցված ԳՊ/ԳԱ ու ԳՊ/ԳԱՊ դերերով գնման պատասխանատուները կարող են լինել նաև այլ պայմանագրային պատվիրատուների պատասխանատուները: Տվյալ ընթացակարգի օգտվողներն ու նրանց դերերը կարող են փոփոխվել ցանկացած ժամանակ, օգտվողը կարող է հեռացվել մի որևէ ընթացակարգից՝ «Տարաբաժանել» սեղմակի օգնությամբ: Գնահատողը, ցանկացած պահի, կարող է փոխարինվել գնման գործընթացի ընթացքում: Այս դեպքում բոլոր լրացված գնահատումները (սևագիր կամ վերջնական) պատճենվում են նոր օգտվողի աշխատանքային տարածքում: Բոլոր վերջնական գնահատումների կարգավիճակը փոխվում են սևագրի, որպեսզի նոր օգտվողին հնարավորություն տրվի խմբագրել ու փոփոխել գնահատումները:<br>5. «Սահմանել աշխատակարգը» առաջադրանքով ընթացակարգի յուրաքանչյուր փուլի համար (մրցույթի կառուցվածքի սահմանումը, հարց ու պատասխանները, հայտերի բացումն ու ներկայացումը, հայտերի գնահատումն ու միավորների նշանակումը, մրցույթի շնորհումը) ընտրվում է իրականացման առցիծ եղանակը (առցիծ, գծից դուրս): Ընտրությունը հաստատվում է «Սահմանել ՄՀ Աշխատակարգը» սեղմակի միջոցով: «Գծից դուրս» տարբերակի ընտրության դեպքում |

հնարավոր չի լինելու իրականացնել տվյալ գործառույթը առցանց եղանակով: Սխալ մուտքագրված տվյալը մրցույթի հրապարակումից հետո ուղղելու համար պատվիրատուն գրավոր դիմում է ՀՀ ՖՆ՝ համակարգի սպասարկողների օգնությամբ սխալը ուղղելու նպատակով:

6. «Սահմանել մրցույթի կառուցվածքը» առաջադրանքով սահմանվում է ընթացակարգի կառուցվածքը պիտանելիության ծրար, տեխնիկական ծրար, ֆինանսական ծրար բաժիններով: Պիտանելիության և տեխնիկական ծրարի նոր բաժին ստեղծելու համար քարտուղարը ընտրում է «Ավելացնել Բաժին» սեղմակը, որտեղ ներմուծում է տվյալ բաժնի պիտակը, տեղեկատվությունը և սեղմում «Ներկայացնել» սեղմակը: Գնահատման չափորոշիչ սահմանելու համար քարտուղարը ընտրում է «Ավելացնել չափորոշիչ» սեղմակը: Ընդունվում է չափորոշիչի «Ֆայլ» տիպը և ընտրվում է չափորոշիչի լրացման հատկությունները (չափորոշիչի պիտակը, չափորոշիչը պարտադիր է, թե՝ ոչ, չափորոշիչի տիպի համար օգտվողը պետք է սահմանի չափորոշիչի առավելագույն թույլատրելի չափը, գնահատման մեջ ներառված չափորոշիչը պարտադիր է, չափորոշիչի շեմը պետք է լինի 1): Չափորոշիչը ստեղծվում ու ներմուծվում է ընտրված բաժնի մեջ՝ ընտրելով «Ներկայացնել» սեղմակը:
7. Ֆինանսական տարրը սահմանելու համար քարտուղարն ընտրում է ֆինանսական ծրարի հիմնական պատուհանի «Սահմանել Ֆինանսական» սեղմակը և բացվող պատուհանում «Ներկայացնել» սեղմակի միջոցով՝ առանց բացված դաշտերում արժեքներ մուտքագրելու ավարտում է սահմանումը: Ֆինանսական չափորոշիչ ստեղծելու համար օգտվողը ֆինանսական ծրարի հիմնական պատուհանում ընտրում է «Մտցնել Ֆինանսական չափորոշիչ» սեղմակը: Նոր բացված պատուհանում քարտուղարը տրամադրում է չափորոշիչի անունը, ինչպես նաև՝ նշում, որ չափորոշիչը պետք է պարտադիր լինի: Փոփոխությունները պահպանելու համար ընտրում է «Ներկայացնել» սեղմակը և դուրս է գալիս պատուհանից: Ավարտելուց հետո սեղմում է «Պահել վերջնականը» սեղմակը:
8. «Հրատարակել պայմանագրային ծանուցումը» առաջադրանքով «Պայմանագրի փաստաթղթեր» բաժնում կցվում են ընթացակարգի հրավերի ֆայլերը՝ հայերեն և ռուսերեն տարբերակներով, հրավերի հայտարարության տեքստի ֆայլը անգլերեն տարբերակով՝ համակարգում առկա «լեզու» դաշտում պարտադիր նշելով համապատասխան լեզուները, ինչպես նաև կցվում են հրապարակման ենթակա այլ փաստաթղթեր: Ընթացակարգին փաստաթղթեր ավելացնելու համար օգտվողը պետք է «Ավելացնել Պայմանագրի Փաստաթուղթ» սեղմակի միջոցով լրացնի փաստաթղթի վերնագիրը, ներբեռնվող ֆայլի լեզուն, լրացնի նկարագրությունը (որը պարտադիր չէ), ընտրի համակարգի մեջ բեռնվող ֆայլը, ընտրի բեռնվող ֆայլի կարգավիճակը՝ վերջնական կամ սևագիր (սևագիր տարբերակով փաստաթուղթը հասանելի չի լինի տնտեսական օպերատորներին և ենթակա է խմբագրման), սեղմի «Պահպանել փոփոխությունները» սեղմակը: Բեռնվող ֆայլը կներառվի ՄՀ-ի փաստաթղթերում, որը ընթացակարգի հրապարակումից հետո կցուցադրվի նաև Տնտեսական օպերատորներին: Սևագիր պայմանագրային որևէ փաստաթուղթ խմբագրելու համար քարտուղարը պետք է ընտրի փաստաթուղթն ու սեղմի «Խմբագրել» սեղմակը: Համակարգը հնարավորություն է տալիս օգտվողին բեռնել փաստաթղթի նոր տարբերակը: Օգտվողը պետք է տրամադրի փաստաթղթի ընթացիկ և նախորդ տարբերակների միջև տարբերությունների տեքստային նկարագրությունը: «Պահպանել փոփոխությունը» սեղմակի միջոցով գործողությունն ավարտվում է: Սևագիր պայմանագրային որևէ փաստաթուղթ հեռացնելու համար օգտվողն ընտրում է փաստաթուղթն ու սեղմում «Ջնջել» սեղմակը: Նախքան որևէ ջնջում իրականացնելը, համակարգը մշտապես հուշում է օգտվողին հաստատել իր ընտրությունը:
9. Քարտուղարը սեղմում է «Ստեղծել ծանուցում» սեղմակը և ձևի լրացման մոդուլ գործիքով ստեղծում ծանուցում, ընտրելով «Պայմանագրի ծանուցում»-ը՝ հրապարակում է ընթացակարգը:

*ARMEPS համակարգում մուտքագրվող մրցույթներն են՝

1. Բաց մրցույթ
2. Հրատապ բաց մրցույթ

<table>
<tr><td></td><td>
3. Գնանշման հարցում<br>
4. Բաց ազգային մրցույթ<br>
5. Հրատապ մեկ անձնից գնում<br>
6. Դրամաշնորհային մրցույթ
</td></tr>
<tr><td>Մուտքագրվող տվյալներ</td><td>
Գ6-1/Մ
<table>
<tr><th>Տվյալ</th><th>Նկարագրություն</th></tr>
<tr><td>Ծածկագիր</td><td></td></tr>
<tr><td>Գնման ընթացակարգ</td><td>տեղեկատու</td></tr>
<tr><td>ԳԼԲ Կոդ</td><td>տեղեկատու</td></tr>
<tr><td>Վերնագիր հայերեն/ռուսերեն/անգլերեն</td><td></td></tr>
<tr><td>Նկարագրություն</td><td></td></tr>
<tr><td>Հայտերի ներկայացման վերջնաժամկետ (օր/ժամ)/օրացույց/</td><td></td></tr>
<tr><td>Գնման տիպ (ապրանք, աշխատանք, ծառայություն)</td><td>տեղեկատու</td></tr>
<tr><td>Չափաբաժնի անվանում</td><td></td></tr>
</table>
Գ6-2/Մ
<table>
<tr><th>Տվյալ</th><th>Նկարագրություն</th></tr>
<tr><td>Ընթացակարգի հանձնաժողովի կցագրում</td><td></td></tr>
<tr><td>Ընթացակարգի հանձնաժողովի կցագրում</td><td></td></tr>
<tr><td>Մրցույթի կառուցվածքի սահմանում</td><td></td></tr>
<tr><td>Հրավերի և անհրաժեշտ փաստաթղթերի կցագրումն ու հրապարակում</td><td></td></tr>
<tr><td>Հարց ու պատասխաններ</td><td></td></tr>
<tr><td>Հայտերի տրամադրում</td><td></td></tr>
</table>
</td></tr>
</table>

| | |
|---|---|
| Հայտերի բացումն ու ներկայացում | |
| Հայտերի գնահատումն ու միավորների նշանակում | |
| Պայմանագրի շնորհում | |

**Գ6-3/Մ**

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|
| Չափորոշիչի պիտակ | |
| Պարտադիր | ***ԱՅՈ, ՈՉ*** |
| Միայն ընթերցման մատակարար | |
| Չափորոշիչի (ֆայլի )առավելագույն թույլատրելի չափը (MB) | |
| գնահատման մեջ ներառված չափորոշիչ | |
| Ֆինանսական ծրար/գնառաջարկ | |

Ելքագրվող տվյալներ

**Գ6-1/Ե**

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|
| Պայմանագրային պատվիրատուի անունը | |
| Վերնագիր հայերեն/անգլերեն/ռուսերեն | |
| Ընթացակարգի ծածկագիր | |
| ՄՀ առանձնահատուկ հ/հ | |
| Գնահատման մեխանիզմ | Տեղեկատու |
| Նկարագրություն | |
| Գնումների տիպը | Տեղեկատու |
| Ընթացակարգ | Տեղեկատու |

| | |
|---|---|
| ԳԼԲ կոդեր | |
| Մոտավոր արժեքը (ՀԴ) | |
| Ժամանակի սահմանափակում հայտերի ստացման կամ մասնակցության հայտերի համար | |
| Հրավերների առաքման վերջնաժամկետ | |
| Պարզաբանումների հարցում (սկսած-մինչև) | |
| Հայտերի բացման ամսաթիվը | |
| Միափուլ կամ երկփուլ ներկայացում | |
| Չափաբաժիններով շնորհված պայմանագիր | |
| Հրատարակման/Հրավերի օր | |
| Շնորհման օր | |

**Գ6-2/Ե**

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|
| Ավտոմատ և ոչ ավտոմատ ծանուցումներ | |
| Ընթացակարգի հրավերի ֆայլ, կից փաստաթղթեր | |
| Մրցույթի կառուցվածքի XML ֆայլ | |
| Մրցույթի նախապատրաստման գործիք | բեռնվող տվյալներ |

| | |
|---|---|
| Վալիդացիա | ARMEPS համակարգում գնման ընթացակարգի նախագծման և հրապարակման փուլում իրականացվում է հետևյալ տվյալների ստուգում.<br>● Ընթացակարգի եզակի ID կոդի տրամադրում<br>● «Մրցույթի կառուցվածքի սահմանում»<br>● «Հարց ու պատասխաններ», «Հայտերի բացում ու ներկայացում», «Հայտերի գնահատում ու միավորների նշանակում», «Պայմանագրի շնորհում» դաշտերի արժեքի համապատասխանեցում «Առգիծ» արժեքի հետ<br>● «Սահմանել չափորոշիչներ» պատուհանի բոլոր դաշտերի պարտադիր լրացում |


PPCM համակարգ
Պետական մարմնի կողմից օգտագործվող ARMEPS համակարգ
Քարտուղար
Պայմաններ՝
1) PPCM-ում կարգավիճակ՝ առկախ
2) Գ5-10/Մ տվյալների ստացում, բացառությամբ Գ3-ի մուտքանունն, գնման քանակ, ընդհանուր գումար/մնացորդ դաշտերի, ավելացված Գ5-3/Մ—ի ԳՄԱ կոդը
Գ6-1/Մ տվյալներ
Ընթացակարգի հրապարակում
Համակարգ
Տվյալների մշակում
Գնման ընթացակարգի հանձնաժողովի ստեղծում
Աշխատակարգ ի սահմանում
Ընթացակարգի կառուցվածքի ստեղծում
Հրավերի հրապարակում
Գ6-2/Մ տվյալներ
«Առցիծ» ընտրանք
Գ6-1/Ե,Գ6-2/Ե տվյալներ

| | |
|---|---|
| Ստորաբաժանում | Գնումների քաղաքականության վարչություն |
| Անվանում | Գ7 – ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով գնման ընթացակարգին մասնակցության դեպքում պարզաբանման հարցումների տրամադրում |
| Նպատակ | ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով գնման ընթացակարգին մասնակցության դեպքում պարզաբանման հարցումների տրամադրում |
| Տիրույթ | ՀՀ ֆինանսների նախարարություն, ARMEPS  համակարգ |
| Դերակատարներ | Պատվիրատու մարմին, ՀՀ ֆինանսների նախարարության գնումների քաղաքականության վարչություն |
| Ընթացք 1 | 1. «Գնումների մասին» ՀՀ օրենքին համաձայն մասնակիցն իրավունք ունի մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը օրենքով սահմանված ժամկետներում գրավոր պահանջելու հրավերի պարզաբանում: Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից: Մրցույթը ARMEPS համակարգում հրապարակելուց հետո մրցույթի քարտուղարը «Պատասխանել պարզաբանման հարցմանը» առաջադրանքի միջոցով՝ «Պարզաբանումներ» բաժնում կարող է տեսնել մասնակիցների/տնտեսական օպերատորների կողմից ներկայացված պարզաբանումների հարցումները: Համակարգը տրամադրում է տնտեսական օպերատորների կողմից պահանջած բոլոր առգիծ պարզաբանումները: Յուրաքանչյուր պարզաբանման հարցում ունի 3 կարգավիճակ՝ պարզաբանման հարցումը մնացել է անպատասխան, պարզաբանման հարցմանը պատասխան է ուղարկվել, պարզաբանման հարցումը հրապարակվել է:<br>2. Քարտուղարը սեղմելով «Դիտել պարզաբանման հարցումը» սեղմակը կարող է տեսնել տնտեսական օպերատորների կողմից ներկայացրած հարցումը Համակարգը ցուցադրում է պարզաբանման հարցման բոլոր մանրամասները:<br>3. Պարզաբանման հարցումը խմբագրելու և դրան պատասխանելու համար քարտուղարն ընտրում է հարցումը՝ դնելով «V» ու այնուհետև սեղմում «Խմբագրել /Պատասխանել» սեղմակը: Քարտուղարը տրամադրում է տեքստային պարզաբանումներ, ըստ պահանջի նաև ֆայլի հավելված, այնուհետև սեղմում է «Պահպանել» սեղմակը փոփոխությունները պահպանելու համար, ինչից հետո հարցման կարգավիճակը փոխվում է «Պատասխանած»:<br>4. Պարզաբանում հրապարակելու համար քարտուղարը ընտրում է պարզաբանումն ու սեղմում է «Հրապարակել պարզաբանում» կոճակը, ինչից հետո պարզաբանման կարգավիճակը կփոխվի «Հրապարակված»-ի (կարմիր դրոշակի գույնը փոխվում է կանաչի): Միայն «Պատասխանած» կարգավիճակով պարզաբանումները կարող են հրապարակվել:<br>5. Պարզաբանման հարցումներն ու դրանց տրամադրված պատասխաններն ուղեկցվում են համակարգի կողմից առաքվող ավտոմատ ծանուցումներով: |
| Մուտքագրվող տվյալներ | **Գ7-1/Մ**<br><table><tr><th>Տվյալ</th><th>Նկարագրություն</th></tr><tr><td>Պատասխան պարզաբանում</td><td>Տեքստային դաշտ</td></tr><tr><td>Պատասխանի հավելված(կից ֆայլ)</td><td>Անհրաժեշտության դեպքում ֆայլի ներբեռնում</td></tr></table> |

| | |
|---|---|
| Ելքագրվող տվյալներ | **Գ7-1/Ե**<br>Գ7-1/Մ տվյալներ |
| Վալիդացիա | ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով գնման ընթացակարգին մասնակցության դեպքում պարզաբանման հարցումների տրամադրման փուլում իրականացվում է հետևյալ տվյալների ստուգում.<br>● *Աստղանիշներով դաշտերի պարտադիր լրացում<br>● «Պարզաբանումներ» դաշտի արժեքի լրացման սահմանափակում /առավելագույնը 50000 նիշ/ |




| | |
|---|---|
| Ստորաբաժանում | Գնումների քաղաքականության վարչություն |
| Անվանում | Գ8-Մասնակիցների գրանցում ARMEPS համակարգում |

| | |
|---|---|
| Նպատակ | Մասնակիցների գրանցում ARMEPS համակարգում |
| Տիրույթ | ՀՀ ֆինանսների նախարարություն, ARMEPS համակարգ |
| Դերակատարներ | Պատվիրատու մարմին, ՀՀ ֆինանսների նախարարության գնումների քաղաքականության վարչություն |
| Ընթացք 1 | 1. ARMEPS համակարգն օգտագործելու համար բոլոր տնտեսական օպերատորները (այսուհետև՝ SO) կարող են գրանցվել ինքնուրույն: Որպեսզի տնտեսական օպերատորը գրանցվի համակարգում, գործածողը պետք է համակարգի հիմնական էջում կատարի «Գրանցվել իբրև մատակարար» հրամանը: Գրանցման ընթացակարգի առաջին քայլում՝ կազմակերպության մանրամասներ բաժնում գործածողը գրանցում է իր կազմակերպության տվյալները՝ տրամադրելով անհրաժեշտ պարտադիր տեղեկատվությունը (կազմակերպության անունը, հարկ վճարողի հաշվառմանհամարը(ՀՎՀՀ), ՀՎՀՀ-ի թողարկողը (տարածքային հարկային տեսչության անունը, երկիրը): Ինչպես նաև, հետևյալ ոչ պարտադիր տեղեկատվությունը (ընկերության գրանցման համարը, հասցեն, փոստային կոդը, քաղաքը, Էլեկտրոնային փոստը, հեռախոսահամարը, ֆաքսը, կայքը, գործատուի գրանցման համարը, ընկերության գործունեությունը (առավելագույն նիշերի քանակ՝ 512):<br>2. Երկրորդ քայլին անցնելու համար գործածողը մուտքագրում է էկրանին ցուցադրվող լատինական տառերից և թվանիշերից բաղկացած կոդը: Եթե կոդը պարզ չէ, ապա «Վերաթարմացնել կոդը» սեղմակը ընտրելիս՝ կոդը թարմացվում է և էկրանին հայտվում է նոր կոդ: Վերջում գործածողը պետք է սեղմի «Վավերացնել և շարունակել» սեղմակը՝ գրանցման գործընթացը շարունակելու համար: Հաջորդ՝ ոչ պարտադիր քայլը ԳԸԲ (գնումների ընդհանրական բառարան՝ CPV կոդեր)-ի հետաքրքրության կոդերը կազմակերպության հետ կցելն է: Օգտվողը կարող է կցել ԳԸԲ կոդերը օգտագործելով փնտրման սեղմակը: Ջնջելու սեղմակն օգտագործվում է ընտրած ԳԸԲ կոդը ջնջելու համար: Այնուհետև գործածողը պետք է սեղմի «Հաջորդ» սեղմակը: «Ետ» սեղմակը գործածողին վերադարձնում է նախորդ քայլ:<br>3. Երրորդ քայլով գործածողը  գրանցում է տնտեսական օպերատորի ադմինինիստրատորին (SO Ադմին)՝ լրացնելով ադմինիստրատորի մասին պարտադիր մանրամասները (Անունը/Ազգանունը, գործածողի անունը, գաղտնաբառը, Էլեկտրոնային փոստը, երկիրը, համակարգի լեզուն): Ինչպես նաև, գործածողը կարող է տրամադրել ադմինիստրատորի մասին ոչ պարտադիր տեղեկատվությունը (հասցե, փոստային կոդ, քաղաք, հեռախոսահամար, բջջայինի համար, ֆաքս):<br>4. Գրանցման գործընթացը վերջացնելու համար օգտվողը պետք է սեղմի «Ավարտել» սեղմակը, որից հետո կցուցադրվի տնտեսական օպերատորի հաջող գրանցումը հաստատող ուղերձը (Մատակարարի գրանցումն հաջող էր): Համակարգը գործածողին կուղարկի համակարգի հասանելիության մանրամասները պարունակող էլեկտրոնային ուղերձ:<br>5. SO Ադմին օգտվողը առաջին անգամ պետք է մուտք գործի գրանցումից հետո՝ 30 օրվա ընթացքում և ակտիվացնի իր կայք-էջը: Այլապես, հաշիվը կհամարվի չօգտագործվող և համակարգի կողմից ինքնաբերաբար կջնջվի: Տնտեսական օպերատորի կողմից դեռևս չակտիվացված էջում հայտվում է ուղերձ՝ «Ձեր դիմումը ներկայումս վերամշակվում է ARMEPS գնումների խմբի կողմից: Դուք կստանաք էլ. նամակ, որը կտեղեկացնի Ձեր դիմումի հաստատման մասին»:<br>6. Տնտեսական օպերատորի կազմակերպության Ադմինիստրատորի դերով գործածողները իրենց կազմակերպության կառավարման համար կարող են խմբագրել կազմակերպության մանրամասները, դիտել տնտեսական օպերատորի կազմակերպությունում գրանցված գործածողներին, ավելացնել տնտեսական օպերատորի կազմակերպության նոր գործածողներ, խմբագրել գործածողների մանրամասները: SO-ի կառավարումը իրականացվում է «SO գործառույթներ» մենյուի «SO Տնօրինություն» հրամանի միջոցով: Ընտրելով «Խմբագրել կազմակերպությունը» սեղմակը՝ գործածողը կարող է խմբագրել կազմակերպության մանրամասները: Սեղմելով «Դիտել օգտվողներ» սեղմակը, կբացվի SO կազմակերպության բոլոր գրանցված գործածողների ցանկը: Դաշտում ցուցադրվում է յուրաքանչյուր գործածողի անունը, ազգանունը, դերը և |

| | |
|---|---|
| | հաշվի ընթացիկ կարգավիճակը (Ակտիվ, Ոչ ակտիվ, Ապաակտիվացված): Տնտեսական օպերատորի համար համակարգում հասանելի են գործածողի հետևյալ դերերը (1) Տնտեսական օպերատորի Ադմինիստրատոր (ՏՕ Ադմին) – այս տիպի դերով գործածողները լիազորված են տնօրինել գործածողներին ու թարմացնել իրենց կազմակերպության մանրամասները: 2) Տնտեսական օպերատորի գործածողներ (ՏՕ-ի Գործածողներ) - այս տիպի դերով գործածողները լիազորված չեն տնօրինել իրենց կազմակերպության և օգտվողների մանրամասները:<br>7. Կազմակերպության նոր գործածողներ ավելացնելու համար, անհրաժեշտ է սեղմել «Ավելացնել օգտվող» սեղմակը և տրամադրել ստորև բերված պարտադիր տեղեկությունները և սեղմել «Պահպանել» սեղմակը: Նոր գործածողի հաշիվը նախապես լինում է ապաակտիվացված: Համակարգը նոր գործածողին կուղարկի հաջող գրանցումն հաստատող էլեկտրոնային ուղերձ, որը կպարունակի գործարքի համապատասխան համարը՝ ակտիվացիայի կոդը: Հաշիվն ակտիվացնելու համար գործածողը՝ իր առաջին մուտքագրման ընթացքում, պետք է տրամադրի այդ համարը, որից հետո գործածողի հաշվի կարգավիճակը կակտիվանա: Գործածողի տվյալները խմբագրելու համար անհրաժեշտ է նշել համապատասխան գործածողին և սեղմել «Խմբագրել հաշիվը» սեղմակը, որից հետո համակարգը կցուցադրի տվյալ գործածողի տվյալները: Տվյալները խմբագրելուց հետո սեղմեք «Պահպանել» սեղմակը:<br>8. ՏՕ-ին կցված ԳԸԲ կոդերը խմբագրելու համար անհրաժեշտ է ՏՕ-ի կազմակերպության տնօրինության էջում սեղմել «Խմբագրել ԳԸԲ կոդերը» սեղմակը: Համակարգը կցուցադրի ԳԸԲ կոդերը, որոնցից կընտրվեն մասնակցին հետաքրքրող գնման առարկաները: Կցված ԳԸԲ կոդերի միջոցով համակարգը ավտոմատ ծանուցումներ կտրամադրի մասնակիցներին համակարգում հրապարակված ընթացակարգերի մասին: Համակարգում հրապարակված ընթացակարգերի մասին ավտոմատ ծանուցումներից բացի համակարգի խորացված որոնման ֆունկցիոնալությունը հնարավորություն է տալիս որոնել մրցույթների հրավերներ (ՄՀ-ներ), կազմակերպություններ և գործածողներ:<br>9. Մրցույթի «ՄՀ-ի փաստաթղթեր» բաժնից գործածողը բեռնում է պատվիրատուի կողմից հրապարակած բոլոր փաստաթղթերը (հրավեր, կից անհրաժեշտ ֆայլեր):<br>10. Մրցույթի «Պարզաբանումներ» բաժնում գործածողը լրացնում է պարզաբանման հարցումը՝ տրամադրելով հետևյալ տեղեկատվությունը (վերնագիրը, լեզուն, հարցման նկարագրությունը, հարցման ֆայլի հավելվածը (ոչ պարտադիր)), և «Ուղարկել հարցում» կոճակը սեղմելու դեպքում՝ հարցումն ուղարկվում է մրցույթի համակարգողին: Պարզաբանման պատասխանը կարող է հասանելի դառնալ միայն պատվիրատուի գնումների համակարգողի կողմից դրա հրատարակումից հետո: Պարզաբանումների հիմնական էջի «Պարզաբանումներ» կոճակը սեղմելու դեպքում՝ համակարգը արտաբերում է պարզաբանման բոլոր պատասխանների ցուցակը:<br>11. Հայտ ներկայացնելու համար «Ցուցադրել ՄՀ ցանկը» բաժնից գործածողը ընտրում է «Հայտեր» դաշտը, բացված պատուհանում «Բեռնել նախապատրաստման գործիքը» սեղմակի միջոցով, բեռնում է ընթացակարգի հայտի պատրաստման գործիքը (եթե այն համակարգչում նախապես տեղադրված չէ) և «Բեռնել մրցույթի կառուցվածքը» սեղմակի միջոցով բեռնում է մրցույթի կառուցվածքը: Համակարգչում բեռնվում է .xml ֆայլ, որը պետք է բացել նախապատրաստման գործիքով՝ սեղմելով «Բացել փաստաթուղթը» սեղմակը: Հրավերով նախատեսված անհրաժեշտ ֆայլերի կցագրումից, պահպանումից, վավերացումից և փաթեթավորումից հետո հայտի նախապատրաստման գործիքի միջոցով գեներացվում է հայտի փաթեթը (zip կոդավորված ֆայլ, որը պարտադիր պետք է գեներացված լինի հայտի պատրաստման գործիքի միջոցով, հակառակ դեպքում համակարգը սխալի մասին հաղորդագրություն է տալիս), ներբեռնվում է համակարգ և ապակոդավորվում՝ հայտերի բացման ժամկետի ավարտից հետո: Հայտի բարեհաջող ներբեռնման պահին համակարգը գեներացնում է մի առանձնահատուկ հայտի փաթեթի ստացականի հերթական համար և հայտի փաթեթի բեռնման մասին ավտոմատ ծանուցումով տեղեկացնում օգտվողին: |

<table>
<tr>
<td></td>
<td>
12. SO գործածողը պետք է հետևի իր էլեկտրոնային փոստին, գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան գործընթացներին հետևելու (փաստաթղթերի շտկում, բանակցային գործընթացների մասնակցություն) նպատակով:<br>
13. Հայտով ներկայացված փաստաթղթերի շտկված տարբերակները մասնակիցը պատվիրատուին տրամադրում է համակարգից դուրս՝ հրավերում նշված պատվիրատուի պաշտոնական էլեկտրոնային փոստի միջոցով:<br>
14. Ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում SO գործածողը «Պատասխանել պայմանագրի շնորհմանը» առաջադրանքի միջոցով պետք է ընդունի կամ մերժի պատվիրատուի կողմից իրեն ներկայացրած պայմանագիր կնքելու առաջարկը:<br>
15. PPCM-ում պայմանագրերի կառավարման գործընթացների ավարտից հետո SO-ի կայք-էջի «Իմ պայմանագրերը» բաժնում մասնակիցը գտնում է անհրաժեշտ պայմանագիրը և «Հանձնման-ընդունման արձանագրություններ» ենթաբաժնում իրականացնում է «Ավելացնել արձանագրություն» գործառույթը:<br>
16. Բացված անհրաժեշտ դաշտերը լրացնելուց հետո «Արձանագրության նմուշ» սեղմակի միջոցով գեներացվում է ընթացիկ արձանագրությունը, որը էլեկտրոնային եղանակով ստորագրելուց հետո «Ներկայացնել արձանագրությունը» սեղմակի միջոցով ներբեռնվում է PPCM համակարգ: «Մատակարարման ապրանքագիրը» սեղմակի միջոցով համակարգ է ներբեռնվում նաև հաշիվ ապրանքագիրը:«Եզրակացություն» և «Ընդունված արձանագրությունը» սեղմակների միջոցով համակարգ են ներբեռնվում են պատվիրատուի կողմից «Հանձնման-ընդունման արձանագրության» երկկողմանի ստորագրված ֆայլը և դրա ընդունման մասին դրական կամ բացասական եզրակացությունը:
</td>
</tr>
<tr>
<td>Մուտքագրվող տվյալներ</td>
<td>
Գ8-1/Մ
<table>
<tr><th>Տվյալ</th><th>Նկարագրություն</th></tr>
<tr><td>Մուտքանուն</td><td>Տեքստային դաշտ</td></tr>
<tr><td>Գաղտնաբառ(համակարգում գրանցված մասնակցի մուտքի տվյալներ)</td><td>Տեքստային դաշտ</td></tr>
</table>
Գ8-2/Մ
<table>
<tr><th>Տվյալ</th><th>Նկարագրություն</th></tr>
<tr><td>Գրանցվել իբրև մատակարար<br>*Կազմակերպության անունը</td><td>Գործառույթ<br>Տեքստային դաշտ</td></tr>
<tr><td>Ընկերության գրանցման համարը</td><td>Տեքստային դաշտ</td></tr>
<tr><td>*Հարկային կոդ</td><td>Տեքստային դաշտ</td></tr>
</table>
</td>
</tr>
</table>

| | |
|---|---|
| *Հարկային կոդի թողարկողը | Տեքստային դաշտ |
| *Հարկային կոդի թողարկող երկիրը | Բացվող ցանկ |
| Հասցեն | Տեքստային դաշտ |
| Փոստային կոդը | Տեքստային դաշտ |
| Երկիր* | Բացվող ցանկ |
| Քաղաքը | Տեքստային դաշտ |
| Էլեկտրոնային փոստը | Տեքստային դաշտ |
| Հեռախոսահամարը | Տեքստային դաշտ |
| Ֆաքսը | Տեքստային դաշտ |
| Կայքը | Տեքստային դաշտ |
| Գործատուի գրանցման համարը | Տեքստային դաշտ |
| Առանձնահատուկ h/h | Տեքստային դաշտ |
| *Խնդրեմ ներմուծել ներքևում ցուցադրված կոդը | Լատինատառ տառերից և թվերից բաղկացած ավտոմատ գեներացվող կոդ |
| Ընկերության գործունեությունը (առավելագույն նիշերի քանակ` 512) | Տեքստային դաշտ |
| Ճյուղային հղման համարը | Տեքստային դաշտ |

| | |
|---|---|
| | **Գ8-3/Մ** |

**Գ8-3/Մ**

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|
| Հետաքրքրվածության ԳԼԲ կոդեր | Փնտրվող դաշտ |

**Գ8-4/Մ**
Գ8-2/Մ դաշտեր
**Գ8-5/Մ**

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|
| *Կազմակերպություն | |
| *Հաշվի դեր | Ընտրվող դաշտ /SO ադմին օգտվող/ |
| *Անուն/ Ազգանուն | |
| *Մականուն | |
| *Գաղտնաբառ | |
| *Վերամուտքագրել գաղտնաբառը | Տեքստային դաշտ |

**Գ8-6/Մ**

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|
| Հայտի փաթեթի ներբեռնում | Zip կոդավորված ֆայլ |

Ելքագրվող տվյալներ

**Գ8-1/Ե**

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|
| Կազմակերպության անունը | Տեքստային դաշտ |
| Ընկերության գրանցման համարը | Տեքստային դաշտ |

| | |
|---|---|
| Հարկային կոդ | Տեքստային դաշտ |
| Հարկային կոդի թողարկողը | Տեքստային դաշտ |
| Հարկային կոդի թողարկող երկիրը | Տեքստային դաշտ |
| Հասցեն | Տեքստային դաշտ |
| Փոստային կոդը | Տեքստային դաշտ |
| Երկիր* | Բացվող ցանկ |
| Քաղաքը | Բացվող ցանկ |
| Էլեկտրոնային փոստը | Տեքստային դաշտ |
| Հեռախոսահամարը | Տեքստային դաշտ |
| Ֆաքսը | Տեքստային դաշտ |
| Կայքը | Տեքստային դաշտ |
| Գործատուի գրանցման համարը | Տեքստային դաշտ |
| Առանձնահատուկ հ/հ | Տեքստային դաշտ |
| Ընկերության | Տեքստային դաշտ |
| Կարգավիճակ | Տեղեկատու /ակտիվ, ոչ ակտիվ, ապաակտիվացված/ |

**Գ8-2/Ե**

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|
| Գրանցումն ակտիվացնելու գործարքային թիվ<br>Հայտի փաթեթի  ներբեռնում | Ավտոմատ ծանուցում<br>Հայտի փաթեթ(Zip ֆայլ) |
| Հայտի ներբեռնման մասին ավտոմատ ծանուցում | Ավտոմատ ծանուցում |

| | |
|---|---|
| Վալիդացիա | ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով գնման ընթացակարգին մասնակցության դեպքում պարզաբանման հարցումների տրամադրման փուլում իրականացվում է հետևյալ տվյալների ստուգում.<br>● *Աստղանիշներով դաշտերի լրացումը պարտադիր է<br>● «Ընկերության գործունեությունը» դաշտի արժեքի լրացման սահմանափակում /առավելագույն նիշերի քանակ՝ 512/<br>● «Լեզու» դաշտի արժեքի ստուգում «Հայերեն», «Ռուսերեն», «Անգլերեն» դաշտի արժեքի հետ<br>● Հայտի փաթեթի վավերացում |







ARMEPS համակարգ
Տնտեսական օպերատոր
Համակարգ
Մրցույթի մասնակցությա ն հայտի ներկայացում
Արդյունքը՝ հայտի փաթեթի գեներացում
Ֆայլերի կցագրում, պահպանում, փաթեթավորու մ
Անհրաժեշտ գործիքակազմի ներբեռնում
Հայտի .zip փաթեթի ներբեռնում համակարգ
հայտի փաթեթը չի գեներացվել հայտի պատրաստման գործիքի միջոցով, կամ վերոգրյալ ID-ները չեն համապատասխանում
Համակարգի կողմից մերժում
մուտքագրված փաթեթի ստուգում
Հայտի փաթեթի բեռնում
յտի փաթեթի հերթական ստացականի ստացում

| | |
|---|---|
| Ստորաբաժանում | Գնումների քաղաքականության վարչություն |
| Անվանում | Գ9– PPCM համակարգում թղթային տարբերակով իրականացվող գնման ընթացակարգեր |
| Նպատակ | Պատվիրատուի կողմից PPCM համակարգում թղթային տարբերակով իրականացվող գնման ընթացակարգեր |
| Տիրույթ | Պատվիրատու, ՀՀ ֆինանսների նախարարություն, PPCM |
| Դերակատարներ | Պատվիրատուի ադմինիստրատոր (ՊԱ), պատասխանատու ստորաբաժանման (ՊՍ) ղեկավար, ՊՍ աշխատակից, գնումների համակարգող, գնումները համակարգողի ղեկավար |
| Ընթացք 1 | Գնումը կարող է կատարվել մեկ անձից, եթե՝ 1) գնման ենթակա ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, որը պայմանավորված է նրա հեղինակային և հարակից իրավունքներով, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությամբ. 2) արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հետևանքով ծագել է գնման անհետաձգելի պահանջ և, արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակից ելնելով, գնման այլ ձևերի կիրառումը ժամկետի առումով անհնար է, պայմանով, որ նման պահանջը հնարավոր չէր օբյեկտիվորեն կանխատեսել (Նշված կետով ներկայացվածը համակարգում Յրատապ մեկ անձ է, որը կարող է լինել թղթային և էլեկտրոնային). 3) պատվիրատուն, որևէ անձից կատարելով ապրանքների գնում, որոշում է սկզբնական պայմանագրում չներառված, սակայն օբյեկտիվորեն չնախատեսված հանգամանքներից ելնելով՝ սկզբնական պայմանագրի կատարման համար անհրաժեշտ դարձած ապրանքների լրացուցիչ գնում կատարել նույն անձից, պայմանով, որ լրացուցիչ ապրանքների պայմանագիրը հնարավոր չէ տեխնիկապես կամ տնտեսապես առանձնացնել սկզբնական պայմանագրից՝ առանց պատվիրատուի համար նշանակալի դժվարություն ստեղծելու, և դրա գինը չգերազանցի սկզբնական պայմանագրի ընդհանուր գնի 10 տոկոսը: Ընդ որում, միևնույն անձից սույն կետի կիրառմամբ լրացուցիչ գնում կարող է կատարվել մեկ անգամ, իսկ լրացուցիչ ապրանքների գինը չի կարող սահմանվել ավելի, քան նախատեսված է պայմանագրով 4) գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորը. 5) գնումն իրականացվում է ՀՀ տարածքից դուրս:<br>1. Գնման ընթացակարգի նախապատրաստում PPCM համակարգում (տես՝ Գ-5 բիզնես գործընթաց) իրականացնելուց հետո բացառությամբ՝ Գ-5 բիզնես գործընթացի 8-րդ կետով նախատեսված «Էլեկտրոնային մրցույթների դեպքում մրցույթը տեղափոխվում է ARMEPS համակարգ» մասի, թղթային տարբերակով իրականացվող գնման ընթացակարգերը ARMEPS համակարգ չեն տեղափոխվում, PPCM համակարգում «Ստեղծել մրցույթ» կոճակը սեղմելուց հետո «Մրցույթներ» բաժնում տվյալ մրցույթի կարգավիճակը «Սևագիր» տարբերակից փոխվում է «Շնորհված»-ի:<br>2. Գնումների համակարգողը PPCM համակարգում ձեռքով լրացնում է հաշվետվության «Մրցույթի տվյալներ» (Լրացնում է հայտերի վերջնաժամկետը, հրավեր ուղարկելու կամ հրապարակելու ամսաթիվը, հրավերում կատարված փոփոխությունների ամսաթիվը, հրավերի վերաբերյալ պարզաբանումների ամսաթվերը, անգործության ժամկետ, Գնման ընթացակարգի ընտրության հիմնավորումը, մասնակիցների ներգրավման նպատակով «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն իրականացված հրապարակումների մասին տեղեկությունները, գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ հայտնաբերվելու դեպքում դրանց և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողությունների համառոտ նկարագիրը, գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքները և դրանց վերաբերյալ կայացված որոշումները և այլ անհրաժեշտ տեղեկություններ դաշտերը), «Չափաբաժիններ» (Յուրաքանչյուր չափաբաժնի մասով լրացնում է չափաբաժնի կարգավիճակը, գնման առարկայի համառոտ նկարագրությունը(տեխնիկական բնութագիր), գնման առարկայի պայմանագրով նախատեսված համառոտ |

| | |
|---|---|
| | նկարագրությունը (տեխնիկական բնութագիր) և գնման առարկայի նկարագիրը), «Մասնակիցներ» (Ավելացնում է գործընթացի մասնակից բոլոր մասնակիցներին, իսկ եթե համակարգում չկան, գրանցում է նոր մասնակից՝ լրացնելով մասնակցի անվանում, տիպ (Իրավաբանական անձ, ֆիզիկական անձ կամ արտասահմանյան), էլեկտրոնային փոստ և երկիր (Հայաստան, Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան կամ այլ երկրներ) դաշտերը) և «Հայտեր» (Ըստ չափաբաժինների յուրաքանչյուր մասնակիցների մասով ստեղծում է նոր հայտ՝ ընտրելով չափաբաժին և մասնակից դաշտերը ու լրացնելով գինն առանց ԱԱՀ առկա ֆինանսական միջոցներով, գինն առանց ԱԱՀ ընդհանուր, ԱԱՀ-ն առկա ֆինանսական միջոցներով, ԱԱՀ-ն ընդհանուր, այլ տեղեկություններ, ապրանքի ծագման երկիրը (իրավերով չի պահանջվել, Հայաստան, Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան կամ այլ երկրներ) բաժինները, որից հետո մուտք գործելով «Պայմանագրեր» բաժինը լրացնում է կնքված պայմանագրի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը (Լրացնում է Ծածկագիր, կնքման ամսաթիվ, գնման առարկա, շնորհման գումար, ընդհանուր գումար, կանխավճար, գնման ձև (ընթացակարգ), տույժ կամ տուգանք (եթե առկա է), պայմանագրի կատարման վերջնաժամկետ, հաղթող մասնակցի որոշման ա/թ, կնքման ծանուցման ա/թ, պայմանագիրի մուտքագրման ա/թ, պատվիրատուի կողմից ստորագրման ա/թ, բանկային հաշիվ դաշտերը, ընտրելով չափաբաժինները՝ լրացնում է յուրաքանչյուր չափաբաժնի քանակ և միավորի գին դաշտերը), կցում պայմանագրի պատճեն և սեղմում պահպանել կոճակը: Պայմանագրի տվյալները պահպանելուց հետո լրացնում է վճարման ժամանակացույցը:<br>3. ԳՀ-ն տվյալները լրացնելուց և պահպանելուց հետո հաշվետվությունը և պայմանագիրը (պայմանագրերը) ուղարկում է հաստատման ԳՀ հաստատողին և հետագայում ՊԱ-ին: ՊԱ-ի կողմից հաստատվելուց հետո, բացառությամբ Հանրային իշխանության մարմինների պայմանագրերի, մյուս պատվիրատուների պայմանագրերը և բոլոր պատվիրատուների մրցույթների հաշվետվությունները տեսանելի են լինում PPCM համակարգում և՛ օգտվողների, և՛ հրապարակային էջերում: Պետական պատվիրատուների դեպքում իրականացվում է պայմանագրի տվյալների ավտոմատ ստուգում LS Finance համակարգի հետ: Որևէ տվյալի անհամապատասխանության դեպքում համակարգն ավտոմատ մերժում է պայմանագիրը՝ ուղարկելով սխալի հաղորդագրություն, որը տեսանելի է ԳՀ-ի, ԳՀ հաստատողի և ՊԱ-ի էջերի «Պայմանագրեր» բաժնում: Սխալների բացակայության դեպքում պայմանագիրը հաստատվում է երկու համակարգերում: Բացառությամբ թղթային ԳՀ, Թղթային բաց մրցույթ, թղթային Հրատապ բաց մրցույթ, թղթային Էլեկտրոնային աճուրդ գնման ընթացակարգերի, մյուս ընթացակարգերի մասով գնումների մասին օրենսդրություն էլեկտրոնային տարբերակով հանձնման/ընդունման չի պահանջում: Իսկ վերոհիշյալ ընթացակարգերի դեպքում, եթե պատվիրատուն ընտրել է ARMEPS համակարգում գրանցված մասնակցին, հանձնման/ընդունման գործընթացը իրականացվում է ARMEPS/PPCM համակարգի միջոցով:<br>*PPCM համակարգում թղթային տարբերակով մուտքագրվող մրցույթներն են՝<br>1. Մեկ անձ<br>2. ԳՉԾ<br>3. Երկփուլ մրցույթ<br>4. թղթային բաց մրցույթ<br>5. թղթային հրատապ բաց մրցույթ<br>6. թղթային էլեկտրոնային աճուրդ<br>7. թղթային գնանշման հարցում<br>8. թղթային հրատապ մեկ անձ |
| Մուտքագրվող տվյալներ | **Գ9-1/Մ**<br>Գ5-1/Մ, Գ5-2/Մ, Գ5-3/Մ, Գ5-4/Մ, Գ5-5/Մ, Գ5-6/Մ, Գ5-7/Մ, Գ5-8/Մ, Գ5-9/Մ, Գ5-10/Մ տվյալներ<br>**Գ9-2/Մ**<br>**Մրցույթի տվյալներ** |

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|
| Հայտերի վերջնաժամկետ | տեքստային դաշտ |
| Հրավեր ուղարկելու կամ հրապարակելու ամսաթիվ | տեքստային դաշտ |
| Հրավերում կատարված փոփոխությունների ամսաթիվ | տեքստային դաշտ |
| Հրավերի վերաբերյալ պարզաբանումների ամսաթիվ | տեքստային դաշտ |
| Անգործության ժամկետ | տեքստային դաշտ |
| Գնման ընթացակարգի ընտրության հիմնավորում | տեքստային դաշտ (պարտադիր մուտքագրման դաշտ) |
| Մասնակիցների ներգրավման նպատակով հրապարակումների մասին տեղեկություններ | տեքստային դաշտ (պարտադիր մուտքագրման դաշտ) |
| Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ հայտնաբերվելու դեպքում դրանց և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողությունների համառոտ նկարագիր | տեքստային դաշտ (պարտադիր մուտքագրման դաշտ) |
| Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքները և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ<br><br>Այլ անհրաժեշտ տեղեկություններ տեքստային դաշտ | տեքստային դաշտ (պարտադիր մուտքագրման դաշտ) |

**Չափաբաժիններ**

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|
| Չափաբաժնի կարգավիճակը | |
| Գնման առարկայի համառոտ նկարագրությունը | տեխնիկական բնութագիր |

| | |
|---|---|
| Գնման առարկայի պայմանագրով նախատեսված համառոտ նկարագրությունը | տեխնիկական բնութագիր |
| Գնման առարկայի նկարագիրը | |

**Մասնակիցներ**

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|
| Մասնակիցներ | որոնել ըստ անվանման կամ ըստ ՀՎՀՀ/Անձնագիր-ի |
| Նոր մասնակցի գրանցում | |
| Տիպ | Իրավաբանական անձ, ֆիզիկական անձ կամ արտասահմանյան |
| Էլեկտրոնային փոստ | |
| Երկիր | Հայաստան, Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան կամ այլ երկրներ |

**Հայտեր**

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|
| Չափաբաժին | |
| Գինն առանց ԱԱՀ առկա ֆինանսական միջոցներով | պարտադիր մուտքագրման դաշտ |
| Գինն առանց ԱԱՀ ընդհանուր | պարտադիր մուտքագրման դաշտ |
| ԱԱՀ-ն առկա ֆինանսական միջոցներով | պարտադիր մուտքագրման դաշտ |
| ԱԱՀ-ն ընդհանուր | պարտադիր մուտքագրման դաշտ |

| | |
|---|---|
| Այլ տեղեկություններ | |
| Ապրանքի ծագման երկիրը | |
| Կարգավիճակ (եթե մերժված է V) | պարտադիրմուտքագրման դաշտ (Հրավերով չի պահանջվել, Հայաստան, Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան կամ այլ երկրներ) |

**Պայմանագրեր**

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|
| Ծածկագիր | տեքստային պարտադիր մուտքագրման դաշտ |
| Կնքման ամսաթիվ | տեքստային պարտադիր մուտքագրման դաշտ |
| Գնման առարկա | տեքստային պարտադիր մուտքագրման դաշտ |
| Շնորհման գումար | տեքստային պարտադիր մուտքագրման դաշտ |
| Ընդհանուր գումար | տեքստային պարտադիր մուտքագրման դաշտ |
| Կանխավճար | տեքստային պարտադիր մուտքագրման դաշտ |
| Գնման ձև (ընթացակարգ) | տեքստային պարտադիր մուտքագրման դաշտ |
| Տույժ կամ տուգանք (եթե առկա է) | տեքստային պարտադիր մուտքագրման դաշտ |
| Պայմանագրի կատարման վերջնաժամկեր | տեքստային պարտադիր մուտքագրման դաշտ |
| Հաղթող մասնակցի որոշման ա/թ | տեքստային պարտադիր մուտքագրման դաշտ |
| Կնքման ծանուցման ա/թ | տեքստային պարտադիր մուտքագրման դաշտ |
| Պայմանագիրի մուտքագրման ա/թ | տեքստային պարտադիր մուտքագրման դաշտ |
| Պատվիրատուի կողմից ստորագրման ա/թ | տեքստային պարտադիր մուտքագրման դաշտ |
| Բանկային հաշիվ դաշտերը | տեքստային պարտադիր մուտքագրման դաշտ |
| Չափաբաժնի քանակ | տեքստային պարտադիր մուտքագրման դաշտ |

<table>
<tr><td></td><td><table><tr><td>Չափաբաժնի միավորի գին դաշտերը</td><td>տեքստային պարտադիր մուտքագրման դաշտ</td></tr></table></td></tr>
<tr><td>Ելքագրվող տվյալներ</td><td>Գ9-1/Ե<br>Գ-5 բիզնես գործընթացի տվյալներ, բացառությամբ՝ 8-րդ կետով նախատեսված «Էլեկտրոնային մրցույթների դեպքում մրցույթը տեղափոխվում է ARMEPS համակարգ», Գ9-2/Մ տվյալներ</td></tr>
<tr><td>Վալիդացիա</td><td>PPCM համակարգում թղթային տարբերակով իրականացվող գնման ընթացակարգի նախապատրաստման փուլում իրականացվում է հետևյալ տվյալների ստուգում.<br>● Գ-5 բիզնես գործընթաց (բացառությամբ՝ «ԱՐՄԵՓՍ մուտքանուն» դաշտի արժեքի ստուգում «ԱՐՄԵՓՍ» համակարգում առկա մուտքանվան արժեքի հետ» կետի)</td></tr>
</table>


PPCM
Գնումների համակարգող
1) Ընթացակարգի նախապատրաստման ավարտ, բացառությամբ՝ Գ-5 բիզնես գործընթացի 8-րդ կետով նախատեսված մասի
2)Կարգավիճակը՝ «Շնորհված»
Տվյալների մուտքագրում
Համակարգ
Հաշվետվության լրացում
Պայմանագրի տվյալների լրացում
Պայման՝ Հաստատում ԳՀ հաստատողի և ՊԱ-ի կողմից
Ուղարկում հաստատման
Ուղարկում հաստատման
Այլ մարմին
ապարակում PPCM, օգտվողների և հրապ. էջերում
Պետական մարմին
Տվյալների համեմատություն LS Fianance-ի հետ
Պայման՝ ԳՀ հաստատողի և ՊԱ-ի հաստատում;
Հրապարակային էջի <Մանրամասն հաշվետվություններ>-ի բաժիններում արտացոլում
LS Finance
Պետական կառավարման մարմինների դեպքում տվյալների համեմատություն
Տվյալների համեմատում, ստուգում
1)Պ.գրի արտացոլում LS Finance համակարգում
2) Պ.գրի արտացոլում PPCM-ի օգտվողների և հրապարակային էջերում
ոչ
Պայմանագրի հաստատում
սխալի առկայություն
այո
Պայմանագրի ավտոմատ մերժում, հաղորդագրության ուղարկում
համակարգն ավտոմատ մերժում է պայմանագիրը՝ ուղարկելով սխալի հաղորդագրություն, որը տեսանելի է ԳՀ-ի, ԳՀ հաստատողի և ՊԱ-ի էջերի «Պայմանագրեր» բաժնում

| | |
|---|---|
| Ստորաբաժանում | Գնումների քաղաքականության վարչություն |
| Անվանում | Գ10– ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով ստացված հայտերի բացում, շտկում, գնահատում |
| Նպատակ | Պատվիրատուի կողմից ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով ստացված հայտերի բացում, շտկում, գնահատում |
| Տիրույթ | Պատվիրատու, ՀՀ ֆինանսների նախարարություն, ARMEPS էլեկտրոնային համակարգ (այսուհետ՝ ARMEPS) |
| Դերակատարներ | Պատվիրատուի քարտուղար, Տնտեսական օպերատորներ |
| Ընթացք 1 | 1. Հայտերի փաթեթների տրամադրման վերջնաժամկետից հետո իրականացվում է ստացված հայտերի բացում: Հայտերի փաստաթղթերի բացումը պահանջում է 2 գնման պատասխանատուների ներգրավվածություն, ովքեր կցված են տվյալ ՄՀ-ին իբրև «Բացման Աշխատակազմ» (ԳՊ/ԲԱ): Համակարգը օգտվողներին տրամադրում է բոլոր ներկայացված հայտերի ցուցակը: Յուրաքանչյուր ներկայացված հայտի համար, համակարգը ներկայացնում է ստուգումներ (Հակավիրուսային ստուգումների արդյունքները - համակարգը ստուգում է, թե արդյոք ներկայացված հայտերը վարակված են վիրուսով: Թ/Ս Համընկնման արդյունքները - համակարգը ստուգում է, թե արդյոք բեռնված թվային ստորագրությունը համընկնում է բեռնված հայտի փաթեթին: Ժամանակին ստացված Տ/Փ - համակարգը ստուգում է, թե արդյոք հայտը ստացվել է ժամանակին): Բոլոր ստուգումներն իրականացնելուց հետո, համակարգը ավտոմատ ցուցադրում է «անցողիկ», «ոչ անցողիկ» և «ժամանակային նիշի ծախողում» նշանները:<br>2. Հանձնաժողովի անդամները և քարտուղարը ստորագրում են շահերի բախման բացակայության մասին հայտարարություն, որը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը հրապարակվում է gnumner.am պաշտոնական կայքում:<br>3. Առաջին ԳՊ/ԲԱ օգտվողը նշագրում է համակարգի կողմից «անցողիկ» որակված հայտերի ցուցակը և «Ներկայացնել հայտերի ցուցակը» գործառույթի միջոցով բացման ենթակա հայտերի ցուցակը փոխանցում է երկրորդ ԳՊ/ԲԱ օգտվողին, որը հաստատում կամ մերժում է առաջին բացողի կողմից ներկայացրած հայտերի ցուցակը:<br>4. Երկրորդ ԳՊ/ԲԱ-ի օգտվողի կողմից «Հաստատել հայտերի ցուցակը» գործառույթի արդյունքում բոլոր ընտրված հայտերը կբացվեն, իսկ «Մերժել հայտերի ցուցակը» գործառույթի արդյունքում՝ առաջին ԳՊ/ԲԱ-ի օգտվողը կրկին կստանա «Բացել հայտերը» առաջադրանքը, որի կողմից երկրորդ բացողի հաստատմանը կներկայացվի բացման ենթակա հայտերի մեկ այլ ցուցակ: Այս գործընթացը կարող է կրկնվել մինչև երկու կցված օգտվողներն էլ համաձայնության են գալիս բացվող հայտերի մասով: Երբ երկու ԳՊ /ԲԱ օգտվողներն էլ հաստատում են հայտերի ցուցակը, համակարգը ցուցադրում է բացված հայտերի ցուցակը: Օգտվողը կարող է ստանալ նաև բացման հաշվետվություն «Մանրամասներ» բաժնում ընտրելով «Բեռնել» սեղմակը:<br>5. Հայտերի հաջող բացումից հետո ընթացակարգի հանձնաժողովի գնահատող անդամները իրենց օգտվողի հիմնական էջում ստանում են «Գնահատել հայտերը» առաջադրանքը, որտեղ տեսանելի են հայտերի բոլոր բաժինները՝ Պիտանելիության չափորոշիչ, Տեխնիկական ու Ֆինանսական ծրարներ: Բաժիններից յուրաքանչյուրում ներառված տվյալները դիտելու համար, օգտվողը պետք է բացազատի բաժինը սեղմելով դրա անվան վրա: Համակարգը ցուցադրում է գնահատման ընթացակարգին վերաբերող մանրամասն տեղեկատվությունը և ներկայացնում է հայտերը, անհրաժեշտ տեղեկատվության հետ (հայտի անունը, հայտի փաթեթի ստացականի h/h, ստուգում, թե արդյոք հայտի փաթեթը համապատասխանում է պահանջվող կառուցվածքին, ստուգում, թե արդյոք հայտի փաթեթը ստացված է ժամանակին, հայտի գնահատման կարգավիճակը): Հայտերի գնահատման կարգավիճակը կարող է լինել՝ |

«Չգնահատված», երբ հայտը դեռևս չի գնահատվել օգտվողի կողմից, «Սևագիր», երբ հայտը գնահատված ու պահպանված է իբրև սևագիր(գնահատման արդյունքը ենթակա է փոփոխության) և «Վերջնական», երբ հայտը գնահատված ու պահպանված է իբրև վերջնական (գնահատման արդյունքը ենթակա չէ փոփոխության):

6. Պիտանելիության և տեխնիկական չափորոշիչների գնահատումն իրականացնելու համար օգտվողը գնահատման էջում ներբեռնում է հայտատու մասնակցի կողմից հայտի փաթեթով ներկայացրած մրցույթի կառուցվածքով սահմանած համապատասխան չափորոշիչներում կցագրած փաստաթղթերի ֆայլերը և գնահատում դրանք: Էջը պարունակում է համակարգի կողմից ավտոմատ և պատվիրատուի կողմից ոչ ավտոմատ գնահատման անհրաժեշտ սյունակները (Գ10-4/Մ տվյալներ): ԳՊ/ԳԱ օգտվողը հայտով ներկայացրած ֆայլերը գնահատում է «Շեմ» դաշտի միջոցով՝ գնահատումը համարվում է դրական, եթե գնահատման արժեքը ավելի մեծ է քան սահմանված շեմը: Հայտի ընդհանուր կարգավիճակը կհամարվի չանցած, եթե գոյություն ունի գոնե մեկ չափորոշիչ, որ չի անցել շեմը: Հայտի ֆինանսական ծրարի գնահատումն իրականացնելու համար օգտվողը կարգավիճակի սյունակում ընտրում է «Չգնահատված» սեղմակը: Համակարգը յուրաքանչյուր ֆինանսական չափորոշիչի համար ցուցադրում է տեղեկատվություն (ՏՕ ներկա արժեքը, ԳՊ/ԳԱ-ի արժեքը, ԳՊ/ԳԱ ներկա արժեքը): ԳՊ/ԳԱ օգտվողը անհրաժեշտության դեպքում կարող է ուղղել Տնտեսական օպերատորի կողմից տրամադրված գնային առաջարկի արժեքը և «Պահել իբրև վերջնական» գործառույթով ավարտել ֆինանսական ծրարի գնահատումը:
7. ARMEPS համակարգի «Գնահատման էջում» ցուցադրվում է գնահատման գործընթացի ֆունկցիոնալության համար բոլոր անհրաժեշտ սեղմակները (ետ, պահել իբրև սևագիր, պահել իբր վերջնական):
8. Հայտերի գնահատման փուլում հայտով ներկայացված փաստաթղթերի հնարավոր շտկման պահանջ ներկայացնելը կամ մասնակիցներին՝ գների նվազեցման նպատակով ՀՀ գնումների մասին օրենքով սահմանված ժամկետներում բանակցությունների հրավիրելը իրականացվում է ԳՊ/ՄՀՄ օգտվողի (ընթացակարգի քարտուղար) կողմից մասնակցին համակարգից «Ոչ ավտոմատ ծանուցում» առաքելու միջոցով:
9. Գնահատող հանձնաժողովի նախագահը՝ համակարգում կցված որպես ԳՊ/ԳԱՊ օգտվող, պետք է հայտերը իր էջից գնահատի վերոգրյալ կետերին համապատասխան, այնուհետև հաստատի բոլոր ԳՊ /ԳԱ օգտվողների իրականացրած գնահատումները: Այս գործողությունն իրականացնելու համար ԳՊ/ԳԱՊ օգտվողը պետք է «Գնահատման ընդհանուր կարգավիճակ» սյունակում ստուգի բոլոր գնահատող ԳՊ/ԳԱ օգտվողների կեղմից հայտերի գնահատման արդյունքները, դրանք հաստատելու կամ վերագնահատում պահանջելու համար: Համակարգը ցուցադրում է մի էջ բոլոր կցված ԳՊ/ԳԱ օգտվողների գնահատման բոլոր մանրամասներով՝ վերացնել գնահատումը (ԳՊ/ԳԱ օգտվողների գնահատումները ստանում են «սևագիր» կարգավիճակ՝ գնահատումներում փոփոխություններ անելու համար), վերագնահատել հայտերը (գնահատումները ստանում են «չգնահատված» կարգավիճակ՝ նոր գնահատումներ անելու համար) կամ վերջացնել գնահատումը (գնահատումները ստանում են «ավարտուն» կարգավիճակ՝ վերջնական գնահատման արդյունքներով):
10. ԳՊ/ԳԱՊ օգտվողը ներկայացված հայտերի վերջնական գնահատումից հետո ընտրում է «Գեներացնել գնահատման հաշվետվություն» կոճակը գնահատման հաշվետվություն ստեղծելու համար: Համակարգը գեներացնում է Excel ֆայլ, որը պարունակում է գնահատման ընթացակարգի բոլոր մանրամասները: Տվյալ ՄՀ-ի հետ կցված բոլոր գնահատողները (ԳՊ/ԳԱ ու ԳՊ/ԳԱՊ) պետք է հաստատեն գնահատման հաշվետվությունը, որպեսզի գնահատման արդյունքների հաշվետվությունը տրամադրվի պատվիրատուի ղեկավարին գնահատումները հաստատելու կամ վերագնահատում պահանջելու համար:
11. Ներկայացված հայտերի գնահատման վերջնականացումից հետո բոլոր ՏՕ-ները ավտոմատ կդասակարգվեն ըստ հայտով ներկայացրած գնառաջարկների աճման կարգի: Ավտոմատ դասակարգված հայտերը պարունակում են

տեղեկատվություն են իրենց Տ/Փ ստացականի հ/հ-ի, իրենց գնառաջարկների և գնահատման արդյունքների (անցած, չանցած) մասին:

12. Տնտեսական օպերատորի դասակարգման վերջնականացումից հետո ԳՊ/ՄՅՄ օգտվողը (ընթացակարգի քարտուղար) պետք է հաստատի ու «Յրապարակել գնահատման արդյունքները» առաջադրանքի միջոցով բոլոր հայտատու SO-ներին տրամադրի հայտերի գնահատման արդյունքներն ու պայմանագիր կնքելու մասին որոշումը՝ պահպանելով օրենքով նախատեսված անգործության շրջանը:
13. Անգործության ավարտից հետո, եթե կան բողոքներ՝ «Մերժել, վերագնահատել հայտերը» առաջադրանքի միջոցով կրկին իրականացվում են «Բացել հայտերը» և «Գնահատել հայտերը» առաջադրանքները, իսկ եթե բողոքներ չկան՝ ԳՊ/ՄՅՄ օգտվողի կողմից «Պայմանագրի շնորհում» առաջադրանքի կատարումով հաղթող մասնակիցներին շնորհվում են կնքվելիք պայմանագրի գումարները: Օգտվողը կարող է պայմանագիր շնորհել մեկից ավելի Տնտեսական օպերատորների: Լրացուցիչ Տնտեսական օպերատորներ ավելացնելու համար օգտվողը սեղմում է «+» սեղմակը («-» սեղմակն օգտագործվում է շնորհման ցուցակից տնտեսական օպերատորներին հեռացնելու համար): Լրացուցիչ տնտեսական օպերատորների ընտրության համար կհայտնվի նոր տող:
14. Մասնակիցը իր կայք-էջում ստանում է «Պատասխանել պայմանագրի շնորհմանը» առաջադրանքը, որով ընդունում կամ մերժում է իրեն շնորհված պայմանագիրը:
15. Պատվիրատուի ԳՊ/ՄՅՄ օգտվողը «Յրապարակել շնորհման ծանուցումը» առաջադրանքից հետո իրականացնում է «Արտահանել մրցույթը» առաջադրանքը, ինչի արդյունքում պայմանագրի շնորհման արդյունքները փոխանցվում են PPCM համակարգ, որտեղ սկսվում է պայմանագրի կառավարման գործառույթը:
16. gnumner.am կայքում ՅՅ գնումների մասին օրենքով նախատեսված ընթացակարգի շրջանակում պարտադիր հրապարակվող հայտարարություններից ավտոմատ հրապարակվում է միայն ընթացակարգի հրավերը, մնացած հրապարակումները իրականացվում են ոչ ավտոմատ եղանակով՝ ընթացակարգի քարտուղարի կողմից:

Մուտքագրվող տվյալներ

**Գ10-1/Մ**

| **Տվյալ** | **Նկարագրություն** |
|---|---|
| Առաջադրանքների ցուցակ | |
| Ընթացակարգի վերնագիր | «Բացել հայտերը» առաջադրանք |

**Գ10-2/Մ**

| **Տվյալ** | **Նկարագրություն** |
|---|---|
| Յայտերի ներկայացման վերջնաժամկետը | ամսաթիվ դաշտ |
| Ստացված հայտերի քանակ | թիվ դաշտ |
| ԳՊ/ԲԱ-ի օգտվողները հաստատեցին հայտերի ներկայացված ցուցակը | բացողների թիվը |
| Յայտերի ներկայացված ցուցակը հաստատեցին | բացող անդամի անուն/ազգանուն դաշտ |

| | |
|---|---|
| Հայտերի ներկայացված ցուցակի ընթացիկ հաստատումը | բացող անդամների անուն, ազգանուններըդաշտ |
| Հայտերի ցուցակ | |
| SO-ի անունը | Հայտատու կազմակերպության անվանումը |
| Հայտի փաթեթի ստացականի հ/հ | Ստացականի համար |
| Ստորաբաժանում | Գնումների քաղաքականության վարչություն |
| Անվանում | Գ15- PPCM համակարգի հրապարակային էջում տվյալների նկարագրություն |
| Նպատակ | PPCM համակարգի հրապարակային էջում տվյալների նկարագրություն |
| Տիրույթ | Պատվիրատու, տնտեսական օպերատոր (SO), այլ անձիք |
| Դերակատարներ | Պատվիրատուի օգտվողներ, տնտեսական օպերատոր, PPCM համակարգ /https://armeps.am/ppcm/public/reports/ |
| Ընթացք 1 | 1. PPCM համակարգը հնարավորություն է ընձեռում դիտել ամփոփ (գրաֆիկական) հաշվետվություններ, կատարել տվյալների որոնում և բեռնում ըստ գնումների պլանի կամ կնքված պայմանագրերի, ինչպես նաև ձևավորել մանրամասն հաշվետվություններ՝ համակարգում առկա ձևանմուշների հիման վրա: Մասնավորապես.<br>• **Ամփոփ հաշվետվությունների դիտում** - գրաֆիկական հաշվետվությունները հասանելի են յուրաքանչյուրի համար և ամեն 10 րոպե մեկ ավտոմատ թարմացվում են: Ամփոփ հաշվետվությունները դիտելու համար անհրաժեշտ է մուտք գործել https://armeps.am/ppcm/public/reports կայք և գլխավոր էջում ծանոթանալ առկա գրաֆիկական հաշվետվություններին: Տվյալ բաժնում գրաֆիկներով տեսանելի են ըստ տարեթվի, ըստ պատվիրատուի և ըստ գնման ձևի կազմակերպված գնման ընթացակարգերը, ըստ տարեթվի կազմակերպված գնման ընթացակարգերի շրջանակներում ըստ պատվիրատուների ստանձնված պարտավորությունները և ըստ տարեթվի պատվիրատուների ստանձնած պարտավորություններն ըստ կազմակերպված գնման ընթացակարգերի տվյալների:<br>• **Գնումների պլանների և կնքված պայմանագրերի դիտում և բեռնում** - համակարգում տվյալների որոնումը հասանելի է յուրաքանչյուրի համար: Տվյալների որոնում կարելի է կատարել ըստ կնքված պայմանագրերի կամ ըստ գնումների պլանների, որի համար անհրաժեշտ է հաշվետվություններ միջերեսից սեղմել «Պայմանագրեր» (ըստ պայմանագրերի) կամ «Գնումների պլաններ» (ըստ մրցույթի պլանի): Մուտքագրել որոնման պարամետրը(երը) և սեղմել «Որոնել» սեղմակը և որոնման արդյունքները կհայտնվեն պատուհանի ստորին մասում: Տեղեկատվությունը հնարավոր է դիտել, ինչպես նաև բեռնել Excel կամ CSV տարբերակներով:<br>• **Մանրամասն հաշվետվությունների կազմում** - մանրամասն հաշվետվությունները հասանելի են յուրաքանչյուրի համար: Մանրամասն հաշվետվությունները ներառում են 3 բաժիններ՝ կազմակերպված, կայացած և չկայացած ընթացակարգեր, որոնցում մրցույթների վերաբերյալ տեղեկատվությունը ձևավորվում է Պատվիրատուի ադմինիստրատորի կողմից ընթակարգերի վերաբերյալ հաշվետվությունների հաստատման արդյունքում: Մանրամասն հաշվետվություններ կարելի է ներբեռնել ըստ համակարգում հասանելի ֆիլտրերի, որի համար անհրաժեշտ է հաշվետվություններ միջերեսից սեղմել «Մանրամասն հաշվետվություններ», բացված ցանկից ընտրել հաշվետվություններից մեկը և փնտրում իրականացնել ըստ սահմանված ֆիլտրերի: Նշելով հաշվետվության մեջ արտացոլվող անհրաժեշտ պարամետրը(երը), սեղմելով «Որոնում» սեղմակը՝ գեներացված հաշվետվությունը կհայտնվի պատուհանի ստորին մասում: Անհրաժեշտության դեպքում կարելի է վերադասավորել հաշվետվության |

յուրաքանչյուր պարամետրը ըստ նվազեցման/աճման կամ այբենական կարգով՝ սեղմելով պատկերանշանները: Սեղմել «Բեռնել» կոճակը կազմած հաշվետվությունը ներբեռնելու համար (Հաշվետվությունը ներբեռնվում է Excel տարբերակով):

- **Արխիվացված ընթացակարգեր** – PPCM համակարգի «արխիվացված ընթացակարգեր» բաժնում հասանելի են մինչև 2018 թվականը Armeps համակարգի միջոցով իրականացված մրցույթների վերաբերյալ տեղեկատվությունը: Նշված բաժնում տվյալների որոնում կարելի է կատարել ըստ ընթացակարգի ծածկագրի, հրապարակման օրի, բացման ամսաթվի, շնորհման օրի և ըստ պատվիրատուի անվանման, որի համար անհրաժեշտ է մուտքագրել որոնման պարամետրը(երը) և սեղմել «Որոնել» սեղմակը և որոնման արդյունքները կհայտնվեն պատուհանի ստորին մասում: Յուրաքանչյուր մրցույթի մասով առկա է «Հաշվետվություն» բաժին, որում տեսանելի է տվյալ ընթացակարգի վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը (Տեղեկատվությունը արխիվացվել է Armeps համակարգից):

Մուտքագրվող տվյալներ

**Գ15-1/Մ**
**Ամփոփ հաշվետվություններ**

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|
| Տարի | Ընտրովի դաշտ |
| Պատվիրատու | Տեքստային դաշտ |
| Գնման ընթացակարգ | Ընտրովի դաշտ |

**Գ15-2/Մ**
**Պայմանագրեր**

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|
| Պայմանանագրի ծածկագիրը | Տեքստային դաշտ |
| Գնման առարկա | Տեքստային դաշտ |
| Պատվիրատուի տիպ | Ընտրովի դաշտ /ՀՀ հանրային աշխանության մարմիններ, Քաղաքային համայնքներ, ՓԲԸ, Հիմնադրամ/ |
| Պատվիրատու | Տեքստային կամ թվային դաշտ |
| Մատակարար | Տեքստային դաշտ |

| | |
|---|---|
| Գնման ընթացակարգ | Ընտրովի դաշտ |
| Պայմանագրի ընդհանուր գումար | Տեքստային դաշտ |
| Պայմանագրի գումարը առկա ֆինանսական միջոցներով | Տեքստային դաշտ |
| Պայմանագրի կնքման ամսաթիվը | Օրացուցային դաշտ |
| Պայմանագրի մուտքագրման ամսաթիվը | Օրացուցային դաշտ |

**Գ15-3/Մ**
**Գնումների պլաններ**

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|
| Տարի | Ընտրովի դաշտ |
| Պատվիրատուի տիպ | Ընտրովի դաշտ /ՀՀ հանրային աշխանության մարմիններ, Քաղաքային համայնքներ |
| Պատվիրատու | Տեքստային դաշտ |
| Տնտեսագիտական դասակարգման հոդված | Տեքստային դաշտ |
| Գնման առարկա | Տեքստային դաշտ /ԳՄԱ կոդը կամ անվանումը/ |
| Գնման առարկայի հերթական համար | Տեքստային դաշտ |
| Գնման ընթացակարգ | Ընտրովի դաշտ |
| Չափման միավոր | Ընտրովի դաշտ |
| Ընդամենը գումար | Ընտրովի դաշտ /Նվազագույն դրամ, առավելագույն դրամ/ |
| Միավորի գին | Ընտրովի դաշտ /Նվազագույն դրամ, առավելագույն դրամ/ |
| Քանակ | Ընտրովի դաշտ /0, առավելագույն/ |

**Գ15-4/Մ**
**Մանրամասն հաշվետվություններ -Կազմակերպված գնման ընթացակարգեր**

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|
| Գնման ընթացակարգի ծածկագիր | Տեքստային դաշտ |
| Պատվիրատու | Տեքստային / թվային դաշտ |
| Հայտ ներկայացրած մասնակցի անվանում | Տեքստային դաշտ |
| Գնման առարկայի Նախահաշվային գին | Նվազագույն/Առավելագույն -Թվային դաշտ |
| Հայտ ներկայացրած մասնակցի առաջարկած միավորի գին | Նվազագույն/Առավելագույն -Թվային դաշտ |
| Հաշվարկային տնտեսում | Նվազագույն/Առավելագույն -Թվային դաշտ |
| Գնման առարկա և ԳՄԱ կոդ | Տեքստային/թվային դաշտ |
| Գնման ընթացակարգ | Ընտրովի դաշտ |
| Մասնակցի գրանցման երկիր | Ընտրովի դաշտ |
| Հայտ ներկայացրած մասնակցի կարգավիճակ | Ընտրովի դաշտ |
| Պատվիրատուի Տիպ | Ընտրովի դաշտ /ՀՀ հանրային աշխանության մարմիններ, Քաղաքային համայնքներ, ՓԲԸ, Հիմնադրամ/ |
| Գնման առարկայի տեսակ | Ընտրովի դաշտ |
| Ամսաթվեր | Ընտրովի դաշտ |

**Գ15-5/Մ**
**Մանրամասն հաշվետվություններ -Կայացած գնման ընթացակարգեր**
Գ15-4/Մ տվյալներ —> բացառությամբ «Գնման ընթացակարգի ծածկագիր» ֆիլտրի

**Գ15-6/Մ**
**Մանրամասն հաշվետվություններ -Չկայացած գնման ընթացակարգեր**

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|
| Պատվիրատու | Տեքստային / թվային դաշտ |

| | |
|---|---|
| Գնման առարկա և ԳՄԱ կոդ | Տեքստային/թվային դաշտ |
| Գնման ընթացակարգ | Ընտրովի դաշտ |
| Պատվիրատուի Տիպ | Ընտրովի դաշտ /ՀՀ հանրային աշխանության մարմիններ, Քաղաքային համայնքներ, ՓԲԸ, Հիմնադրամ/ |
| Գնման առարկայի տեսակ | Ընտրովի դաշտ |
| Ամսաթվեր | Ընտրովի դաշտ |

**Գ15-7/Մ**
**Արխիվացված ընթացակարգեր**

| **Տվյալ** | **Նկարագրություն** |
|---|---|
| Ընթացակարգի ծածկագիր | Տեքստային դաշտ |
| Պատվիրատուի անվանում | Տեքստային դաշտ |
| Ընթացակարգի հրապարակման օր | Օրացուցային դաշտ |
| Ընթացակարգի բացման օր | Օրացուցային դաշտ |
| Ընթացակարգի շնորհման օր | Օրացուցային դաշտ |

Ելքագրվող տվյալներ

**Գ15-1/Ե**
**Ամփոփ հաշվետվություններ**

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|
| Կազմակերպված գնման ընթացակարգեր | Գրաֆիկական տվյալներ |
| Կազմակերպված գնման ընթացակարգերի շրջանակներում ըստ պատվիրատուի ստանձնած պարտավորություններ | Գրաֆիկական տվյալներ |

| | |
|---|---|
| Պատվիրատուի ստանձնած պարտավորություններն ըստ կազմակերպված գնման ընթացակարգերի տվյալների | Գրաֆիկական տվյալներ |

**Գ15-2/Ե**
**Պայմանագրեր**

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|
| Պատվիրատու | Համակարգի կողմից գեներացվող դաշտ |
| Պայմանագրի ծածկագիրը | Համակարգի կողմից գեներացվող դաշտ |
| Ընտրված մասնակից | Համակարգի կողմից գեներացվող դաշտ |
| ՀՎՀՀ կոդ կամ համարժեք | Համակարգի կողմից գեներացվող դաշտ |
| Պայմանագրի կնքման ամսաթիվը | Համակարգի կողմից գեներացվող դաշտ |
| Գնման ընթացակարգ | Համակարգի կողմից գեներացվող դաշտ |
| Գնման առարկայի անվանում | Համակարգի կողմից գեներացվող դաշտ |
| Պայմանագրի ընդհանուր գումար | Համակարգի կողմից գեներացվող դաշտ |
| Պայմանագրի գումարը առկա ֆինանսական միջոցներով | Համակարգի կողմից գեներացվող դաշտ |
| Հաշվարկային տնտեսում | Համակարգի կողմից գեներացվող դաշտ |
| Պայմանագիր | Կից ֆայլը բեռնելու հնարավորությամբ դաշտ |
| Հանձնման/Ընդունման արձանագրություններ | Կից ֆայլը բեռնելու հնարավորությամբ դաշտ |
| Ապրանքների մատակարարման հարկային հաշիվ | Կից ֆայլը բեռնելու հնարավորությամբ դաշտ |

Գնումների պլաններ
Գ15-3/Ե
Գ15-3/Մ =>+

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|

| | |
|---|---|
| ԳՄԱ կոդ | Համակարգի կողմից գեներացվող դաշտ |
| Փոփոխման ամսաթիվ | Համակարգի կողմից գեներացվող դաշտ |

Գ15-4/Ե
Մանրամասն հաշվետվություններ -Կազմակերպված գնման ընթացակարգեր/Գ15-4/Մ =>+

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|
| Գնման ընթացակարգի հայտարարման ամսաթիվ | Համակարգի կողմից գեներացվող դաշտ |
| Չափման միավոր | Համակարգի կողմից գեներացվող դաշտ |
| Քանակ | Համակարգի կողմից գեներացվող դաշտ |
| Նախահաշվային գին | Համակարգի կողմից գեներացվող դաշտ |
| Նախահաշվային միավորի գին | Համակարգի կողմից գեներացվող դաշտ |
| Հաշվարկային տնտեսում | Համակարգի կողմից գեներացվող դաշտ |
| Մասնակիցների քանակ | Համակարգի կողմից գեներացվող դաշտ |
| Ընտրված մասնակից | Համակարգի կողմից գեներացվող դաշտ |
| Ըն տր վ ած մ աս ն ակ ց ի ՀՎՀՀ կ ամ հ ամ ար ժ եք | Համակարգի կողմից գեներացվող դաշտ |
| Ըն տր վ ած մ աս ն ակ ց ի ն ո ր ո շ ե լ ո ւ ամ ս աթ ի վ | Համակարգի կողմից գեներացվող դաշտ |
| Ան գ ո ր ծ ո ւ թյ ան ժ ամ կ ե տի ս կ ի զ բ /ավարտ | Համակարգի կողմից գեներացվող դաշտ |
| Պայ մ ան ագ ի ր կ ն ք ե լ ո ւ առ աջ ար կ ի ծ ան ո ւ ց մ ան ամ ս աթ ի վ | Համակարգի կողմից գեներացվող դաշտ |
| Պայ մ ան ագ ի ր ը պատվ ի ր ատո ւ ի մ ո տ մ ո ւ տք ագ ր ե լ ո ւ ամ ս աթ ի վ | Համակարգի կողմից գեներացվող դաշտ |
| Պայ մ ան ագ ր ի կ ն ք մ ան ամ ս աթ ի վ | Համակարգի կողմից գեներացվող դաշտ |

| | |
|---|---|
| Պայ մ ան ագ ր ի ծ ած կ ագ ի ր | Համակարգի կողմից գեներացվող դաշտ |
| Պայ մ ան ագ ր ի գ ի ն | Համակարգի կողմից գեներացվող դաշտ |
| Գն մ ան առ ար կ այ ի համ առ ո տ ն կ ար ագ ր ո ւ թյ ո ւ ն ը (տե խն ի կ ակ ան բ ն ո ւ թ ագ ի ր | Համակարգի կողմից գեներացվող դաշտ |
| Գն մ ան առ ար կ այ ի պայ մ ան ագ ր ո վ ն ախատե ս վ ած համ առ ո տ ն կ ար ագ ր ո ւ թյ ո ւ ն ը (տե խն ի կ ակ ան բ ն ո ւ թ ագ ի ր ) | Համակարգի կողմից գեներացվող դաշտ |
| Չափաբաժնի անվանում | Համակարգի կողմից գեներացվող դաշտ |
| Չափաբաժնի համար | Համակարգի կողմից գեներացվող դաշտ |

**Գ15-5/Ե**
Մանրամասն հաշվետվություններ -Կայացած գնման ընթացակարգեր/Գ15-5/Մ =>+

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|
| Գնման ընթացակարգի վերնագիր | Համակարգի կողմից գեներացվող դաշտ |
| Մասնակիցների քանակ | Համակարգի կողմից գեներացվող դաշտ |
| Մասնակիցների անվանումներ | Համակարգի կողմից գեներացվող դաշտ |
| Նախահաշվային գին | Համակարգի կողմից գեներացվող դաշտ |
| Հայտ ներկայացրած մասնակցի գնային առաջարկ<br>Հաշվարկային տնտեսում<br>Կատարման վերջնաժամկետ | Համակարգի կողմից գեներացվող դաշտ<br>Համակարգի կողմից գեներացվող դաշտ<br>Համակարգի կողմից գեներացվող դաշտ |

**Գ15-6/Ե**
**Մանրամասն հաշվետվություններ -Չկայացած գնման ընթացակարգեր /Գ15-6/Մ =>+**

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|
| Նախահաշվային ընդհանուր գին | Համակարգի կողմից գեներացվող դաշտ |
| Նախահաշվային միավորի գին<br><br>Գնման ընթացակարգի ծածկագիր | Համակարգի կողմից գեներացվող դաշտ<br><br>Համակարգի կողմից գեներացվող դաշտ |
| Հայտ ներկայացրած մասնակից<br><br>Մասնակցի ընդհանուր գնային առաջարկ | Համակարգի կողմից գեներացվող դաշտ<br><br>Համակարգի կողմից գեներացվող դաշտ |
| Գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու հիմք<br><br>Հայտերի բացման ամսաթիվ | Համակարգի կողմից գեներացվող դաշտ<br><br>Համակարգի կողմից գեներացվող դաշտ |

**Գ15-7/Ե**
**Արխիվացված ընթացակարգեր**
Գ15-7/Մ =>+

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|
| Վերնագիր | Համակարգի կողմից գեներացվող դաշտ |
| Գնման ձև | Համակարգի կողմից գեներացվող դաշտ |
| Գնման տիպ | Համակարգի կողմից գեներացվող դաշտ |
| Կարգավիճակ | Համակարգի կողմից գեներացվող դաշտ |

| Վալիդացիա | |
|---|---|

PPCM համակարգի հրապարակային էջում տվյալների նկարագրության ժամանակ իրականացվում է հետևյալ տվյալների ստուգումը.

- Հաշվարկային տնտեսում, Պայմանագրի գին, Հայտ ներկայացրած մասնակցի առաջարկած միավորի գին,Գնման առարկայի Նախահաշվային գին դաշտերում պարտադիր թվային արժեքների մուտքագրում
- Պայմանագրի կնքման ամսաթիվ,Պայմանագրի մուտքագրման ամսաթիվ դաշտերի արժեքների ստուգում օրացուցային արժեքների հետ



https://armeps.am/ppcm/public/reports/
Օգտվող
Համակարգ
Տեղեկատվութ. մուտքագրում և հաստատում
Անհրաժեշտ տվյալներ որոնում
Գ15-1/Մ
- Գ15-7/Մ տվյալներ
Տվյալների ցուցադրում
Գ15-1/Ե
- Գ15-7/Ե տվյալներ
Գ15-1/Մ և Գ15-7/Մ տվյալների մուտքագրում
Գ15-2/Մ և Գ15-6/Մ տվյալների մուտքագրում
Տվյալների բեռնում

| | |
|---|---|
| Ստորաբաժանում | Գնումների քաղաքականության վարչություն |
| Անվանում | Գ16–Դրամաշնորհի հատկացման գործընթացները Armeps և PPCM համակարգերի միջոցով |
| Նպատակ | Պետական մարմինների կողմից դրամաշնորհի հատկացման մրցույթի իրականացում PPCM և ARMEPS համակարգերում |
| Տիրույթ | Պատվիրատու (Պետական մարմին), PPCM, ARMEPS համակարգեր |
| Դերակատարներ | Պատվիրատուի ադմինիստրատոր (ՊԱ), Մրցույթի հանձնաժողով (համակարգում՝ պատասխանատու ստորաբաժանման (ՊՍ) ղեկավար, ՊՍ աշխատակից) Մրցույթի քարտուղար (համակարգում ՝ գնումների համակարգող (ԳՀ), գնումները համակարգողի (ԳՀ) ղեկավար) |
| Ընթացք 1 | 1. ՀՀ ֆինանսների նախարարի 10/08/2021թ. N 422-Ա հրամանով սահմանվել է, որ 2021 թվականի սեպտեմբերի 1-ից պետական բյուջեից դրամաշնորհի հատկացման գործընթացներն իրականացվելու են Armeps և PPCM էլեկտրոնային համակարգերի միջոցով: Ընդ որում դրամաշնորհային ուղիղ հատկացումների (առանց մրցույթի) դեպքում հաշվառման նպատակով PPCM համակարգ մուտքագրվում է միայն կնքված պայմանագրերը (1. Պլանում կատարվում է լրացում, 2. ստեղծվում է մրցույթ՝ (թղթային) դրամաշնորհային մրցույթ) 3. մուտքագրվում է մրցույթի հաշվետվությունը և կնքված պայմանագիրը):<br>2. Դրամաշնորհային մրցույթների իրականացման համար PPCM համակարգում ստեղծվում են փոփոխման հայտեր և պլանում կատարվում են համապատասխան փոփոխություններ և լրացումներ: Ի տարբերություն այլ ընթացակարգերի դրամաշնորհային մրցույթների համար նախատեսված է առանձնացված CPV կոդ (կոդ՝ 99999999, անվանում՝ դրամաշնորհային ծրագրեր), որը ընտրելու դեպքում համակարգում ընթացակարգի տեսակը ավտոմատ նշվում է «Դրամաշնորհային մրցույթ»: Փոփոխման հայտերը Պլան հաստատողի ու ՊԱ-ի կողմից հաստատումից հետո իրականացվում է տվյալների ավտոմատ ստուգում LS Finance համակարգի հետ և անհամապատասխանությունների բացակայության դեպքում փոփոխությունները հաստատվում են և՛ LS Finance, և՛ PPCM համակարգերում (մանրամասն տես՝ Գ-3 բիզնես գործընթաց):<br>3. Պլանում փոփոխությունները հաստատվելուց հետո, PPCM համակարգում լրացվում են մրցույթի պլանի աշխատակարգային տվյալները: Բոլոր աշխատակարգային տվյալները ՊԱ-ի կողմից հաստատվելու դեպքում մրցույթի քարտուղարը (համակարգի տեսանկյունից «գնումների համակարգողը») ստեղծում է նոր մրցույթ՝ լրացնելով համապատասխան դաշտերը և ներառելով բոլոր չափաբաժինները Տվյալները պահպանելուց հետո սեղմում է «Ստեղծել մրցույթը» սեղմակը: Մրցույթը տեղափոխվում է ARMEPS համակարգ և PPCM-ում կարգավիճակը «Սևագիր» տարբերակից փոխվում է «Առկախ»-ի (տես՝ Գ-5 բիզնես գործընթաց): Իսկ ուղիղ հատկացման դրամաշնորհների դեպքում մրցույթի կարգավիճակը փոխվում է «Շնորհված»-ի, լրացվում է հաշվետվությունը և մուտքագրվում է կնքված պայմանագիրը (տես՝ Գ-9 բիզնես գործընթաց):<br>4. ARMEPS համակարգում նոր ընթացակարգ կազմակերպելու համար մրցույթի քարտուղարը լրացնում է անհրաժեշտ տվյալները, ստեղծում է ընթացակարգի հանձնաժողովի կազմը, սահմանում է մրցույթի կառուցվածքը և հրապարակում է ընթացակարգը (տես՝ Գ-6 բիզնես գործընթաց):<br>5. Տնտեսական օպերատորը ARMEPS համակարգի միջոցով դրամաշնորհի հատկացման մրցույթի մասնակցելու համար մուտք գործելով համակարգ գտնում է իրեն հետաքրքրող մրցույթը, «Ցուցադրել ՄՀ ցանկը» սեղմակով ընտրում է «ՄՀ-ի փաստաթղթեր» դաշտը և ծանոթանում մրցույթի հայտարարությանը և հրավերին: Մրցույթի վերաբերյալ պարզաբանում ստանալու համար «Ցուցադրել ՄՀ ցանկը» սեղմակով ընտրում է «Պարզաբանումներ» դաշտը և |

«Պարզաբանման հարցումներ» սեղմակի միջոցով պատվիրատուին է ուղղում իր պարզաբանման հարցումը (տես՝ Գ-7 բիզնես գործընթաց):

6. Հայտ ներկայացնելու համար ՏՕ-ն «Ցուցադրել ՄՀ ցանկը» սեղմակով ընտրում է «Հայտեր» դաշտը, բացված պատուհանում «Բեռնել նախապատրաստման գործիքը» սեղմակի միջոցով բեռնում է ընթացակարգի հայտի պատրաստման գործիքը և «բեռնել մրցույթի կառուցվածքը» սեղմակի միջոցով բեռնում է մրցույթի կառուցվածքը: Համակարգչում բեռնվում է .xml ֆայլ, որը պետք է բացել նախապատրաստման գործիքով՝ սեղմելով «Բացել փաստաթուղթը» սեղմակը, բացվում է պատուհան՝ «Ջավա (Java)» ծրագրով, որը երեք լեզվով է՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն: «Պիտանելիության» և «Տեխնիկական» դաշտում «Կցել ֆայլ» սեղմակի միջոցով կցում է անհրաժեշտ փաստաթղթերը, իսկ «Ֆինանսական» դաշտում լրացնում է ֆինանսական նախահաշվի գումարը և կցում է պահանջվող փաստաթղթերը: Ֆայլերը կցելուց հետո սեղմում է «Պահպանել» սեղմակը: Բացված պատուհանում նշելով ֆայլի համար որևէ անուն՝ տալիս է «Պահպանել» հրամանը, սեղմում է «Վավերացնել» սեղմակը, այնուհետև «Փաթեթավորել» սեղմակը: Փակում է «Ջավա (Java)» ծրագրով բացված պատուհանը:
7. Համակարգում բացված պատուհանում սեղմում է «Բեռնել հայտի փաթեթը» սեղմակը: Բացված պատուհանը առաջարկում է օգտվողին հաստատել, որ իր հաշիվը ճիշտ է, հաստատելուց հետո օգտվողին առաջարկվում է ընդունել ընթացակարգերի համար օգտվողի համաձայնության քաղաքականությունը, ընդունելուց հետո բացված պատուհանում պետք է ընտրել ուղարկվող փաթեթը, որն արդեն նախապես պահպանված և արխիվացված ֆայլն է: Գործողությունն ավարտելու համար սեղմում է «Բեռնել» սեղմակը՝ հայտի փաթեթը ARMEPS համակարգում բեռնելու համար: Համակարգը գեներացնում է մի առանձնահատուկ հայտի փաթեթի ստացականի հերթական համար և հայտի փաթեթի բեռնման համար տեղեկացնում օգտվողին:
8. Հայտերի փաթեթների տրամադրման վերջնաժամկետից հետո ARMEPS համակարգում իրականացվում է ստացված հայտերի բացում և գնահատում (տես՝ Գ-10 բիզնես գործընթաց): Ներկայացված հայտերի գնահատման վերջնականացումից հետո բոլոր ՏՕ-ները ավտոմատ կդասակարգվեն ըստ հայտով ներկայացրած գնառաջարկների աճման կարգի: Տնտեսական օպերատորի դասակարգման վերջնականացումից հետո ԳՊ/ՄՀՄ օգտվողը (գնումների համակարգողը) պետք է հաստատի ու «Հրապարակել գնահատման արդյունքները» առաջադրանքի միջոցով բոլոր հայտատու ՏՕ-ներին տրամադրի հայտերի գնահատման արդյունքներն ու պայմանագիր կնքելու մասին որոշումը՝ պահպանելով օրենքով նախատեսված անգործության շրջանը: ՏՕ-ն իր կայք-էջում ստանում է «Պատասխանել պայմանագրի շնորհմանը» առաջադրանքը, որով ընդունում կամ մերժում է իրեն շնորհված պայմանագիրը: Պատվիրատուի ԳՊ/ՄՀՄ օգտվողը «Հրապարակել շնորհման ծանուցումը» առաջադրանքից հետո իրականացնում է «Արտահանել մրցույթը» առաջադրանքը, ինչի արդյունքում պայմանագրի շնորհման արդյունքները փոխանցվում են PPCM համակարգ, որտեղ սկսվում է պայմանագրի կառավարման գործառույթը:
9. ARMEPS համակարգից մրցույթի արտահանման արդյունքում պայմանագրի շնորհման արդյունքները փոխանցվում են PPCM համակարգ, որտեղ մրցույթի կարգավիճակը «Առկախ»-ից փոխվում է «Շնորհված»-ի և ԳՀ-ի կողմից իրականացվում է կնքված պայմանագրի մուտքագրման և մրցույթի հաշվետվության լրացման գործառույթները (տես՝ Գ-12 բիզնես գործընթաց):
10. PPCM համակարգում պատվիրատուի կողմից մրցույթի հաշվետվության և կնքված պայմանագրերի հաստատման արդյունքում ARMEPS համակարգում տնտեսական օպերատորների էջերի «Իմ պայմանագրեր» բաժնում տեսանելի են տվյալ ՏՕ-ի հետ համակարգ մուտքագրված պայմանագիրը/պայմանագրերը: Հաստատված պայմանագրերի հիման վրա ՏՕ-ի ստորագրված արձանագրությունը և հաշիվ-ապրանքագիրը համակարգի անհրաժեշտ դաշտեր (ներկայացված արձանագրություն, մատակարարման ապրանքագրեր) ներբեռնելուց հետո ստորագրված արձանագրությունը և

| | |
|---|---|
| | ապրանքագիրը PPCM համակարգի միջոցով ուղարկվում է պատվիրատուի ադմինիստրատորին (տես՝ Գ-13 բիզնես գործընթաց):<br>11. Մրցույթի հանձնաժողովի կողմից եզրակացությունը և ստորագրված արձանագրությունը համակարգում բեռնելուց և հաստատելուց հետո ՏՕ-ն ստանում է հաղորդագրություն «Առաջադրանքներ» բաժնում, որտեղ հնարավոր է դիտել հանձնաժողովի կողմից ստորագրված եզրակացությունը և արձանագրությունը (տես՝ Գ-14 բիզնես գործընթաց): |
| Մուտքագրվող տվյալներ | **Գ16-1/Մ**<br>Գ5, Գ6, Գ7, Գ8, Գ9, Գ10, Գ12, Գ13, Գ14 բիզնես գործընթացների մուտքային տվյալներ |
| Ելքագրվող տվյալներ | **Գ16-1/Ե**<br>Գ5, Գ6, Գ7, Գ8, Գ9, Գ10, Գ12, Գ13, Գ14 բիզնես գործընթացների ելքային տվյալներ |
| Վալիդացիա | Մրցույթի ընթացակարգի իրականացում դրամաշնորհի հատկացման մրցույթների դեպքում իրականացվում է հետևյալ տվյալների ստուգում.<br>● «ԳՄԱ կոդ» դաշտի արժեքի ստուգում «Ապրանքների, ծառայությունների և աշխատանքների անվանումները» արժեքի հետ<br>● «CPV կոդ» դաշտի ստուգում «Չափման միավոր» դաշտի հետ<br>● «CPV կոդ» դաշտի արժեքի ստուգում «Գնման ձև» դաշտի արժեքի հետ<br>● «ԱՐՄԵՓՍ մուտքանուն» դաշտի արժեքի ստուգում «ԱՐՄԵՓՍ» համակարգում առկա մուտքանվան արժեքի հետ<br>● Ընթացակարգի եզակի ID կոդի տրամադրում<br>● «Մրցույթի կառուցվածքի սահմանում», «Հարց ու պատասխաններ», «Հայտերի բացում ու ներկայացում», «Հայտերի գնահատում ու միավորների նշանակում», «Պայմանագրի շնորհում» դաշտերի արժեքի համապատասխանեցում «Առգիծ» արժեքի հետ<br>● «Սահմանել չափորոշիչներ» պատուհանի բոլոր դաշտերի պարտադիր լրացում<br>● *Աստղանիշներով դաշտերի պարտադիր լրացում<br>● «Ընկերության գործունեությունը» դաշտի արժեքի լրացման սահմանափակում /առավելագույն նիշերի քանակ՝ 512/<br>● «Լեզու» դաշտի արժեքի ստուգում «Հայերեն», «Ռուսերեն», «Անգլերեն» դաշտի արժեքի հետ<br>● ծրագրի իրականացման և վճարման ժամանակացույցերը լրացնելը պարտադիր է, այլապես համակարգը թույլ չի տա հաստատել պայմանագիրը: Համակարգում բոլոր դաշտերը լրացնելը պարտադիր է, իսկ այն դաշտերը, որոնք կիրառելի չեն, անհրաժեշտ է լրացնել ‹‹-››: |


LS Finance
Գ-3 բիզնես գործընթաց
Պլանի ստուգում
PPCM համակարգ
Պլանի հաստատում, փոփոխություն
Պայմանագրերի ստեղծման և հաշվետվության հաստատման փուլ
Մրցույթի նախապատրաստման փուլ
Ուղիղ դրամաշնորհ
Փոխլային դրամաշնորհայ ին մրցույթ
Դրամաշնորհայ ին մրցույթ
Գ-12 բիզնես գործընթաց
աշվետվութ, պայմանագրեր ի հաստատում
Գ-14 բիզնես գործընթաց
անձնման- ընդունման իրականցում
ARMEPS համակարգ
PPCM-ում ստեղծված մրցույթ
Դրամաշնորհայ ին մրցույթ
ամաշնորհայ ին մրցույթի ստեղծում ARMEPS-ում
Գ-10 բիզնես գործընթաց
Մրցույթի ստեղծում, հրապարակում
Հայտերի բացում, գնահատում, շնորհում
Տվյալների փոխանցում PPCM
Տնտեսական օպերատոր
ARMEPS համակարգ
Գ-10 բիզնես գործընթաց
Մրցույթի հրապարակման փուլից հետո
Հայտի ներկայացում
Գ-13 բիզնես գործընթաց
Հաշվետվությու ների, պայմանագրերի հաստատում
անձնման- ընդունման արձանագրությ ունների ներկ.

| | |
|---|---|
| Ստորաբաժանում | Գնումների քաղաքականության վարչություն |
| Անվանում | Գ17– Էլեկտրոնային աճուրդների իրականացման կարգը և օգտվողների (users) կառավարումը |
| Նպատակ | Էլեկտրոնային աճուրդների իրականացման կարգը և օգտվողների (users) կառավարումը |
| Տիրույթ | Պատվիրատու, Eauction Էլեկտրոնային աճուրդի համակարգ (այսուհետև՝ Eauction համակարգ) |
| Դերակատարներ | Պատվիրատու, ադմինիստրատոր, գնահատող հանձնաժողով, մասնակից, Eauction համակարգ |
| Բազմընթացք | Ոչ |
| Ընթացք 1 | 1. Էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման դեպքում գործում են գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ սահմանված առանձնահատկությունները: <br> 2. Էլեկտրոնային աճուրդի ընդհանուր տևողությունը սահմանվում է 30 րոպե: Աճուրդի ընթացքում կատարվող յուրաքանչյուր քայլի արդյունքում նվազեցվող գումարը չպետք է պակաս լինի աճուրդն սկսելու պահին ներկայացված նվազագույն գնային առաջարկի մեկ տոկոսից: Եթե աճուրդի ընդհանուր տևողության ընթացքում որևէ քայլ կատարելու պահից հաշված 5-րդ րոպեն լրանալը չի կատարվում նոր քայլ, ապա աճուրդը համարվում է ամփոփված, և վերջին քայլը կատարած մասնակիցը համարվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից: Եթե առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը գնահատվում է բավարար, ապա վերջինս հայտարարվում է ընտրված մասնակից, իսկ մյուս մասնակիցների հայտերը մերժվում են: Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտն անբավարար գնահատվելու դեպքում գնման ընթացակարգը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած: Աճուրդն ամփոփվելու պահին, եթե մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների համար գնման հայտով սահմանված գինը, գնման ընթացակարգը հայտարարվում է չկայացած: Հայտերն ներկայացնելու ժամկետը լրանալու պահի դրությամբ համակարգն ավտոմատ ծանուցման միջոցով հայտ ներկայացրած բոլոր մասնակիցներին ուղարկում է ներկայացված նվազագույն գնային առաջարկը, ինչպես նաև նոր (վերանայված) գներ ներկայացնելու վերաբերյալ առաջարկություն: Առաջարկությունը ներառում է նաև տեղեկություններ էլեկտրոնային աճուրդի բացման օրվա ու ժամի և օգտագործվող էլեկտրոնային սարքավորումների հետ անհատական կապուղի հաստատելու համար անհրաժեշտ տվյալների մասին: Աճուրդը սկսվում է հայտերը ներկայացնելու ժամկետը լրանալուն հաջորդող օրը՝ հրավերով սահմանված ժամին: Էլեկտրոնային աճուրդը չի կարող կազմակերպվել ժամը 16:00-ից հետո և ոչ աշխատանքային օրերին: Եթե էլեկտրոնային աճուրդն սկսելու օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա էլեկտրոնային աճուրդը վերահայտարարված է համարվում տվյալ ոչ աշխատանքային օրվան հաջորդող աշխատանքային օրվա նույն ժամին: Մինչև աճուրդի ամփոփման համար հրավերով սահմանված ժամկետը լրանալը՝ համակարգն ավտոմատ եղանակով մասնակիցներին ներկայացնում է յուրաքանչյուր մասնակցի քայլը և այն կատարելու օրը, ժամը: Աճուրդն ամփոփվում է հրավերում նշված կոնկրետ ժամը լրանալու դրությամբ կամ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշման 10-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված դեպքում: Աճուրդն ամփոփվելու պահի դրությամբ համակարգն ավտոմատ եղանակով պատվիրատուին և հայտեր ներկայացրած մասնակիցներին ներկայացնում է աճուրդի արդյունքները՝ ըստ առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների անվանումների և զբաղեցրած տեղերի: |

3. Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու համար հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանվում է առնվազն 15 օրացուցային օր՝ հայտարարությունը և հրավերը տեղեկագրում հրապարակելու օրվանից: Եթե գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա հայտերի ներկայացման համար ժամկետը սահմանվում է առնվազն յոթ օրացուցային օր: Էլեկտրոնային աճուրդի կիրառման դեպքում հրավերը ներառում է նաև հետևյալ պայմանները. 1) ներկայացվելիք առաջարկների սահմանափակումները, որոնք բխում են գնման առարկայի բնութագրից, 2) էլեկտրոնային աճուրդի ընթացքում մասնակիցներին տրամադրվելիք տեղեկությունները և այդ տեղեկությունները նրանց տրամադրելու պայմանները, 3) էլեկտրոնային աճուրդի գործընթացին վերաբերող էական նշանակության տեղեկությունները, 4) մասնակիցների կողմից հայտեր ներկայացնելու պայմանները: 5) տեղեկություններ՝ օգտագործվող էլեկտրոնային սարքավորումների մասին և կապ հաստատելու պայմաններն ու տեխնիկական բնութագրերը: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց ոչ ուշ, քան երկու օրացուցային օր առաջ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք նույն օրը հրապարակվում են տեղեկագրում:
4. Առաջնորդվելով տեղեկագրում հրապարակված «Էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող թվային ծածկագրեր CPV կոդեր» (այսուհետ՝ անվանացանկ) հրապարակման մեջ առկա էլեկտրոնային աճուրդ կատարելու համար նախատեսված անվանացանկով, պատվիրատուն գնումների պլանում կատարում է լրացումներ և/կամ փոփոխություններ, ստեղծում է գնումների պլան, ԷԱՃ գնման ձևով:
5. Էլեկտրոնային գնումների ARMEPS և Eauction համակարգերի մուտքերը նույնականացված են, այն է՝ Eauction համակարգը օգտագործելու համար, օգտվողները պետք է նախապես գրանցված լինեն ARMEPS համակարգում:
6. Eauction համակարգերում առանցված են հետևյալ օգտատերերը, իրենց տարբեր միջերեսներով.

- Ադմինիստրատոր /ՀՀ ՖՆ գնումների քաղաքականության վարչության աշխատակից/
- Պատվիրատու
- Մասնակից

**Ադմինիստրատորի միջերեսում** ներառված են հետևյալ դաշտերը՝ Բաժանորդագրության կառավարում, Առկա մրցույթ, Հարցում, Հանձնաժողով, Ծանուցում, Արտոնություն, Դեր, Պատվիրատու և CPV դասակարգիչ, որոնք ադմինիստրատորը հնարավորություն ունի դիտելու, բայց ոչ խմբագրելու:

- «Բաժանորդագրության կառավարում» դաշտում տեսանելի են համակարգում առկա բոլոր գնման առարկաները, որոնցում հնարավոր է «v» կոճակի միջոցով բաժանորդագրվել կոնկրետ գնման առարկային:
- «Առկա մրցույթ» դաշտում տեսանելի են համակարգում առկա բոլոր մրցույթները՝ տարբեր կարգավիճակներով (Նոր, Հրապարակված, Նախաաճուրդային, աճուրդ, Դիմում-հայտարարության գնահատում, Մինչև դիմում-հայտարարության գնահատում, Դիմում-հայտարարության շտկման գնահատում, Շնորհում, Պասիվ, Չկայացած, Ավարտված): Համակարգը հնարավորություն է ընձեռում իրականացնել փնտրում ըստ ծածկագրի, ըստ պատվիրատուի անվանման, ըստ ընթացակարգի վերնագրի և ըստ կարգավիճակի:
- «Հարցում» դաշտում տեսանելի են մասնակիցների կողմից պատվիրատուներին ներկայացված պարզաբանումների բոլոր հարցումները: Համակարգը հնարավորություն է ընձեռում իրականացնել փնտրում ըստ մրցույթի անվանման, ըստ մրցույթի ծածկագրի, ըստ կարգավիճակը (Նոր, պատասխանված, պարզաբանված և պասիվ);
- «Հանձնաժողով» դաշտում տեսանելի են պատվիրատուների կողմից ստեղծված հանձնաժողովների տվյալները: Համակարգը հնարավորություն է ընձեռում իրականացնել փնտրում ըստ մրցույթի անվանման, ըստ մրցույթի ծածկագրի, ըստ համարի, ըստ կարգավիճակի (ակտիվ, պասիվ);
- «Ծանուցում» դաշտում տեսանելի են համակարգում առկա բոլոր ծանուցումները (notification)՝ բացառությամբ հակադարձ աճուրդին մասնակցության համար նախատեսված PIN կոդի տրամադրման ծանուցումները: Համակարգը

| | |
|---|---|
| | հնարավորություն է ընձեռում իրականացնել փնտրում ըստ ծածկագրի և ըստ կարգավիճակի (կարդացված, չկարդացված):<br>● «Արտոնություններ» դաշտում համակարգը հնարավորություն ունի իրականացնել փնտրում ըստ անվանման, ըստ մոդուլի, ըստ գործառույթի և ըստ կարգավիճակի (ակտիվ, պասիվ):<br>● «Դեր» դաշտում համակարգը հնարավորություն է ընձեռում իրականացնել փնտրում ըստ անվանման, ըստ արտոնության և ըստ կարգավիճակի:<br>● «Պատվիրատու» դաշտում տեսանելի են համակարգում գրանցված բոլոր պատվիրատուները, ինչպես նաև վերջիններիս կարգավիճակները (ակտիվ, պասիվ): Ադմինիստրատորը հնարավորություն ունի խմբագրելու պատվիրատուի տվյալները: Համակարգը հնարավորություն է ընձեռում իրականացնել փնտրում ըստ պատվիրատուի անվանման և ըստ կարգավիճակի:<br>● «CPV դասակարգիչ» դաշտում տեսանելի են արդեն իսկ համակարգում առկա CPV կոդերը իրենց անվանումներով: Համակարգը հնարավորություն է ընձեռում իրականացնել փնտրում ըստ անվանման, CPV կոդի և ըստ կարգավիճակի (ակտիվ, պասիվ): Միջերեսում հնարավոր է ավելացնել նոր գնման առարկա սեղմելով «Ավելացնել» կոճակը: Բացված պատուհանում լրացվում են CPV կոդը, անվանումը (հայերեն/ռուսերեն/անգլերեն) և կարգավիճակը (ակտիվ կամ պասիվ):<br>**Պատվիրատուի /համակարգողի/** միջերեսում ներառված են «առկա մրցույթ», «հարցում», «հանձնաժողով», ծանուցում, իմ տվյալներ դաշտերը: Առկա մրցույթ, հարցում, հանձնաժողով, Ծանուցում դաշտերում տեսանելի են միայն կոնկրետ պատվիրատուի վերաբերող տվյալները:<br>● «Առկա մրցույթ» դաշտում տեսանելի են պատվիրատուի բոլոր մրցույթները՝ տարբեր կարգավիճակներով (Նոր, Հրապարակված, Նախաաճուրդային, աճուրդ, Դիմում-հայտարարության գնահատում, Մինչև դիմում-հայտարարության գնահատում, Դիմում-հայտարարության շտկման գնահատում, Շնորհում, Պասիվ, Չկայացած, Ավարտված): Համակարգը հնարավորություն է ընձեռում իրականացնել փնտրում ըստ ծածկագրի, ըստ անվանման և ըստ կարգավիճակի (Նոր, Հրապարակված, Նախաաճուրդային, աճուրդ, Դիմում-հայտարարության գնահատում, Մինչև դիմում-հայտարարության գնահատում, Դիմում-հայտարարության շտկման գնահատում, Շնորհում, Պասիվ, Չկայացած, Ավարտված)<br>● «Հարցում» դաշտում տեսանելի են մասնակիցների կողմից պատվիրատուին ներկայացված պարզաբանումների հարցումները: Համակարգը հնարավորություն ունի իրականացնել փնտրում ըստ մրցույթի անվանման, ըստ մրցույթի ծածկագրի, ըստ կարգավիճակը (Նոր, պատասխանված, պարզաբանված և պասիվ):<br>● «Հանձնաժողով» դաշտում տեսանելի են պատվիրատուի կողմից ստեղծված հանձնաժողովների տվյալները: Համակարգը հնարավորություն է ընձեռում իրականացնել փնտրում ըստ մրցույթի անվանման, ըստ համարի, ըստ կարգավիճակի (ակտիվ, պասիվ):<br>● «Ծանուցում» դաշտում տեսանելի են պատվիրատուին հասցեագրված ծանուցումները (notification): Համակարգը հնարավորություն է ընձեռում իրականացնել փնտրում ըստ ծածկագրի և ըստ կարգավիճակի (կարդացված, չկարդացված):<br>● «Իմ տվյալներ» բաժնում տեսանելի են պատվիրատուի տվյալները՝ վերնագիր (Պատվիրատուի անվանում, հայերեն դաշտը խմբագրելի չէ, քանի որ տվյալները գեներացվում են ARMEPS համակարգից, ռուսերեն և անգլերեն տվյալները խմբագրելի են), հասցե (ռուսերեն և անգլերեն գրառումները խմբագրելի են), տնօրեն (խմբագրելի է), համակարգող (ռուսերեն և անգլերեն գրառումները խմբագրելի են), ՀՎՀՀ (խմբագրելի է), հեռախոս (խմբագրելի է), երկիր (Ընտրվող դաշտ), կարգավիճակ, բանկային ռեկվիզիտներ: «Բանկային ռեկվիզիտներ» դաշտում նոր տող ավելացնելու համար պետք է սեղմել համապատասխան աղյուսակի աջ անկյունի «Ավելացնել» կոճակը: Բացված տողում |

տեղեկատվությունը մուտքագրելուց հետո անհրաժեշտ է սեղմել տողի աջ անկյունի «Պահել» կոճակը: Առկա տվյալը խմբագրելու համար անհրաժեշտ է սեղմել տողի աջ անկյունի «Մատիտ» նշանը, փոփոխել տվյալները և սեղմել «Պահել» կոճակը: Բոլոր տողերում փոփոխություններ կատարելուց հետո Պատվիրատուի տվյալների հաստատման համար էջի ներքևի աջ անկյունում սեղմել «Պահել» կոճակը:

**Պատվիրատու/գնահատող հանձնաժողով** միջերեսում ներառված են առկա մրցույթներ և ծանուցում դաշտերը:

- «Առկա մրցույթ» դաշտում տեսանելի են հանձնաժողովի տվյալ օգտատիրոջը վերաբերող բոլոր ընթացակարգերը: Համակարգը հնարավորություն է ընձեռում իրականացնել փնտրում ըստ ծածկագրի, ըստ անվանման և ըստ կարգավիճակը (Նոր, Հրապարակված, Նախաաճուրդային, աճուրդ, Դիմում-հայտարարության գնահատում, Մինչև դիմում-հայտարարության գնահատում, Դիմում-հայտարարության շտկման գնահատում, Շնորհում, Շտկում, Չկայացած):
- «Ծանուցում» դաշտում տեսանելի են հանձնաժողովի տվյալ օգտատիրոջը վերաբերող բոլոր ծանուցումները: Համակարգը հնարավորություն է ընձեռում իրականացնել փնտրում ըստ կարգավիճակի (կարդացված, չկարդացված):

**Մասնակցի** միջերեսում ներառված են Բաժանորդագրության կառավարում, իմ տվյալներ, ծանցում, մրցույթ դաշտերը:

- «Բաժանորդագրության կառավարում» դաշտում տեսանելի են աճուրդի անվանացանկում առկա բոլոր գնման առարկաները, հնարավոր է «v» կոճակի միջոցով բաժանորդագրվել կոնկրետ գնման առարկային:
- «Իմ տվյալներ» դաշտում տեսանելի են կազմակերպության անվանումը (խմբագրելի են միայնն ռուսերեն և անգլերեն գրառումները), հասցե (հայերեն/ռուսերեն/անգլերեն դաշտերը խմբագրելի են), տնօրեն (հայերեն/ռուսերեն/անգլերեն դաշտերը խմբագրելի են), օգտատեր (խմբագրելի են միայն ռուսերեն և անգլերեն գրառումները), բանկ (հայերեն/ռուսերեն/անգլերեն դաշտերը խմբագրելի են), ՀՎՀՀ (դաշտը խմբագրելի չէ, քանի որ տվյալները գեներացվում են ARMEPS համակարգից), հեռախոս (խմբագրելի դաշտ), բանկային հաշիվ (խմբագրելի դաշտ), երկիր (ընտրովի դաշտ), և կարգավիճակ (ընտրովի դաշտ -ակտիվ/պասիվ) դաշտերը:
- «Ծանցում» դաշտում տեսանելի են տվյալ օգտատիրոջը վերաբերող բոլոր ծանուցումները: Համակարգը հնարավորություն է ընձեռում իրականացնել փնտրում ըստ կարգավիճակի (կարդացված, չկարդացված):
- «Մրցույթներ» դաշտում տեսանելի են համակարգում առկա բոլոր ընթացակարգերը: Համակարգը հնարավորություն է ընձեռում իրականացնել փնտրում ըստ ծածկագրի, ըստ վերնագրի և ըստ կարգավիճակի (Նոր (Չկիրառվող դաշտ՝ տվյլաները տեսանելի չեն լինում), Հրապարակված, Նախաաճուրդային, աճուրդ, Դիմում-հայտարարության գնահատում, Մինչև դիմում-հայտարարության շտկման գնահատում, Հայտի շտկման գնահատում, Շնորհում, Պասիվ, Չկայացած, Փոփոխված և Չեղարկված դաշտերը) և ըստ դիմելու կարգավիճակի (դիմած, չդիմած):

Մուտքագրվող տվյալներ

**Համակարգի ադմինիստրատոր**

**Գ17-1/Մ**

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|
| Բաժանորդագրության կառավարում | Բացվող դաշտ |
| Առկա մրցույթ | Բացվող դաշտ |
| Հարցում | Բացվող դաշտ |
| Հանձնաժողով | Բացվող դաշտ |

| | |
|---|---|
| Ծանուցում | Բացվող դաշտ |
| Արտոնություն | Բացվող դաշտ |
| Դեր | Բացվող դաշտ |
| Պատվիրատու | Բացվող դաշտ |
| CPV դասակարգիչ | Բացվող դաշտ |

**Գ17-2/Մ**
*Առկա մրցույթ*

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|
| Պատվիրատու | Համակարգի կողմից ավտոմատ ցուցադրվող դաշտ |
| Ծածկագիր | Համակարգի կողմից ավտոմատ ցուցադրվող դաշտ |
| Անվանում | Համակարգի կողմից ավտոմատ ցուցադրվող դաշտ |
| Չափաբաժինների քանակ | Համակարգի կողմից ավտոմատ ցուցադրվող դաշտ |
| Կարգավիճակ | Համակարգի կողմից ավտոմատ ցուցադրվող դաշտ |
| Մանրամասներ | Համակարգի կողմից ավտոմատ ցուցադրվող դաշտ |
| Հ/Հ | Համակարգի կողմից ավտոմատ ցուցադրվող դաշտ/ Ընթացակարգի հերթական համար |

**Գ17-3/Մ**
*Հարցում*
Գ17-2/Մ տվյալներ =>+

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|
| Հարցում | Համակարգի կողմից ավտոմատ ցուցադրվող դաշտ |
| Ժամանակ | Համակարգի կողմից ավտոմատ ցուցադրվող դաշտ |
| Վերջնաժամկետ | Համակարգի կողմից ավտոմատ ցուցադրվող դաշտ |

**Գ17-4/Մ**

*Ծանուցում*

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|
| Թեմա | Համակարգի կողմից ավտոմատ ցուցադրվող դաշտ |
| Պաշտոնապես ուղարկող | Համակարգի կողմից ավտոմատ ցուցադրվող դաշտ |
| Գրանցման ամսաթիվ | Համակարգի կողմից ավտոմատ ցուցադրվող դաշտ |

**Գ17-5/Մ**
*Հանձնաժողով*
Գ17-1/Մ տվյալներ =>+

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|
| Նախագահ | Համակարգի կողմից ավտոմատ ցուցադրվող դաշտ |
| Քարտուղար | Համակարգի կողմից ավտոմատ ցուցադրվող դաշտ |
| Անդամներ | Համակարգի կողմից ավտոմատ ցուցադրվող դաշտ |
| Համար | Որոշման համար / պատվիրատու կողմից խմբագրվող դաշտ/ |

**Գ17-6/Մ**
*Արտոնություն*

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|
| Մոդուլ | Համակարգի կողմից ավտոմատ ցուցադրվող դաշտ |
| Գործառույթ | Համակարգի կողմից ավտոմատ ցուցադրվող դաշտ |
| Պատկերակ | Համակարգի կողմից ավտոմատ ցուցադրվող դաշտ |
| Կարգավիճակ | Ակտիվ/Պասիվ |
| Անվանում | Համակարգի կողմից ավտոմատ ցուցադրվող դաշտ |
| Հ/Հ | Հերթական համար |

**Գ17-7/Մ**

*Դեր*

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|
| Հ/Հ | Համակարգի կողմից ավտոմատ ցուցադրվող դաշտ |
| Արտոնություն | Համակարգի կողմից ավտոմատ ցուցադրվող դաշտ |
| Կարգավիճակ | Ակտիվ/Պասիվ |
| Անվանում | Համակարգի կողմից ավտոմատ ցուցադրվող դաշտ |

**Գ17-8/Մ**
*CPV դասակարգիչ*

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|
| Հ/Հ | Համակարգի կողմից ավտոմատ ցուցադրվող դաշտ |
| Կոդ | Համակարգի կողմից ավտոմատ ցուցադրվող դաշտ |
| Կարգավիճակ | Համակարգի կողմից ավտոմատ ցուցադրվող դաշտ |
| Անվանում | Համակարգի կողմից ավտոմատ ցուցադրվող դաշտ |

**Գ17-9/Մ**
*Պատվիրատու*

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|
| Անվանում | Համակարգի կողմից ավտոմատ ցուցադրվող դաշտ |
| Կարգավիճակ | Համակարգի կողմից ավտոմատ ցուցադրվող դաշտ |
| Հ/Հ | Համակարգի կողմից ավտոմատ ցուցադրվող դաշտ |

**Համակարգող**
**Գ17-10/Մ**
Գ17-1/Մ տվյալներ, բացառությամբ՝ Բաժանորդագրության կառավարում, Արտոնություն, Դեր, պատվիրատու, CPV դասակարգիչ տվյալների

**Գ17-11/Մ**

*Առկա մրցույթ /նույնը Հանձնաժողովի միջերես դեպքում/*
Գ17-2/Մ տվյալներ, բացառությամբ` պատվիրատու

**Գ17-12/Մ**
*Հայցում*
Գ17-3/Մ տվյալներ

**Գ17-13/Մ**
**Հանձնաժողով**
Գ17-5/Մ տվյալներ

**Գ17-14/Մ**
*Ծանուցում /նույնը Հանձնաժողովի միջերես դեպքում/*
Գ17-4/Մ տվյալներ

**Գ17-14/Մ**
*Իմ տվյալներ*

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|
| Բանկ | Խմբագրվող դաշտ |
| Հասցե | Խմբագրվող դաշտ |
| Բանկային հաշիվ | Խմբագրվող դաշտ |
| Կարգավիճակ | Ակտիվ/պասիվ |
| Ավելացնել | Խմբագրվող դաշտ |

**Գ17-15/Մ**
**Մասնակից**

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|
| Բաժանորդագրության կառավարում | Բացվող դաշտ |
| Իմ տվյալները | Բացվող դաշտ/մասամբ խմբագրելի/ |
| Ծանուցում | Բացվող դաշտ |

<table>
<tr><td></td><td><table><tr><td>Մրցույթներ</td><td>Բացվող դաշտ</td></tr></table></td></tr>
<tr><td>Ելքագրվող տվյալներ</td><td>Գ17-1/Ե<br>Գ17-1/Մ-ից Գ17-14/Մ տվյալներ</td></tr>
<tr><td>Վալիդացիա</td><td>Էլեկտրոնային աճուրդների օգտվողների (users) կառավարման դեպքում իրականացվում է հետևյալ տվյալների ստուգում.<br>● «Լեզու» դաշտի արժեքի ստուգում «Հայերեն», «Ռուսերեն», «Անգլերեն» դաշտի արժեքի հետ<br>● «Պատվիրատուի անվանում» դաշտի խմբագրում միայն ռուսերեն/անգլերենի դեպքում</td></tr>
</table>



Ադմինիստրատորի միջերես
Գ17-1/Մ տվյալներ
«CPV դասակարգիչ» դաշտում տեսանելի են արդեն իսկ համակարգում առկա CPV կոդերը իրենց անվանումներով, որոնք խմագրելի են և ենթակա են ավելացման
Մուտք համակարգ
Անհրաժեշտ տվյալների արտացոլում
Անհրաժեշտ տվյալների փնտրում
Տվյալների ցուցադրում համակարգի կողմից




Պատվիրատուի /համակարգողի/ միջերես
Գ17-10/Մ տվյալներ
Մուտք համակարգ
Անհրաժեշտ տվյալների արտացոլում
Անհրաժեշտ տվյալների փնտրում
Տվյալների ցուցադրում համակարգի կողմից
Ընթացակարգերի կառավարում




Պատվիրատու/գնահատող հանձնաժողով
Գ17-13/Մ տվյալներ
Մուտք համակարգ
Անհրաժեշտ տվյալների արտացոլում
Անհրաժեշտ տվյալների փնտրում
Տվյալների ցուցադրում համակարգի կողմից
Գնահատման կառավարում




Մասնակցի միջերես
Գ17-15/Մ տվյալներ
Մուտք համակարգ
Անհրաժեշտ տվյալների արտացոլում
Անհրաժեշտ տվյալների փնտրում
Տվյալների ցուցադրում համակարգի կողմից
Ընթացակարգի կառավարում

| | |
|---|---|
| Ստորաբաժանում | Գնումների քաղաքականության վարչություն |
| Անվանում | Գ18– Էլեկտրոնային աճուրդով գնումներ իրականացնելու դեպքում գնման հայտի նախագծում, համաձայնեցում, ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ստեղծում, հայտարարության և հրավերի հրապարակում |
| Նպատակ | Էլեկտրոնային աճուրդով գնումներ իրականացնելու դեպքում գնման հայտի նախագծում, համաձայնեցում, ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ստեղծում, հայտարարության և հրավերի հրապարակում |
| Տիրույթ | Պատվիրատու, Eauction Էլեկտրոնային աճուրդի համակարգ (այսուհետև՝ Eauction համակարգ) |
| Դերակատարներ | Պատվիրատու, Քարտուղար, Գնահատող հանձնաժողով, Eauction համակարգ |
| Ընթացք 1 | 1. Էլեկտրոնային աճուրդով մրցույթ իրականացնելու համար մրցույթի քարտուղարը PPCM համակարգում «մրցույթներ» բաժնից սեղմում է «ստեղծել նոր մրցույթ» սեղմակը և ընտրում «Էլեկտրոնային աճուրդ (ԷԱ)» գնման ընթացակարգը, այնուհետև լրացնում է անհրաժեշտ տվյալները (ծածկագիր, վերանագիր հայերեն/ռուսերեն/անգլերեն, նկարագրություն, հայտերի ներկայացման վերջնաժամկետ, ժամ, գնման տիպ՝ ապրանք, աշխատանք, ծառայություն և ARMEPS մուտքանուն): Մուտքագրվող «չափաբաժնի անվանում» դաշտում որոնման արդյունքում արտացոլվում են միայն այն չափաբաժինները, որոնք գնումների պլանում վարողի կողմից ներառված են եղել որպես ԷԱճ գնման ձևով գնման առարկաներ: Եթե գնման առարկան համապատասխան CPV կոդով ներառված չէ տեղեկագրի Անվանացանկում, ինչպես նաև Eauction համակարգի ադմինիստրատոր օգտատիրոջ «CPV դասակարգիչ» բաժնում, ապա գնման ընթացակարգ ստեղծելու փուլում PPCM համակարգը ավտոմատ հաղորդագրություն է ներկայացնում սխալի վերաբերյալ (ներքին սխալ):<br>2. PPCM համակարգում մրցույթը ստեղծելուց հետո PPCM-ում կարգավիճակը «Սևագիր» տարբերակից փոխվում է «Առկախ»-ի և մրցույթի տվյալները ավտոմատ փոխանցվում են Eauction համակարգ:<br>3. Համակարգի «Առկա մրցույթ» բաժնում մրցույթի քարտուղարին հասանելի են միայն այն մրցույթները, որոնք PPCM համակարգում ստեղծվել են տվյալ պատվիրատուի, տվյալ քարտուղարի (գնումների համակարգող) համար: Հիմնական ցանկում արտացոլվում են բոլոր առկա մրցույթները և դրանց կարգավիճակները:<br>4. Քարտուղարը Eauction համակարգում կոնկրետ մրցույթի տվյալներին ծանոթանալու համար սեղմում է «Մանրամասներ» կոճակը: «Նոր» կարգավիճակ ունեցող մրցույթի մանրամասների էջի վերին հատվածում արտացոլվում է տվյալ պահի դրությամբ վերջինիս համար մուտքագրված ողջ տեղեկատվությունը (Ստեղծել հանձնաժողով, արձանագրություն, կառավարել, չեղարկել, ցանկ): Մանրամասների էջի ներքևի հատվածում տվյալ մրցույթի չափաբաժիններն են՝ այդ պահի դրությամբ նրանց համար մուտքագրված տեղեկատվությամբ:<br>● «Հանձնաժողով» բաժնում քարտուղարը ստեղծում է գնահատող հանձնաժողով կոնկրետ մրցույթի համար և կառավարում արդեն ստեղծված հանձնաժողովները: Նոր հանձնաժողով ստեղծելու համար մրցույթի կառավարման էջից սեղմում է «Ստեղծել հանձնաժողով» սեղմակը: Բացված էջի ընտրանքի տողերում առաջարկվող ցանկից ընտրում է և մուտքագրում անհրաժեշտ տվյալները (անվանում (Խմբագրելի), համար (Խմբագրելի), քարտուղար (ինքնաշխատ նշված է լինում), առկա մրցույթ (ինքնաշխատ նշված է լինում), հանձնաժողովի նախագահ (ընտրովի դաշտ), անդամներ (ընտրովի դաշտ), ամսաթիվ (լրացվում է գնահատող հանձնաժողովի ստեղծման նիստի որոշման ամսաթիվը)): Մուտքագրված տվյալները պահպանելու համար սեղմում է «Պահել» սեղմակը: Առկա հանձնաժողովի տվյալներում փոփոխություն կատարելու համար սեղմում է «Խմբագրել» սեղմակը: Եթե պետք է ստեղծել նոր |

| | |
|---|---|
| | հանձնաժողով, որի հիմնական տվյալները քիչ են տարբերվում արդեն առկա հանձնաժողովի տվյալներից, ապա կարելի է սեղմել «Կրկնօրինակել» սեղմակը, անել անհրաժեշտ խմբագրումը և սեղմել «Պահել» սեղմակը:<br>● «Արձանագրություն» բաժնում ցանկացած պահի հնարավոր է կցել ընթացակարգի տվյալ փուլի արձանագրությունը: Դրա համար պետք է մրցույթի մանրամասների էջի «Արձանագրություն» կոճակի միջոցով անցում կատարել համապատասխան էջ, ներբեռնել տվյալ ֆայլը և սեղմել «Պահել» սեղմակը:<br>● «Նոր» կարգավիճակով մրցույթի տվյալների մուտքագրման և դրա կառավարման համար պետք է մանրամասներ էջում սեղմել «Կառավարել» կոճակը: Եթե մրցույթը կազմակերպվելու է համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի 2-րդ ենթակետի, ապա քարտուղարը կարող է ինքնուրույն սահմանել ամեն չափաբաժնի նախահաշվային գինը (նախահաշվային գին դաշտում նշում է նախահաշվային գինը): Եթե մրցույթը կազմակերպվելու է համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի 1-ին ենթակետի, ապա քարտուղարը նախահաշվային գին դաշտում նշում է «0», իսկ կառավարման էջում` «15.6» հատվածում նշում է մոտավոր գին` հրավերի ճիշտ տեսքը ստանալու համար: Եթե գնման ընթացակարգը կազմակեպվում է առկա ֆինանսական միջոց ունեցող CPV կոդերով, ապա ընթացակարգի նախահաշվային գինը ավտոմատ գեներացվում է PPCM հանակարգից:<br>● Մրցույթի կառավարման էջի միջերեսում տեսանելի են հետևյալ դաշտերը.<br>○ Ծածկագիր – հայերեն (ոչ խմբագրելի), ռուսերեն, անգլերեն<br>○ Մրցույթ (ընթացակարգի վերնագիր) – ոչ խմբագրելի<br>○ Մրցույթի անվանումը հրավերի համար (ընթացակարգի վերնագիր) - հայերեն (ոչ խմբագրելի), ռուսերեն, անգլերեն<br>○ Մրցույթի անվանումը gnumner.am-ի համար – դաշտում լրացված տվյալները ավտոմատ տեսենելի կդառնա տեղեկագրում, որպես հայտարարություն հրավերի վերնագիր<br>○ Հանձնաժողովի որոշում -որոշման համար (տեքստային դաշտ), ամսաթիվ (օրացուցային դաշտ)<br>○ Հայտերի ընդունման վերջնաժամկետ – օրացուցային դաշտ, ժամը ֆիքսելու հնարավորությամբ<br>○ Փոխարժեք – ըստ ռուբլու, եվրոյի և դոլարի (թվային դաշտ)<br>○ Կանխավճար -պահանջում է, չի պահանջում<br>○ Ապրանքային նշան - պահանջում է, չի պահանջում /միայն ապրանք գնման ձևի դեպքում/<br>○ Փիրմայի անվանում- պահանջում է, չի պահանջում /միայն ապրանք գնման ձևի դեպքում/<br>○ Մակնիշ - պահանջում է, չի պահանջում /միայն ապրանք գնման ձևի դեպքում/<br>○ Արտադրող- պահանջում է, չի պահանջում /միայն ապրանք գնման ձևի դեպքում/<br>○ 15.6 – մինչև 25 մլն դրամ, 25 մլն դրամից ավել, 70 մլն դրամից ավել /տեսանելի է եթե առանց ֆինանսական միջոցով գնման առարկայի նախահաշվային գինը զրո է/<br>○ Հայտի ապահովում – պահանջվում է, չի պահանջվում /տեսանելի է եթե առանց ֆինանսական միջոցով գնման առարկայի նախահաշվային գինը բարձր է 25մլն-ից/<br>○ Պայմանագրի կատարում- Փուլային կամ Մեկանգամյա Վճարումով /բանկային երաշխիքով որակավորման ապահովման հավելվածներ/<br>○ Բանկային ռեկվիզիտներ- դաշտերում պետք է ընտրել նշված գործարքների համար Պատվիրատուի բանկային ռեկվիզիտներ<br>○ Անգործության առավելագույն ժամկետը (օր)- չի կարող պակաս լինել 10 օրից (թվային դաշտ)<br>○ Հանձնման ընդունման արձանագրության ժամկետ - (թվային դաշտ) |

| | |
|---|---|
| | ○ Երաշխիքային ժամկետ- անհրաժեշտ է մուտքագրել հիմնական միջոց հանդիսացող ապրանքի համար երաշխիքային ժամկետը (թվային դաշտ)<br>○ «Տեխնիկական բնութագրեր» դաշտում կարող է լրացվել ինչպես կոնկրետ չափաբաժնի համապատասխան վանդակում տեխնիկական բնութագիրը, այնպես էլ առանձին ֆայլով կցել այն: Եթե որևէ չափաբաժնի համար կցվում է տեխնիկական բնութագիրը պարունակող ֆայլ, ապա տվյալ ֆայլը պետք է պարունակի տեխնիկական առաջադրանքի և՛ հայերեն, և՛ ռուսերեն տարբերակները: Տեխնիկական բնութագրի տեքստային դաշտը երկու լեզվով պարտադիր լրացման դաշտ է:<br>○ Մատակարարման դաշտում լրացվում է մատակարարման հասցեն, ենթակա քանակները (միայն ապրանք գնման ձևի դեպքում) և ժամկետները: Դաշտում այլ պայմաններ սահմանելու դեպքում, կարող է «+» կոճակով ավելացվել մատակարարման համար նոր դաշտեր:<br>○ Վճարման ժամանակացույց աղյուսակում լրացվում են նախատեսվող վճարումները՝ ըստ ամիսների: Առանց ֆինանսական միջոցների վճարման ժամանակացույցը ակտիվ չէ:<br>○ Մրցույթի կառավարման էջի վերևի աջ անկյունի «Նքվելիք պայմանագիր» գործիքում համակարգողը տեսնում է Պայմանագրի նախագծի օրինակելի ձևը: Բոլոր այն դաշտերը, որոնք խմբագրելի են, նշված են կարմիր գույնով: Խմբագրելու համար ուղղակի պետք է սեղմել մկնիկի ձախ սեղմակը տվյալ դաշտի վրա և խմբագրել այն: *Եթե իրականացվում է որևէ փոփոխություն հայերեն տարբերակում, պետք է իրականացնել համապատասխան փոփոխություն նաև ռուսերեն տարբերակում անհամապատասխանություններից խուսափելու համար: Պայմանագրի լեզուն հնարավոր է փոփոխել պատուհանի վերևի աջ անկյունում տեղադրված ARM, RUS կոճակների վրա սեղմելով: Փոփոխությունների ավարտից հետո համակարգողը պետք է սեղմի «Պահել» կոճակը փոփոխությունը հաստատելու համար, ինչպես նաև ցանկացած պահի կարող է բեռնել և տեսնել արդեն իսկ փոփոխված տարբերակը «Բեռնել» կոճակի միջոցով: Եթե համակարգողը ցանկանում է Պայմանագիրը հետ վերադարձնել նախնական տարբերակի, կարող է սեղմել «Վերականգնել» կոճակը: Գործողությունների ավարտից հետո պետք է փակել պատուհանը «Փակել» կոճակի միջոցով:<br>5. Ցանկացած դաշտում տեղեկատվության մուտքագրումից հետո հնարավոր է սեղմել «Նախադիտել» կոճակը: Համակարգը դիտարկիչի էջում կներկայացնի իրավերի ֆայլային տարբերակը, որտեղ կարմիր գույնով տեսանելի են այն դինամիկ դաշտերը, որոնց համար դեռ տեղեկություն չի լրացվել, իսկ դեղին գույնով նրանք, որոնց համար արդեն կա մուտքագրված տվյալ:<br>6. Մրցույթի կառավարման փուլում կատարված փոփոխությունները պահպանելու համար պետք է սեղմել «Պահել» կոճակը: Հայտարարությունը հրապարակելու համար անհրաժեշտ է սեղմել «Հրապարակել» կոճակը: Մրցույթի կարգավիճակն ինքնաշխատ եղանակով կդառնա «Հրապարակված»:<br>7. Համակարգն ինքաշխատ հաշվում և այս էջում ցույց է տալիս հակադարձ աճուրդի մեկնարկի, ինչպես նաև հարցումներին արձագանքելու օրն ու ժամը: Հարցմանը պատասխանելու համար պետք է սեղմել տողի աջ անկյունի մանրամասների «>» կոճակը: «Հարցման մանրամասներ» էջում հնարավոր է ընտրել հարցմանն արձագանքելու երեք տարբերակներից մեկը (Պասիվացնել, Պատասխանել, Պարզաբանել): «Պասիվացնել» և «Պատասխանել» կոճակների միջոցով ուղարկված պատասխանը հասանելի է լինելու միայն հարցում ուղարկած մասնակցին: «Պարզաբանում» կոճակի միջոցով ուղարկվում են պաշտոնական պարզաբանումները, որոնք հասանելի են մրցույթին դիմած բոլոր մասնակիցներին և հրապարակվում են գնումների պաշտոնական տեղեկագրում: Պարզաբանում ավելացնելիս պարտադիր է պարզաբանման և՛ հայերեն, և՛ ռուսերեն տարբերակները: Համակարգում ներմուծված են տարածված հարցումների պատասխանների օրինակելի նմուշներ, որոնք կարող եք գտնել «Արագ պատասխաններ» տողում: |

<table>
<tr>
<td></td>
<td>
8. Օրենքով սահմանված կարգով և ժամկետներում Պատվիրատուի օգտատերը կարող է կատարել փոփոխություններ արդեն հրապարակված մրցույթում: Դրա համար պետք է սեղմել հրապարակված մրցույթի մանրամասների էջի «Փոփոխել» կոճակը: Համակարգը կուղղորդի դեպի «Մրցույթի փոփոխություն» էջ, որն ունի նույն ֆունկցիոնալությունը, ինչ մրցույթի կառավարման էջը: Անհրաժեշտ փոփոխությունները կատարելուց հետո պետք է կցել փոփոխման փաստաթուղթը և սեղմել «Հրապարակել փոփոխությունը» կոճակը: Համակարգն ինքնաշխատ եղանակով առկա մրցույթների ցանկում կստեղծի նոր մրցույթ՝ հաշվի առնելով կատարված փոփոխությունները:<br>
9. Օրենքով սահմանված կարգով և ժամկետներում հնարավոր է չեղարկել հրապարակված և «Նոր» կարգավիճակ ունեցող մրցույթները: Դրա համար անհրաժեշտ է հրապարակված կարգավիճակ ունեցող («Նոր» կարգավիճակ ունեցող) մրցույթի մանրամասների էջի վերին աջ անկյունում սեղմել «Չեղարկել» կոճակը: Բացված էջում պետք է կցել անհրաժեշտ փաստաթուղթը և սեղմել «Չեղարկել» կոճակը:<br>
10. Մինչև հայտերի ընդունման վերջնաժամկետը ընթացակարգի վերաբերյալ բողոքարկումներ լինելու դեպքում համակարգողը կարող է Հաստատել բողոքարկումը՝ համակարգում էկրանի վերին աջ հատվածում տեղադրված «Հաստատել բողոքարկումը» կոճակի միջոցով (որից հետո էկրանի վերևի աջ հատվածում կհայտնվի «Հաստատված է բողոքարկում» կոճակը): Բողոքարկման հաստատման դեպքում Հայտերի ընդունման վերջնաժամկետից հետո կկասեցվեն բոլոր գործնթացները մինչև բողոքարկման արդյունքի ներմուծում: Տվյալ գործողությունը չի կասեցնում հայտերի ընդունման գործընթացը: Բողոքարկման արդյունքի պարզ դառնալուց հետո համակարգողը պետք է սեղմի «Հաստատված է բողոքարկում» կոճակը և բացված պատուհանում ընտրի «Շարունակել», եթե բողոքարկումը մերժվել է և «Չեղարկել ընթացակարգը», եթե այն բավարարվել է: Շարունակելու դեպքում համակարգը ավտոմատ կերպով կվերաբացի բոլոր կասեցված գործողությունները և կուղարկի բոլոր ծանուցումները: «Չեղարկել ընթացակարգը» սեղմակի դեպքում համակարգողը կցում է փաստաթուղթը և չեղարկում ընթացակարգը:<br>
11. Հայտերի ընդունման ժամկետը լրացած մրցույթների կարգավիճակը ինքնաշխատ եղանակով փոխվում է, և մրցույթը ստանում է «Նախաաճուրդային» կարգավիճակ: Առցանց աճուրդի ժամանակացույցին ծանոթանալու համար պետք է սեղմել մրցույթի մանրամասների էջի «Աճուրդ» կոճակը:<br>
12. Սահմանված ժամկետի լրանալուց հետո ինքաշխատ եղանակով կբացվի առցանց աճուրդի էջը, որտեղ տեսանելի են մրցույթի չափաբաժինների մեկնարկային գները: Միաժամանակ կարող է ընթանալ մինչև վեց չափաբաժնի առցանց աճուրդ, որոնց անցկացման ժամկետ է սահմանված 30 րոպեն: Վեցից ավել չափաբաժինների դեպքում հաջորդ վեց չափաբաժինների համար առցանց աճուրդը մեկնարկում է այդ ժամկետի լրանալուց անմիջապես հետո: Մասնակիցները գնառաջարկ ներկայացնելու համար ունեն 5 րոպե ժամանակ: Չափաբաժնի համար ամեն նոր գնառաջարկից հետո այդ չափաբաժնի քայլի ժամանակը թարմացվում է 5 րոպեով: 5 րոպե անգործությունից հետո, եթե ոչ մի մասնակից գնառաջարկ չի ներկայացրել, ապա այդ չափաբաժնի մասով աճուրդն ավարտվում է: Եթե բոլոր չափաբաժինների համար աճուրդը ավարտվել է անգործության ժամկետի լրանալուց հետո, միևնույն է չափաբաժինների հաջորդ խմբի աճուրդը կմեկնարկի միայն 30 րոպեի լրանալուց հետո: Եթե չափաբաժինների քանակը չի սպառվում մինչև աշխատանքային օրվա ավարտը, ապա մյուս չափաբաժինների համար աճուրդ կազմակերպվում է հաջորդ աշխատանքային օրը: Առցանց աճուրդի ավարտից հետո տվյալ մրցույթի համար սկսվում է գնահատման գործընթացը, և այն ստանում է «Դիմում-Հայտարարության գնահատում» կարգավիճակը:
</td>
</tr>
<tr>
<td>Մուտքագրվող տվյալներ</td>
<td>
Գ18-1/Մ<br>
Ընթացակարգի կարգավիճակ՝ Նոր
<table>
<tr><th>Տվյալ</th><th>Նկարագրություն</th></tr>
</table>
</td>
</tr>
</table>

| | |
|---|---|
| Ծածկագիր | Համակարգի կողմից գեներացվող դաշտ /ավտոմատ ARMEPS համակարգից մուտքագրված/ |
| Անվանում | Համակարգի կողմից գեներացվող դաշտ /ավտոմատ ARMEPS համակարգից մուտքագրված/ |
| Չափաբաժինների քանակ | Համակարգի կողմից գեներացվող դաշտ /ավտոմատ ARMEPS համակարգից մուտքագրված/ |
| Կարգավիճակ | Համակարգի կողմից գեներացվող դաշտ/ավտոմատ ARMEPS համակարգից մուտքագրված/ |
| Մանրամասներ (>) | Բացվող դաշտ |

**Գ18-2/Մ**

*Ընթացակարգի կարգավիճակ՝ Նոր*

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|
| Մրցույթ | Համակարգի կողմից գեներացվող դաշտ |
| Մրցույթի անվանում հրավերի համար | Տեքստային դաշտ (հայերեն/ռուսերեն/անգլերեն) |
| Մրցույթի անվանումը gnumner.am-ի համար | Տեքստային դաշտ (հայերեն/ռուսերեն/անգլերեն) |
| Հանձնաժողովի որոշում | Տեքստային և օրացուցային դաշտեր |
| Հայտերի ընդունման վերջնաժամկետ | օրացուցային դաշտ, ժամը ֆիքսելու հնարավորությամբ |
| Փոխարժեք | ըստ ռուբլու, եվրոյի և դոլարի |
| Ապրանքային նշան | Ընտրովի դաշտ /Չի պահանջում, պահանջում է/ |
| Արտադրող | պահանջում է, չի պահանջում /միայն ապրանք գնման ձևի դեպքում/ |
| Մակնիշ | պահանջում է, չի պահանջում /միայն ապրանք գնման ձևի դեպքում/ |
| Ֆիրմայի անվանումը | պահանջում է, չի պահանջում /միայն ապրանք գնման ձևի դեպքում/ |
| Կանխավճար | պահանջում է, չի պահանջում |

| | |
|---|---|
| Պայմանագրի կատարումը | Փուլային կամ Մեկանգամյա Վճարումով /բանկային երաշխիքով որակավորման ապահովման հավելվածներին/ |
| 15.6 | մինչև 25 մլն դրամ, 25 մլն դրամից ավել, 70 մլն դրամից ավել / տեսանելի է եթե առանց ֆինանսական միջոցով գնման առարկայի նախահաշվային գինը զրո է/ |
| Բանկային ռեկվիզիտներ | դաշտերում պետք է ընտրել նշված գործարքների համար պատվիրատուի բանկային ռեկվիզիտներ |
| Անգործության առավելագույն ժամանակ /օր/ | թվային դաշտ /չի կարող պակաս լինել 10 օրից/ |
| Հանձնման-ընդունման արձանագրության ժամկետը | թվային դաշտ |
| Երաշխիքային ժամկետ | թվային դաշտ /անհրաժեշտ է մուտքագրել հիմնական միջոց հանդիսացող ապրանքի համար երաշխիքային ժամկետը/ |
| Գնման ժամանակացույց | Օրացուցային դաշտ |
| Տեխնիկական բնութագիր | կարող է լրացվել ինչպես կոնկրետ չափաբաժնի համապատասխան վանդակում լրացնել տեխնիկական բնութագիրը, այնպես էլ առանձին ֆայլով կցել այն: Եթե որևէ չափաբաժնի համար կցվում է տեխնիկական բնութագիրը պարունակող ֆայլ, ապա տվյալ ֆայլը պետք է պարունակի տեխնիկական առաջադրանքի և՛ հայերեն, և՛ ռուսերեն տարբերակները: Տեխնիկական բնութագրի տեքստային դաշտը երկու լեզվով էլ պարտադիր լրացման դաշտ է: |
| Վճարման ժամանակացույց | Լրացվում են նախատեսվող վճարումները՝ ըստ ամիսների: Առանց ֆինանսական միջոցների վճարման ժամանակացույցը ակտիվ չէ: |

**Գ18-3/Մ**

*Ընթացակարգի կարգավիճակ՝ Հրապարակված*

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|
| Հարցում | Տեքստային դաշտ/Համակարգի կողմից գեներացվող դաշտ |

| | |
|---|---|
| Ժամանակ | Օրացուցային դաշտ/Համակարգի կողմից գեներացվող դաշտ |
| Պատասխան | Տեքստային դաշտ |
| Պարզաբանում | Տեքստային դաշտ |
| Պասիվ | Տեքստային դաշտ |

**Գ18-4/Մ**
*Ընթացակարգի կարգավիճակ՝ Հրապարակված*
Գ18-3/Մ տվյալներ =>+

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|
| Հարցում | Տեքստային դաշտ (հայերեն/ռուսերեն/անգլերեն) |
| Ժամանակ | Օրացուցային դաշտ |
| Վերջնաժամկետ | Օրացուցային դաշտ |
| Կարգավիճակ | Նոր |
| Պասիվ | Տեքստային դաշտ |
| Արագ պատասխան | Տեքստային դաշտ |
| Պարզաբանում | Տեքստային դաշտ (հայերեն/ռուսերեն) |

**Գ18-5/Մ**
*Ընթացակարգի կարգավիճակ՝ Հրապարակված*

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|
| Փոփոխել | Մուտքագրվող դաշտ (պարտադիր ֆայլ կցելու պահանջ) |
| Հաստատել բողոքարկում | Մուտքագրվող դաշտ (այո/ոչ) |
| Հաստատված է բողոքարկում | Մուտքագրվող դաշտ (շարունակել / չեղարկել) |
| Ցանկ | Հղում դեպի «Առկա մրցույթ» բաժին |

| | |
|---|---|
| Արձանագրություն | ֆայլ կցելու դաշտ |
| Չեղարկել | ֆայլ կցելու դաշտ |

**Գ18-6/Մ**
*Ընթացակարգի կարգավիճակ՝ Աճուրդ*
Գ18-5/Մ, *բացառությամբ՝ Հաստատել բողոքարկում, Հաստատված է բողոքարկում չեղարկել դաշտերի =>+*

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|
| Աճուրդ | Դիտարկման դաշտ |

Ելքագրվող տվյալներ

**Գ18-1/Ե**

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|
| Ծածկագիր | Համակարգի կողմից գեներացվող դաշտ |
| Անվանում | Համակարգի կողմից գեներացվող դաշտ |
| Պատվիրատու | Համակարգի կողմից գեներացվող դաշտ |
| Գնման տեսակ | Համակարգի կողմից գեներացվող դաշտ |
| Փոխարժեք | Համակարգի կողմից գեներացվող դաշտ |
| Պատասխաններ և պարզաբանումներ | Համակարգի կողմից գեներացվող դաշտ |
| Հրավեր | Բեռնվող ֆայլ |
| Հրապարակման ժամանակ | Օրացուցային դաշտ |
| Հայտերի ընդունման վերջնաժամկետ | Օրացուցային դաշտ |
| Արձանագրություն | Օրացուցային դաշտ |
| Հակադարձ աճուրդ | Օրացուցային դաշտ |
| Հարցման արձագանքի վերջնաժամկետ | Օրացուցային դաշտ |
| Կարգավիճակ | Հրապարակված |

<table>
<tr><td></td><td><table><tr><td>CPV</td><td>Համակարգի կողմից գեներացվող դաշտ</td></tr><tr><td>Տեխնիկական առաջադրանք</td><td>Համակարգի կողմից գեներացվող դաշտ</td></tr></table></td></tr>
<tr><td>Վալիդացիա</td><td>Էլեկտրոնային աճուրդով գնումներ իրականացնելու դեպքում գնման հայտի նախագծման, համաձայնեցման, ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ստեղծման, հայտարարության և հրավերի հրապարակման դեպքում իրականացվում է հետևյալ տվյալների ստուգում.<br>● ԷԱՃ-ի դեպքում «CPV կոդ»-ի առկայության ստուգում Էլեկտրոնային աճուրդների համակարգում<br>● «ARMEPS մուտքանուն» դաշտի արժեքի ստուգում «ARMEPS» համակարգում առկա մուտքանվան արժեքի հետ</td></tr>
</table>



| | |
|---|---|
| Ստորաբաժանում | Գնումների քաղաքականության վարչություն |
| Անվանում | Գ19– Eauction էլեկտրոնային համակարգի միջոցով գնման ընթացակարգին մասնակցության դեպքում ստացված հայտերի գնահատում, անգործություն, պայմանագրի շնորհում, պայմանագրի կնքում, ընթացակարգի ամփոփում, ծանուցումներ |
| Նպատակ | Էլեկտրոնային համակարգի միջոցով գնման ընթացակարգին մասնակցության դեպքում ստացված հայտերի գնահատում, անգործություն, պայմանագրի շնորհում, պայմանագրի կնքում, ընթացակարգի ամփոփում, ծանուցումներ |
| Տիրույթ | Պատվիրատու, Eauction Էլեկտրոնային աճուրդի համակարգ (այսուհետև՝ Eauction համակարգ) |
| Դերակատարներ | Պատվիրատու, Քարտուղար, գնահատող հանձնաժողով, Eauction համակարգ |
| Ընթացք 1 | 1. Մրցույթի մանրամասների էջի վերին հատվածում արտացոլվում են մրցույթի և դրա չափաբաժինների մասին հիմնական տեղեկատվությունը: Մրցույթի մանրամասների էջի ստորին հատվածի «Գնառաջարկներ» աղյուսակում արտացոլվում են մրցույթի դիմած մասնակիցների անվանումները (սեղմելով մասնակցի անվան վրա՝ կարելի է անցում կատարել նրա տվյալների մանրամասների էջ), մասնակցի կողմից կցված փաստաթղթերը, ապրանք գնման ձև մրցույթների դեպքում նաև ապրանքի ամբողջական նկարագիրը, գնառաջարկները ըստ չափաբաժինների (նախնական և վերջնական):<br>2. Հանձնաժողովի անդամները միայն գնահատում են հակադարձ աճուրդի ընթացքում առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների Դիմում-Հայտարրությունները և ստուգում դրանց համապատասխանությունը հրավերի պահանջներին: Դիմում-Հայտարարության գնահատման համար հարկավոր է մրցույթի մանրամասների վերին աջ անկյունում սեղմել «Դիմում-Հայտարարության գնահատում» կոճակը և անցում կատարել գնահատման էջ: Գնահատման համար անհրաժեշտ է կատարել համապատասխան նշում կոնկրետ մասնակցի տողի «Գնահատում» սյունակում՝ տալով «բավարար» և «անբավարար» գնահատական: «Անբավարար» գնահատման ժամանակ «Մեկնաբանություն» դաշտը պարտադիր է լրացման համար, ընդ որում մեկնաբանություն դաշտում գրում է տվյալ մասնակցի փաթեթում արձանագրված բոլոր անհամապատասխանությունների մասին: Հանձնաժողովի անդամը մինչև քարտուղարի կողմից գնահատման ամփոփումը կարող է վերանայել իր գնահատականը՝ մրցույթի մանրամասների էջից կրկին մուտք |

գործելով գնահատման էջ: Գնահատման ամփոփման համար անհրաժեշտ է սեղմել մրցույթի մանրամասների էջի «Դիմում-Հայտարարության գնահատման ամփոփում» կոճակը և բացված էջում սեղմել «Պահել» կոճակը: Քարտուղարը չի կարող ամփոփել փուլը, քանի դեռ հանձնաժողովի բոլոր անդամները չեն գնահատել մասնակիցների Դիմում-Հայտարարությունը: Հավասար ձայների դեպքում նախագահի ձայնը որոշիչ է Եթե հանձնաժողովի անդամների մեծամասնությունը մասնակցին տալիս է անբավարար գնահատական, ապա քարտուղարը պետք է «Պահել» կոճակը սեղմելուց առաջ մեկնաբանություն դաշտում պարտադիր նշում անի: Դրանից հետո համապատասխան մասնակիցը կստանա ծանուցում այն մասին, որ իր Դիմում-Հայտարարության մեջ նկատվել են թերություններ, որոնք անհրաժեշտ է ուղղել:

3. Մասնակցին շտկում տալով ընթացակարգի կարգավիճակը մասնակցի էջում դառնում է դիմում-հայտարարության շտկում, պատվիրատուի մոտ՝ մինչև դիմում-հայտարարության շտկման գնահատում:
4. Մասնակցի կողմից ուղղված տարբերակի ուղարկումից հետո հանձնաժողովի անդամները նորից գնահատում են այն (գնահատման էջում ցույց է տրվում միայն նշված մասնակցի փաթեթը): Մրցույթն այս փուլում ստանում է «Դիմում-Հայտարարության շտկման գնահատում» կարգավիճակը: Գնահատման կառավարման համար պետք է սեղմել մանրամասների էջի վերին աջ անկյունի «Դիմում-Հայտարարության շտկման գնահատում» կոճակը: Շտկման գնահատման ժամանակ հանձնաժողովի անդամները հնարավարություն ունեն գնահատելու ինչպես հայտի փաթեթը ամբողջությամբ, այնպես էլ ըստ առանձին չափաբաժինների: Շտկման գնահատումից հետո քարտուղարը կրկին ամփոփում է փուլը: Եթե մասնակիցը կրկին գնահատվել է անբավարար, ապա նրա հայտը (կամ տվյալ չափաբաժինը) մերժվում է, իսկ այն չափաբաժինները, որոնցում մասնակիցը զբաղեցրել էր առաջին տեղը, համարվում են չկայացած: Մերժման ենթակա են նաև շտկման փուլում փաստաթուղթ չուղարկած մասնակիցները:
5. Գնահատումն ամփոփելուց հետո, ընթացակարգը ստանում է «Շնորհում» կարգավիճակ: Բավարար գնահատված մասնակիցը համարվում է ընտրված և նրա համար սկսվում է պայմանագրի շնորհման փուլը այն չափաբաժինների համար, որոնց մասով հայտը գնահատվել է բավարար: Քարտուղարն ունի հնարավորություն խմբավորելու մասնակցի՝ դրական գնահատված չափաբաժինները՝ դրանց համար առաջարկելով ինչպես միասնական, այնպես էլ՝ մեկից ավելի պայմանագրեր: Շնորհման կառավարման համար պետք է մրցույթի մանրամասների էջի ներքևի աջ անկյունում սեղմել համապատասխան կոճակը (սլաքը), որը հնարավորություն կտա շնորհում կատարել: Եթե գոյություն ունի այնպիսի չափաբաժին, որին դիմել են մեկից ավելի մասնակցից, ապա ինքնաշխատ ձևով սահմանվում է անգործության ժամկետ: Մասնակցին կառաջարկվի  կնքել պայմանագիր անգործության ժամկետի ավարտից հետո, տալով հնարավորություն նաև այն չափաբաժինների մասով, որոնց համար անգործության ժամկետ սահմանված չէ, սկսել պայմանագրի շնորհման գործառույթը: Եթե կա անհրաժեշտություն ընտրված մասնակից ճանաչված մասնակցի հետ կնքել մեկից ավել պայմանագիր՝ խմբավորելով չափաբաժինները, ապա քարտուղարը «Կառավարել շնորհումը» էջում յուրաքանչյուր չափաբաժնի տողի «Խումբ» սյունակում նշում է թե ինչպես պետք է դրանք խմբավորվեն, և եթե որևէ չափաբաժնով գոյություն ունի կանխավճար, ապա «Կանխավճար(%)» դաշտում պետք է լրացվի կանխավճարի տոկոսի չափը: Նույն խմբում ներառված չափաբաժինների համար ընտրված մասնակցին կառաջարկվի կնքել մեկ միասնական պայմանագիր: Պայմանագրի շնորհման փուլին անցնելու համար օգտատերը պետք է մուտք գործի մրցույթի մանրամասների էջ, որի «Շնորհում» աղյուսակում չափաբաժիններով խմբավորված պայմանագրերն են: Յուրաքանչյուր պայմանագրի շնորհման էջ մուտք գործելու համար պետք է սեղմել դրա տողի աջ անկյունում գտնվող մանրամասների (>) կոճակը: «Շնորհում» էջի վերին հատվածում մրցույթի մասին հիմնական տեղեկատվությունն է: «Պայմանագիր» տողից կարելի է բեռնել համակարգի կողմից ինքնաշխատ գեներացված պայմանագրի նախագծերը (հայերենով, ռուսերենով): Էջի ներքևի հատվածի «Հաղորդագրություն» դաշտում պայմանագրի կնքման առաջարկ ստացած մասնակցի օգտատերը կարող է ուղարկել հարցումներ և առաջարկներ պայմանագրի վերաբերյալ, որոնց,

<table>
<tr>
<td></td>
<td>նույն դաշտի միջոցով պատասխանում է հանձնաժողովի քարտուղարը: Հաղորդագրության ուղարկման համար պետք է սեղմել «Ուղարկել» կոճակը: Պայմանագրի՝ Պատվիրատուի կողմից ստորագրված տարբերակի կցումից հետո այն հայտնվում է «Վերջնական պայմանագիր» տողում: Պայմանագրի երկկողմանի ստորագրումից հետո օգտատերերն այլևս չունեն հաղորդագրություններ ուղարկելու հնարավորություն: Մրցույթի ավարտից հետո 1 ժամվա ընթացքում համակարգը ավտոմատ կերպով տեղադրում է մրցույթի վերաբերյալ տեղեկատվությունները armeps.am/ppcm համակարգի համապատասխան բաժիններում:<br>6. Աճուրդի ընթացքում ինքնաշխատ եղանակով գեներացված փաստաթղթերը ինչպիսիք են՝ հրավերը, փոփոխված հրավեր, չկայացած գնման ընթացակարգի մասին, պայմանագիր կքնելու որոշման մասին, կնքված պայմանագրի մասին հայտարարություններ, պարզաբանում տալու մասին հղումը, փոփոխման հիմքը իրենց համապատասխան վերնագրերով ինքնաշխատ կերպով հրապարակվում են gnumner.am կայքում: Քարտուղարի կողմից գնահատումն ամփոփելուց, «Որոշման համար» դաշտը լրացնելուց և պահպանելուց հետո ավտոմատ գեներացվում է պայմանագիր կնքելու մասին հայտարարությունը: Որոշման համարը պարտադիր լրացման դաշտ է, որի լրացնելուց հետո միայն համակարգը թույլ կտա պահպանել ամփոփումը: Չկայացած գնման ընթացակարգի մասին հայտարարությունը գեներացվում է այն ժամանակ, երբ քարտուղարը ամփոփում է գնահատման արդյունքները՝ սեղմելով «Չկայացած ընթացակարգ» սեղմակը, լրացնելով հիմքերը ըստ չկայացած չափաբաժինների (1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ): Հայտարարությունը կգեներացվի ընդգրկելով տվյալ աճուրդի բոլոր չկայացած չափաբաժինների ինֆորմացիան: Կնքված պայմանագրի մասին հայտարարության գեներացումը համակարգում կատարվում է «Կնքված պայմանագրի մասին հայտարարություն» առաջադրանքով՝ առկա դաշտերի լրացմամբ (նշված առաջադրանքը տեսանելի է, երբ ընթացակարգի կարգավիճակը «Ավարտված» է):<br>7. «Կնքված պայմանագրի մասին հայտարարություն» առաջադրանք մուտք գործելով և «Հանրային հսկողության պահանջ ներկայացնելու համար տրամադրվող ժամկետ» (նվազագույնը 3 օր), էլ. փոստ, Մասնակիցների ներգրավման նպատակով Գնումների մասին ՀՀ օրենքի համաձայն իրականացված հրապարակումների մասին տեղեկությունները (հայերեն և ռուսերեն), Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ հայտնաբերվելու դեպքում դրանց և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողությունների համառոտ նկարագիրը (հայերեն և ռուսերեն), Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքները և դրանց վերաբերյալ կայացված որոշումները (հայերեն և ռուսերեն), Այլ անհրաժեշտ տեղեկություններ (հայերեն և ռուսերեն) դաշտերը լրացնելով և «պահել» սեղմակով գեներանում է Կնքված պայմանագրի մասին հայտարարությունը և հրապարակվում է տեղեկագրում:<br>8. Էլեկտրոնային գնումների PPCM համակարգում հնարավոր է ընթացակարգի մասով ըստ մասնակիցների հաշվետվություններ լրացնել ոչ միայն այն ժամանակ, երբ Eauction համակարգում ընթացակարգի կարգավիճակը «Ավարտված» է, այլ նաև երբ շնորհման փուլում պայմանագրերը երկկողմանի ստորագրված և ավարտված են:<br>9. Աճուրդի ընթացքում ինքնաշխատ եղանակով համակարգը ստեղծում է ծանուցումներ իր համապատասխան բովանդակությամբ հետևյալ վերնագրերով՝ «մրցույթը հրապարակված է», «հակադարձ աճուրդի ժամանակացույց», «Հակադարձ աճուրդի ավարտ», «Նախահաշվային գնի գերազանցում», «մինիմալ գնի կրկնություն», «Անգործության ժամկետի սկսելու մասին», «Արձանագրություն», «Էլեկտրոնային աճուրդի չկայացած լինելու մասին», «Նոր հարցում», «Հայտի մերժում», «Չկայացած չափաբաժին», «Պայմանագիր կնքելու վերաբերյալ առաջարկ», «Անգործության ժամկետի սկսելու մասին», «Էլեկտրոնային աճուրդի ավարտվելու մասին»:</td>
</tr>
<tr>
<td>Մուտքագրվող տվյալներ</td>
<td>Գ19-1/Մ<br>Համակարգողի միջերես<table><tr><th>Տվյալ</th><th>Նկարագրություն</th></tr></table></td>
</tr>
</table>

| | |
|---|---|
| Ծածկագիր | Համակարգի կողմից գեներացվող դաշտ/ ներմուծված PPCM համակարգից |
| Անվանում | Համակարգի կողմից գեներացվող դաշտ/ ներմուծված PPCM համակարգից |
| Պատվիրատու | Համակարգի կողմից գեներացվող դաշտ |
| Գնման տեսակ | Համակարգի կողմից գեներացվող դաշտ/ ներմուծված PPCM համակարգից |
| Փոխարժեք | Համակարգի կողմից գեներացվող դաշտ/ ներմուծված հրավերից |
| Պատասխաններ և պարզաբանումներ/հարցում, ժամանակ, պատասխան, պարզաբանում, պասիվ | Համակարգի կողմից գեներացվող դաշտ |
| Հրավեր | Համակարգի կողմից գեներացվող ֆայլ |
| Հրապարակման ժամկետ | Համակարգի կողմից գեներացվող դաշտ |
| Հայտի ընդունման վերջնաժամկետ | Համակարգի կողմից գեներացվող դաշտ |
| Արձանագրություն/ ժամանակ, փաստաթուղթ/ | Համակարգում բեռնված արձանագրություն, բեռնման ժամկետ, կցված փաստաթուղթ |
| Հակադարձ աճուրդ | Համակարգի կողմից գեներացվող դաշտ/ օրացուցային դաշտ |
| Հարցման արձագանքի վերջնաժամկետ | Համակարգի կողմից գեներացվող դաշտ/ օրացուցային դաշտ |
| Կարգավիճակ | Համակարգի կողմից գեներացվող դաշտ / տվյալ փուլում ընթացակարգի կարգավիճակ |
| Չափաբաժնի համար | Հերթական համար |
| CPV | Ներմուծված PPCM համակարգից |
| Անվանում | Հայերենը ներմուծված PPCM համակարգից, ռուսերեն միջերեսում՝ խմբագրված հրավերով |

| | |
|---|---|
| Քանակ | Ներմուծված PPCM համակարգից |
| Տեխնիկական բնութագիր | ներմուծված հրավերից |
| Զբաղեցրած տեղ | Ըստ գնային առաջարկի/ թվային դաշտ |
| Ներկայացրած հայտեր | Մասնակիցների անվանում, կցված փաստաթուղթ, ապրանքի դեպքում՝ ապրանքի ամբողջական նկարագիր |
| Ընկերություն | Համակարգի կողմից գեներացվող դաշտ, կից ֆայլ |
| Նախահաշվային գին | Թվային դաշտ |
| Նախնական առաջարկ /Արժեք, ԱԱՀ, Գին/ | Թվային դաշտ |
| Վերջին առաջարկ /Արժեք, ԱԱՀ, Գին/ | Թվային դաշտ |
| Մասնակցի կարգավիճակ | Մերժված, «-» |
| Շնորհման կառավարում | > |

**Գ19-2/Մ**
*Համակարգող/դիմում-հայտարարության գնահատման ամփոփում*

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|
| Ծածկագիր | Թվային արժեք |
| Մրցույթ | Համակարգի կողմից գեներացվող դաշտ, կից ֆայլ |
| Հրապարակման ժամկետ | |
| Ավարտ | |
| Բոլոր մասնակիցներ | |
| Կազմակերպություն | |
| Դիմում-հայտարարություն | |

| | |
|---|---|
| Չափաբաժիններ | |
| Քվեարկության արդյունքներ | |
| Անուն/Գնահատական/Հանձնաժողով/Մեկնաբանություն | |
| Հայտի շտկման մեկնաբանություն | |
| Որոշման համար | |
| Ապրանքային նշան | Ըստ հրավերի պահանջի ապրանքի գնման տեսակի դեպքում |
| Ֆիրմայի անվանում | Ըստ հրավերի պահանջի ապրանքի գնման տեսակի դեպքում |
| Արտադրող | Ըստ հրավերի պահանջի ապրանքի գնման տեսակի դեպքում |
| Տեխնիկական բնութագիր | Ըստ հրավերի պահանջի ապրանքի գնման տեսակի դեպքում |

**Գ19-3/Մ**
*Հանձնաժողով/դիմում-հայտարարության գնահատում*
Գ19-2/Մ տվյալներ =>+(բացառությամբ՝ անուն/Գնահատական/Հանձնաժողով/Մեկնաբանություն, որոշման համար և Հայտի շտկման մեկնաբանություն դաշտերի)

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|
| Գնահատում | Բավարար/անբավարար |
| Մեկնաբանություն | Տեքստային դաշտ |

**Գ19-4/Մ**
*Համակարգող/դիմում-հայտարարության շտկման գնահատման ամփոփում*
Գ19-2/Մ տվյալներ =>+

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|

| | |
|---|---|
| Նախկին դիմում-հայտարարություն | |
| Մեկնաբանություն | |

**Գ19-5/Մ**
*Շնորհում*

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|
| Ծածկագիր | Համակարգի կողմից գեներացվող դաշտ |
| Մրցույթ | Համակարգի կողմից գեներացվող դաշտ |
| Հրապարակման ժամանակ | Օրացուցային դաշտ/Համակարգի կողմից գեներացվող դաշտ |
| Ավարտ | |
| Վճարման տարի | Թվային դաշտ/15.6 ընթացակարգերի դեպքում |
| Կազմակերպություն | Շնորհման ենթակա  մասնակցի անվանում |
| CPV | Համակարգի կողմից գեներացվող դաշտ |
| Անվանում | Համակարգի կողմից գեներացվող դաշտ |
| Քանակ | Համակարգի կողմից գեներացվող դաշտ |
| Կանխավճար | այո/ոչ |
| Խումբ | Եթե առկա է անգործություն, անգործության ավարտը օրացուցային տեսքով: Եթե ոչ՝ թվային դաշտ |

**Գ19-6/Մ**
*Շնորհում/Պայմանագիր*

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|
| Պայմանագիր | Բեռնվող ֆայլ /հայերեն, ռուսերեն/ |

<table>
<tr>
<td></td>
<td>
<table>
<tr><td>Ստորագրված պայմանագիր</td><td>Մասնակցի կողմից կցված փաստաթուղթ</td></tr>
<tr><td>Վերջնական պայմանագիր</td><td>Պատվիրատուի կողմից կցված փաստաթուղթ</td></tr>
<tr><td>Հաղորդագրություններ</td><td>Մասնակցի և համակարգողի հաղորդագրություններ/տեքստային դաշտ</td></tr>
</table>
</td>
</tr>
<tr>
<td>Ելքագրվող տվյալներ</td>
<td>
Գ19-1/Ե
<table>
<tr><th>Տվյալ</th><th>Նկարագրություն</th></tr>
<tr><td>Ծածկագիր</td><td>Թվային արժեք</td></tr>
<tr><td>Մրցույթ</td><td>Համակարգի կողմից գեներացվող դաշտ, կից ֆայլ</td></tr>
<tr><td>Հրապարակման ժամկետ</td><td></td></tr>
<tr><td>Ավարտ</td><td></td></tr>
<tr><td>Ճտկման մեկնաբանություն</td><td>Համակարգողի կողմից ներկայացված դիտակում/տեքստային դաշտ</td></tr>
<tr><td>Նախկին դիմում-հայտարարություն</td><td>Բեռնված ֆայլ</td></tr>
<tr><td>Դիմում-հայտարարության շտկում</td><td>Ֆայլ բեռնելու հնարավորություն (choose file)</td></tr>
<tr><td>Ճտկում</td><td></td></tr>
<tr><td>Վերնագիր</td><td></td></tr>
<tr><td>Ապրանքային նշան</td><td>Ըստ հրավերի պահանջի ապրանքի գնման տեսակի դեպքում/խմբագրելի դաշտ</td></tr>
<tr><td>Ֆիրմայի անվանում</td><td>Ըստ հրավերի պահանջի ապրանքի գնման տեսակի դեպքում/խմբագրելի դաշտ</td></tr>
<tr><td>Արտադրող</td><td>Ըստ հրավերի պահանջի ապրանքի գնման տեսակի դեպքում/խմբագրելի դաշտ</td></tr>
<tr><td>Տեխնիկական բնութագիր</td><td>Ըստ հրավերի պահանջի ապրանքի գնման տեսակի դեպքում/խմբագրելի դաշտ</td></tr>
</table>
</td>
</tr>
</table>

**Գ19-2/Ե**

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|
| Պայմանագիր | Բեռնվող ֆայլ /հայերեն, ռուսերեն/ |
| Ստորագրված պայմանագիր | Մասնակցի կողմից կցված փաստաթուղթ |
| Վերջնական պայմանագիր | Պատվիրատուի կողմից կցված փաստաթուղթ |
| Հաղորդագրություններ | տեքստային դաշտ |

| | |
|---|---|
| Վալիդացիա | Eauction էլեկտրոնային համակարգի միջոցով գնման ընթացակարգին մասնակցության դեպքում ստացված հայտերի գնահատման, անգործության, պայմանագրի շնորհման, պայմանագրի կնքման, ընթացակարգի ամփոփման, ծանուցումների դեպքում իրականացվում է հետևյալ տվյալների ստուգում.<br>● Գնահատման փուլում, անբավարար գնահատականի դեպքում «մեկնաբանություն» դաշտի պարտադիր լրացում<br>● Գնահատման ամփոփման ժամանակ «որոշման համար» դաշտի պարտադիր լրացում<br>● Կնքված պայմանագրի մասին հայտարարությունում «Հանրային իսկողության պահանջ ներկայացնելու համար տրամադրվող ժամկետ» դաշտում 3 և ավել թվային տվյալի մուտքագրում<br>● «Մասնակիցների ներգրավման նպատակով «Գնումների մասի» ՀՀ օրենքի համաձայն իրականացված հրապարակումների մասին տեղեկությունները» դաշտի արժեքի ստուգում, հայերենի (ռուսերենի) առկայության դեպքում ռեսերեն (հայերեն) դաշտի պարդադիր լրացում<br>● «Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ հայտնաբերվելու դեպքում դրանց և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողությունների համառոտ նկարագիրը» դաշտի արժեքի ստուգում, հայերենի (ռուսերենի) առկայության դեպքում ռեսերեն (հայերեն) դաշտի պարտադիր լրացում<br>● «Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքները և դրանց վերաբերյալ կայացված որոշումները» դաշտի արժեքի ստուգում, հայերենի (ռուսերենի) հառկայության դեպքում ռեսերեն (հայերեն) դաշտի պարդադիր լրացում<br>● «Այլ անհրաժեշտ տեղեկություններ» դաշտի արժեքի ստուգում, հայերենի (ռուսերենի) առկայության դեպքում ռեսերեն (հայերեն) դաշտի պարդադիր լրացում |


Տնտեսվարող սուբյեկտ (մասնակից)
Ընկման ծանուցման ստացում
Դիմում-հայտարարության շտկում
Ուղարկում վերագնահատման
Eauction համակարգ
Հանձնաժողով
Հակադարձ աճուրդի ավարտից հետո առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների Դիմում-Հայտարարությունները և ստուգում դրանց համապատասխանությունը հրավերի պահանջներին
Գ19-3/Մ տվյալներ
Մեկնաբանություն դաշտի պարտադիր լրացում
Հանձնաժողովի բոլոր անդամների կողմից գնահատման իրականացում
Հայտերի ստուգում
Հայտերի գնահատում
Անբավարար
Բավարար
Անբավարար գնահատում
Բավարար գնահատում
Կարգավիճակ՝ «Դիմում-Հայտարարության շտկման գնահատում»
Գ19-3/Մ տվյալներ
Վերագնահատման փաթեթի ստացում
Հայտերի շտկման գնահատում
Անբավարար
Բավարար
Մեկնաբանության դաշտի լրացում
Բավարար գնահատում
Հայտի փաթեթի գնահատում ամբողջությամբ, ինչպես նաև ըստ առանձին չափաբաժինների: Տեսանելի են նաև հայտով ներկայացված փաստաթղթերը:
Քարտուղար
Գնահատված արդյունքների տեսանելիության ապահովում
Հայտերի գնահատման ամփոփում
Անբավարար
Բավարար
Հայտերի գնահատում
Ուղարկում շտկման
Կարգավիճակը՝ շնորհում
Ինքնաշատ ծանուցման ուղարկում այն մասին, որ դիմում-հայտատարության մեջ առկա են թերություններ և անհրաժեշտ է շտկում: Մեկնաբանություն դաշտի պարտադիր լրացում:
Հայտերի շտկման գնահատման ամփոփում
Անբավարար
Բավարար
Հայտի (չափաբաժին) մերժում
Կարգավիճակը՝ շնորհում
Անբավարար գնահատված չափաբաժինը


Eauction էլեկտրոնային համակարգ
Քարտուղար
«Շնորհում» կարգավիճակի ստացում
Դրական գնահատված չափաբաժիննե րի խմբավորում
Շնորհման իրականացում
Մեկից ավելի մասնակցիների առկայություն
Այո
ոչ
Անգործության ժամկետի սահմանում
ինքնաշխատ ձևով սահմանվում է անգործության ժամկետ
Պայմանագրի շնորհման փուլի անցում
Գ19-5/Մ, Գ19-6/Մ տվյալներ
Պայմանագրի շնորհում
պայմանագիր կքնելու որոշման մասին, կնքված պայմանագրի մասին հայտարարություններ, չկայացած չափաբաժինների մասին հայտարարությունների ինքնաշխատ կերպով հրապարակվում են procurment.am կայքում
procurment.am կայք

| | |
|---|---|
| Ստորաբաժանում | Գնումների քաղաքականության վարչություն |
| Անվանում | Գ20-Eauction Էլեկտրոնային աճուրդների համակարգում մասնակիցների կողմից հայտերի ներկայացում, արժանագրված անհամապատասխանությունների շտկում, պայմանագրի կնքում |
| Նպատակ | Էլեկտրոնային աճուրդների համակարգում մասնակիցների կողմից հայտերի ներկայացում, արժանագրված անհամապատասխանությունների շտկում, պայմանագրի կնքում |
| Տիրույթ | Պատվիրատու, Eauction Էլեկտրոնային աճուրդների համակարգ (այսուհետև՝ Eauction համակարգ) |
| Դերակատարներ | Պատվիրատու, Քարտուղար, գնահատող հանձնաժողով, Eauction համակարգ |
| Ընթացք 1 | 1. Մասնակիցը կարող է դիմել «Հրապարակված» կարգավիճակ ունեցող մրցույթներին՝ մուտք գործելով վերջիններիս մանրամասների էջ: Մրցույթի մանրամասների էջում արտացոլվում է դրա մասին ողջ տեղեկատվությունը սեղմելով «Հրավեր» տողի «Բեռնել» կոճակը կարելի է ներբեռնել և ծանոթանալ մրցույթի հայտարարությանն ու հրավերին: Մրցույթի վերաբերյալ հարցում ուղարկելու համար անհրաժեշտ է մանրամասների էջի վերևի աջ անկյունում սեղմել «Ուղարկել հարցում» սեղմակը և բացված էջի «Հարցում» տեղում մուտքագրել հարցման տեքստը և սեղմել «Հաստատում» սեղմակը:<br>2. Մրցույթին դիմելու համար անհրաժեշտ է մանրամասների էջի վերևի աջ անկյունում սեղմել «Դիմել» սեղմակը, «Ավելացնել չափաբաժին» էջում ընտրել մրցույթի անհրաժեշտ չափաբաժինները: Միանգամից բոլոր չափաբաժինները նշելու համար պետք է սեղմել «Ընտրել բոլորը» սեղմակը: Նշումները մաքրելու համար անհրաժեշտ է սեղմել «Ապընտրել բոլորը» կոճակը: Փուլն ավարտելու համար սեղմել «Պահել» կոճակը, ինչից հետո ինքնաշխատ եղանակով անցում է կատարվում հաջորդ փուլ (Ավելացնել հաստատում փուլ): «Ավելացնել հաստատում» փուլում լրացնում է փաստաթղթի լեզուն (հայերեն, անգլերեն, ռուսերեն), արժույթը (Դրամ, դոլար, ռուբլի, եվրո), մասնակցություն (Միայնակ, գործակալ, կոնսորցիում), վարկանիշ (առկա չէ, առկա է), բանկ (հայերեն, ռուսերեն, անգլերեն), հասցե (հայերեն, ռուսերեն, անգլերեն), բանկային հաշիվ, կազմակերպության անվանումը ռուսերենով, իրական շահառուներ (տվյալ դաշտը ապաակտիվ է բոլոր տեսակի մրցույթների դեպքում): Բոլոր դաշտերը լրացնելուց հետո պետք է սեղմել «Ֆայլ» կոճակը: Համակարգն ինքնաշխատ եղանակով կգեներացնի և դիտարկիչի էջում կբացի մասնակցի «Դիմում-Հայտարարությունը» (հայերեն, ռուսերեն): Բոլոր փաստաթղթերը մասնակիցը կցում է այս փուլի ընթացքում:<br>3. Մասնակցության դիմումի ներկայացումից հետո համակարգը տրամադրում է եզակի ծածկագիր (PIN-կոդ)՝ համակարգում հրավերով սահմանված ընթացակարգի հետ կապված հետագա գործողություններ կատարելու համար առցանց հակադարձ աճուրդի համար: Ծածկագիրը պահելուց հետո սեղմում է «անցնել հաջորդ փուլ» սեղմակը:<br>4. Որից հետո համակարգը մասնակցին ուղղորդում է «Գնառաջարկի կառավարում» էջ, որտեղ մասնակիցը պետք է լրացնի գնային առաջարկ ընտրված չափաբաժինների համար, ընդ որում գնային առաջարկում նշվում է մեկ ընդհանուր գին ամբողջ քանակի համար ըստ չափաբաժինների: Գնառաջարկի կառավարում դաշտում անհրաժեշտ տվյալները լրացվում են հետևյալ տրամաբանությամբ. ըստ գնման պահանջի ապրանքի գնման դեպքում տվյալ էջում կարող են ցուցադրվել «մակնիշ», «արտադրողի անվանում», «ֆիրմայի անվանում», «ապրանքային նշան» դաշտերը, որոնք պարտադիր մուտքագրման դաշտեր են (հայերեն և/կամ ռուսերեն), «տեխնիկական բնութագիր» դաշտը, որը պարտադիր մուտքագրման դաշտ է (հայերեն և/կամ ռուսերեն): Նախընտրած գինը լրացվում է «Արժեք» դաշտում, լրացնում է ԱԱՀ-ի չափը «Ա.Ա.Հ» դաշտում (ԱԱՀ չունենալու դեպքում պարտադիր լրացնել 0) և սեղմում «Հաշվարկել» |

| | |
|---|---|
| | կոճակը, իսկ «Գին» դաշտը լրացվում է ավտոմատ կերպով: Եթե հրավերով նախատեսված է «Մակնիշը», «Արտադրողի անվանում», «Ֆիրմայի անվանումը», «Ապրանքային նշան» դաշտերի ներմուծումը, ապա մասնակիցը պարտադիր կերպով լրացնում է այդ դաշտերը որևէ լեզվով, ընդ որում երկու լեզուներով ներմուծումը պարտադիր չէ: Նշված գործողությունը բոլոր չափաբաժինների համար անելուց հետո Մասնակիցը սեղմում է «Պահել» կոճակը, որից հետո համակարգը ստուգիչ հարցնում է մասնակցին «Դուք վստահ ե՞ք որ գնային առաջարկը ներկայացրել եք ընդհանուր քանակի համար»: «Այո» կոճակի սեղմումից հետո համակարգը ընդունում է գնառաջարկը և ուղղորդում հաջորդ փուլ, «ոչ»-ի դեպքում նա կարող է վերանայել: «Այո» կոճակի սեղմումով մասնակցի կարգավիճակն տվյալ ընթացակարգի մասով կստանա«դիմած» կարգավիճակ:<br>5. Մասնակիցը կարող է օրենքով սահմանված կարգով (եթե հայտերի ընդունման վերջնաժամկետը դեռ չի լրացել) ետ կանչել հայտը: Համապատասխան էջին անցնելու համար պետք է մանրամասների էջում սեղմել «Չեղարկել» սեղմակը: Չեղարկման համար պետք է սեղմել մանրամասների էջի վերին աջ անկյունի «Խմբագրել» սեղմակը և բացված էջում չեղարկել հայտը: Չեղարկելով դիմումն մասնակցի կարգավիճակն տվյալ ընթացակարգի մասով կստանա «չդիմած» կարգավիճակ: Հայտը չեղարկումից հետո համակարգն ավտոմատ կերպով կուղղորդի դեպի մրցույթի մանրամասների էջ, որտեղից մասնակիցը կարող է կրկին դիմել մրցույթին:<br>6. Հայտերի ընդունման ժամկետը լրացած մրցույթների կարգավիճակը ինքնաշխատ եղանակով փոխվում է, և մրցույթը ստանում է «Նախաաճուրդային» կարգավիճակ: Առցանց աճուրդի ժամանակացույցին ծանոթանալու համար պետք է սեղմել մրցույթի մանրամասների էջի «Աճուրդ» կոճակը: Սահմանված ժամկետի լրանալուց հետո ինքնաշխատ եղանակով կբացվի առցանց աճուրդի էջը, որտեղ մասնակիցը կարող է կատարել գնառաջարկներ իր դիմած չափաբաժինների համար: Միաժամանակ կարող է ընթանալ մինչև 6 չափաբաժնի առցանց աճուրդ: Մասնակցի էկրանին կարտացոլվեն այդ վեցյակից այն չափաբաժինները, որոնց մասնակիցը դիմել է հայտ ուղարկելիս: Գնառաջարկի պատուհանում գինը մուտքագրելուց և «Ուղարկել» կոճակը սեղմելուց հետո համակարգը հաստատման պատուհանում ներկայացնում է առաջարկված գինը ինքնարժեքով և ընդհանուր գինը՝ ինչպես թվերով, այնպես էլ տառերով: Աճուրդի պատուհանում առկա կլինեն նաև հուշումներ հետևյալ անուններով՝ «Սկզբնական գին», «Ձեր գին», «Ուրիշի գին»:<br>7. Համակարգը ցուցադրում է, թե առավելագույնը որքան պետք է կազմի մասնակցի կողմից առաջարկվող գինը: Այդ պայմանին չբավարարող գնառաջարկի դեպքում մասնակիցը կտեսնի համապատասխան հաղորդագրություն: Մյուս մասնակիցների գնառաջարկները ինքնաշխատ եղանակով արտացոլվում են մասնակցի էկրանին: Նոր գնառաջարկ ունենալու համար մասնակցին տրվում է 5 րոպե: 5 րոպե անգործությունից հետո, եթե ոչ մի մասնակից գնառաջարկ չի ներկայացնում, ապա այդ չափաբաժնի մասով աճուրդն ավարտվում է:<br>8. Առցանց աճուրդի ավարտից հետո մրցույթի գնահատող հանձնաժողովը գնահատում է մասնակիցների Դիմում-Հայտարարությունները: Այն մասնակիցը, ում դիմումում նկատվում են թերություններ, ստանում է ծանուցում, որտեղ նկարագրվում են անճշտությունները և առաջարկվում է ուղարկել Դիմում—հայտարարության շտկման տարբերակը: Դիմում-Հայտարարությունը շտկելու համար պետք է մուտք գործել մրցույթի մանրամասների էջ և սեղմել «Դիմում-Հայտարարության շտկում» կոճակը: «Հավաստման շտկում» էջում մասնակիցը կցում է շտկված փաստաթուղթը, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում հնարավորություն ունի շտկել տեխնիկական բնութագիրը, մակնիշը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ֆիրմայի անվանումը դաշտերը՝ հայերեն և/կամ ռուսերեն դաշտերում և սեղմում է «պահել» կաճակը: Արդյունքում տեսանելի կլինի կատարված շտկման վերջին տարբերակը (ստուգելու համար շտկումը կատարված է թե ոչ, մասնակիցը մուտք գործելով առաջադրանքի մեջ, «Նախկին դիմում–հայտարարություն» դաշտից կարող է ներբեռնել վերջնական խմբագրված տարբերակը, որի մեջ տեսանելի են պահպանման ժամանակ համակարգ մուտքագրված տվյալները): |

9. Պայմանագրի շնորհման փուլին անցնելու համար օգտատերը պետք է մուտք գործի մրցույթի մանրամասների էջ, որի «Շնորհում» աղյուսակում չափաբաժիններով խմբավորված պայմանագրերն են: Յուրաքանչյուր պայմանագրի շնորհման էջ մուտք գործելու համար պետք է սեղմել դրա «մանրամասներ» կոճակը: «Շնորհում» էջում ներկայացված են մրցույթի մասին հիմնական տեղեկությունները: «Պայմանագիր» տողից կարելի է բեռնել համակարգի կողմից ինքնաշխատ գեներացված պայմանագրի նախագծերը (հայերենով, ռուսերենով): «Հաղորդագրություն» դաշտում պայմանագրի կնքման առաջարկ ստացած մասնակիցը կարող է ուղարկել հարցումներ և առաջարկներ պայմանագրի վերաբերյալ, որոնց պատասխանում է հանձնաժողովի քարտուղարը: Բոլոր հաղորդագրություններն արտացոլվում են «Հաղորդագրություններ» տողում:
10. Մասնակցի կողմից ստորագրված պայմանագրի կցելուց հետո այն հասանելի է դառնում «Շնորհում» էջի համապատասխան տողում: Այն բեռնելուց հետո քարտուղարը օրենքով սահմանված ժամկետում պետք է կցի պայմանագրի՝ պատվիրատուի կողմից ստորագրված տարբերակը:

Մուտքագրվող տվյալներ

**Գ20-1/Մ**
*Առկա մրցույթ*

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|
| Ծածկագիր | PPCM համակարգից գեներացվող դաշտ |
| Վերնագիր | PPCM համակարգից գեներացվող դաշտ |
| Չափաբաժինների քանակ | PPCM համակարգից գեներացվող դաշտ |
| Կարգավիճակ | Համակարգի կողմից ցուցադրվող դաշտ |
| Դիմելու կարգավիճակ | Համակարգի կողմից ցուցադրվող դաշտ |
| Մանրամասներ (>) | Բացվող դաշտ |

**Գ20-2/Մ**
*Մրցույթ*

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|
| Գնորդ | Տեքստային դաշտ |
| Գնման տեսակ | Տեքստային դաշտ |
| Փոխարժեք | USD, RUR, EUR/ Հրավերից գեներացված դաշտ |
| Պատասխաններ և պարզաբանումներ | Հարցում/Ժամանակ/Պատասխան/Պարզաբանում/Պասիվ |

| | |
|---|---|
| Հրապարակման ժամանակ | Օրացուցային դաշտ |
| Հայտերի ընդունման վերջնաժամկետ | Օրացուցային դաշտ |
| Հակադարձ աճուրդ | Օրացուցային դաշտ |
| Դուք կարող եք ուղարկել հարցում նախքան | Օրացուցային դաշտ |
| Հրավեր | Բեռնվող ֆայլ |
| Արձանագրություն | Տեքստային դաշտ |
| Կարգավիճակ | Համակարգի կողմից ցուցադրվող դաշտ |
| Տեխնիկական բնութագիր | Տեքստային դաշտ |
| CPV | PPCM համակարգից գեներացվող դաշտ |

**Գ20-3/Մ**
*Ուղարկել հարցում*

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|
| Մրցույթ | Տեքստային դաշտ/ Համակարգի կողմից ցուցադրվող դաշտ |
| Մեկնարկ | Օրացուցային դաշտ/ Հայտերի ընդունման վերջնաժամկետ |
| Հարցում | Տեքստային դաշտ |

**Գ20-4/Մ**
*Դիմել*

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|
| Ընտրել բոլոր | Սեղմակ/ բոլոր չափաբաժինները ընտրելու համար |
| Ապընտրել բոլորը | Սեղմակ/ բոլոր  ընտրված չափաբաժինները ապընտրելու համար |
| Համար | Չափաբաժնի հերթական համար |

| | |
|---|---|
| Վերնագիր | Գնման առարկայի անվանում |

**Գ20-5/Մ**
*Ավելացնել հավաստում*

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|
| Փաստաթղթերի լեզու | Ընտրովի դաշտ /հայերեն/անգլերեն/ռուսերեն/ |
| Արժույթ | Ընտրովի դաշտ /դրամ/դոլար/Ռուբլի/Եվրո/ |
| Մասնակցություն | Ընտրովի դաշտ /Միայնակ/Գործակալ/Կոնսորցիում/ |
| Վարկանիշ | Ընտրվող դաշտ/ առկա է  (ի/ի, Չափ, կազմակերպություն), առկա չէ |
| Բանկ | Հայերեն/ռուսերեն/անգլերեն |
| Հասցե | Հայերեն/ռուսերեն/անգլերեն |
| Բանկային հաշիվ | Տեքստային դաշտ |
| Կազմակերպության անվանումը ռուսերենով | Տեքստային դաշտ |
| Իրական շահառուներ | Ապաակտիվ դաշտ/ Անուն/Ազգանուն/Հայրանուն, ՀՀ քաղաքացիների համար՝ նույնականացման քարտի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը, Օտարերկրյա քաղաքացիների համար համապատասխան երկրի օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը |
| Դիմում-Հայտարարություն* | Կից ֆայլեր |
| Ֆայլ | Լրացված տվյալների ցուցադրում համաձայն օրինակելի ձևի |

**Գ20-6/Մ**
*Խմբագրել*

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|

| | |
|---|---|
| Ձեր գնառաջարկ | Թվային դաշտ (AMD,USD, RUR, EUR) |

**Գ20-7/Մ**

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|
| Մակնիշ | Տեքստային դաշտ /հայերեն, ռուսերեն/ |
| Արտադրողի անվանում | Տեքստային դաշտ /հայերեն, ռուսերեն/ |
| Ֆիրմայի անվանում | Տեքստային դաշտ /հայերեն, ռուսերեն/ |
| Ապրանքային նշան | Տեքստային դաշտ /հայերեն, ռուսերեն/ |
| Տեխնիկական բնութագիր | Տեքստային դաշտ /հայերեն, ռուսերեն/ |
| Ընդհանուր քանակ | Թվային արժեք |
| Չ/Մ | |
| Արժեք | Թվային դաշտ |
| ԱԱՀ | Թվային դաշտ (0-30 թվերի մուտագրում) |
| Հաշվարկել | Արժեք դաշտ * ԱԱՀ դաշտ/100+Արժեք դաշտ=գին |
| Գին | Թվային դաշտ (ներկայացված նաև տառերով) |

Ելքագրվող տվյալներ

**Գ20-1/Ե**

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|
| Ծածկագիր | PPCM համակարգից գեներացվող դաշտ |
| Վերնագիր | PPCM համակարգից գեներացվող դաշտ |
| Գնորդ | Տեքստային դաշտ |
| Գնման տեսակ | PPCM համակարգից գեներացվող դաշտ |
| Փոխարժեք | Թվային դաշտ |
| Պատասխաններ և պարզաբանումներ | Տեքստային դաշտ |

| | |
|---|---|
| Հրապարակման ժամանակ | Օրացուցային դաշտ |
| Հայտերի ընդունման վերջնաժամկետ | Օրացուցային դաշտ |
| hակադարձ աճուրդ | Օրացուցային դաշտ |
| Դուք կարող եք ուղարկել հարցում նախքան | Օրացուցային դաշտ |
| Հրավեր | Բեռնվող ֆայլ |
| Արձանագրություն | Տեքստային դաշտ |
| Կարգավիճակ | Համակարգից գեներացվող դաշտ |
| Չափաբաժնի համար | Թվային դաշտ |
| CPV | PPCM համակարգից գեներացվող դաշտ |
| Քանակ | Թվային դաշտ |
| Տեխնիկական բնութագիր | Տեքստային դաշտ |

**Գ20-2/Ե**
*Պայմանագրի շնորհում*

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|
| Չափաբաժիններ | Թվային դաշտ |
| Խումբ | Թվային դաշտ |
| Չափաբաժնի համար | Չափաբաժնի հերթական համար |
| Զբաղեցրած տեղ | Թվային դաշտ |
| Ընթացք 1 | 1. Գնումների համակարգողների քննության անցկացման օրը ՀՀ ֆինանսների նախարարության գնումների քաղաքականության վարչության աշխատակից(ներ)ը (այսուհետ՝ աշխատակից) procquali.minfin.am էլեկտրոնային համակարգից ձևավորված քննության մասնակիցների ցանկը (ովքեր նախապես դիմել են քննությանը մասնակցելու համար) «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի միջոցով ներկայացվում է անցագրային կետի հերթապահին մասնակիցների մուտքը ՀՀ ՖՆ վարչական տարածք թույլատրելու համար:<br>2. Աշխատակիցը նշված ցանկի հիման վրա կազմակերպում է մասնակիցների մուտքը ՀՀ ՖՆ վարչական տարածքի համապատասխան քննասենյակ: Ստուգում է մասնակիցների անձը հաստատող փաստաթղթերը, այն համեմատում նախօրոք համակարգում մասնակիցների կողմից լրացված տեղեկատվության հետ:<br>3. Աշխատակիցը յուրաքանչյուր մասնակցին տրամադրում է քննությունից առաջ https://armeps.am/exam/login.xhtml համակարգից ձևավորված pdf ձևաչափի ֆայլը, որտեղ նշված է մասնակցի անունը, ազգանունը, հայրանունը, ՀԾՀ-ն և կոդը (Գաղտնաբառը), որպեսզի վերջինս մուտք գործի համակարգ (նշելով ՀԾՀ-ն և գաղտնաբառը) իր համար ավտոմատ կերպով գեներացված թեստը լրացնելու համար: Ընդ որում նշված գաղտնաբառով համակարգ կարող են մուտք գործել միայն մեկ անգամ: Քննության ավարտից հետո տվյալն ապաակտիվացվում է:<br>4. Աշխատակիցը մասնակիցներին ներկայացնում է Քննության անցկացման կարգը, մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև տեղեկացնում է Քննության տևողության և անցողիկ միավորների մասին:<br>5. Մասնակիցը բացված https://armeps.am/exam/login.xhtml համակարգի համապատասխան միջերեսում մուտքագրում է օգտագործողի ՀԾՀ-ն ու գաղտնաբառը և սեղմում «Սկսել» կոճակը:<br>6. https://armeps.am/exam/login.xhtml էլեկտրոնային համակարգը յուրաքանչյուր մասնակցի համար ձևավորում է 50 հարցից բաղկացած թեստ և տալիս 75 րոպե ժամանակ՝ հարցերին պատասխանելու համար: Մասնակիցը՝ ընտրելով բոլոր հարցերի ենթադրյալ ճիշտ պատասխանները, ավարտում է քննությունը: Քննությունն ավարտվում է նաև 75 րոպե ժամանակի լրանալու դեպքում: *Եթե մասնակիցը սեղմել է «Ավարտել» կոճակը, սակայն չի պատասխանել որևէ հարցի, Համակարգը ավտոմատ հաղորդագրություն է ներկայացնում չպատասխանված հարցի վերաբերյալ:<br>7. Քննության ավարտից հետո Համակարգը անմիջապես տվյալ մասնակցի համակարգչի էկրանին արտացոլում է հավաքած միավորները տոկոսային արտահայտությամբ, ինչպես նաև գեներացնում է հղում, որի միջոցով մասնակիցը կարող է տեսնել թեստի մանրամասները (Հարց, Ճիշտ պատասխան, Մասնակցի պատասխան, Մասնակցի ստացած միավոր) յուրաքանչյուր հարցից:<br>8. Քննության ավարտից հետո Աշխատակիցը https://armeps.am/exam/login.xhtm էլեկտրոնային համակարգի «Թեստեր» դաշտի «Արդյունքներ» կոճակը սեղմելով բեռնում է քննության արդյունքների գեներացված |

<table>
<tr><td></td><td>արձանագրությունը, որը ստորագրվում է քննության ներկա գտնվող աշխատակիցների կողմից /նախագահ, անդամներ/ կողմից:<br>9. Մասնակիցը ստորագրում է իր տվյալների դիմաց՝ դրանով հավաստելով, որ տեղեկացված է իր հավաքած միավորների մասին:<br>10. Քննությունը հաջողությամբ հանձնած մասնակիցների տվյալները Աշխատակիցը լրացնում է գնումների համակարգողի որակավորում ստացած անձանց ցանկում .excel ֆայլով և 5 աշխատանքային օրվա ընթացքում հրապարակում տեղեկագրում (www.pro cu remen t.am), ինչպես նաև «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի միջոցով ուղարկում է ՀՀ ՖՆ Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին՝ ՀՀ ՖՆ minfin.am պաշտոնական կայքում հրապարակելու նպատակով:</td></tr>
<tr><td>Մուտքագրվող տվյալներ</td><td>Գ26-1/Մ
<table>
<tr><th>Տվյալ</th><th>Նկարագրություն</th></tr>
<tr><td>Անուն/Ազգանուն/Հայրանունը</td><td>Տեքստային դաշտ</td></tr>
<tr><td>Հանրային ծառայության համարանիշ</td><td>Տեքստային դաշտ</td></tr>
<tr><td>Կոդ</td><td>Լատինատառ լրացվող դաշտ</td></tr>
</table></td></tr>
<tr><td>Ելքագրվող տվյալներ</td><td>Գ26-1/Ե
<table>
<tr><th>Տվյալ</th><th>Նկարագրություն</th></tr>
<tr><td>Թեստի անուն</td><td>Գնումների համակարգողի որակավորման քննություն/Տեքստային դաշտ</td></tr>
<tr><td>Անցկացման օր</td><td>Տեքստային դաշտ</td></tr>
<tr><td>Անուն, Ազգանուն, Հայրանունը</td><td>Տեքստային դաշտ</td></tr>
<tr><td>psn/ ՀԾՀ/</td><td>Թվային դաշտ</td></tr>
<tr><td>Հարց</td><td>Տեքստային դաշտ</td></tr>
<tr><td>Ճիշտ պատասխան</td><td>Տեքստային դաշտ</td></tr>
</table></td></tr>
</table>

<table>
<tr><td></td><td><table><tr><td>Մասնակցի պատասխան</td><td>Տեքստային դաշտ</td></tr><tr><td>Արդյունք</td><td>Տեքստային դաշտ (%)</td></tr></table></td></tr>
<tr><td>Վալիդացիա</td><td>Գնումների համակարգողների քննության անցկացման և որակավորման շնորհման դեպքում իրականացվում է հետևյալ տվյալների ստուգում.<br>● Ստուգվում է քննությանը ներկայացած անձի ինքնությունը: Եթե նախապես ներկայացված և փաստացի ներկա անձի և վերջինիս փաստաթղթերի մեջ անհամապատասխանություններ չեն արձանագրվում, ապա անձը ստանում է քննությանը մասնակցելու իրավունք, հակառակ դեպքում՝ ոչ:</td></tr>
</table>


procqual.minfin.am
Հրապարակված քննության մասնակիցների ցուցակի առկայություն
ՀՀ ՖՆ վարչական տարածքի մուտքի ապահովում
համեմատում նախօրոք համակարգում մասնակիցների կողմից լրացված տեղեկատվության հետ
Մասնակիցների անձը հաստատող փեղթերի ստուգում
Գ26-1/Մ տվյալներ, ինքնաշխատ գեներացված armeps.am/exam համակարգից
Անհրաժեշտ փաստաթղթերի տրամադրում մասնակիցներին
Քննության անցկացման կարգի ներկայացում
armeps.am/exam համակարգ
Մասնակից
օգտագործողի ՀԾՀ-ի ու գաղտնաբառի մուտքագրում
Մուտք համակարգ
Թեստի պատասխանների ընտրություն
Եթե մասնակիցը սեղմել է «Ավարտել» կոճակը, սակայն չի պատասխանել որևէ հարցի, համակարգը ավտոմատ հաղորդագրություն է ներկայացնում չպատասխանված հարցի վերաբերյալ: Քննությունն ավարտվում է նաև 75 րոպե ժամանակի լրանալու դեպքում
Քննության ավարտ
Քննության արդյունքների ստորագրում
Համակարգ
50 հարցից բաղկացած թեստ, 75 րոպե ժամանակ
Թեստի ձևավորում
Միավորների արտացոլում
գեներացվում է հղում, որի միջոցով մասնակիցը կարող է տեսնել թեստի մանրամասները
քննության արդյունքների գեներացված արձանագրությունը ստորագրվում է քննության ներկա գտնվող աշխատակիցների կողմից
Քննության արդյունքների բեռնում
Տրամադրում ստորագրման
Գնումների որակավորում ստացած անձանց ցուցակում 5 աշխ. օրվա ընթացքում
Մասնակիցների տվյալների լրացում excel-ում
excel
Հրապարակում տեղեկագրում
www.procurement.am
Mulberry համակարգ
Մասնակիցների տվյալների ստացում, հրապարակում
minfin.am կայքում

| | |
|---|---|
| Ստորաբաժանում | Գնումների քաղաքականության վարչություն |
| Անվանում | Գ27- Գնումների համակարգողի որակավորման շնորհման քննության կազմակերպում |
| Նպատակ | Գնումների համակարգողի որակավորման շնորհման քննության կազմակերպում |
| Տիրույթ | ՀՀ ֆինանսների նախարարության գնումների քաղաքականության վարչություն, Մասնակից |
| Դերակատարներ | ՀՀ ֆինանսների նախարարության գնումների քաղաքականության վարչության աշխատակից, Մասնակից, procurement.am (gnumner.am), procquali.minfin.am, minfin.am, armeps.am/exam/login.xhtml |
| Ընթացք 1 | 1. Գնումների համակարգողի որակավորման շնորհման քննության կազմակերպման համար ՀՀ ՖՆ գնումների քաղաքականության վարչության աշխատակիցը մուտք է գործում procquali.minfin.am էլեկտրոնային համակարգ, որտեղ արտացոլվում են հետևյալ դաշտերը՝<br>• Իրադարձություն<br>• Դիմորդ<br>• Դեր<br>• Արտոնություն<br>• Օգտատեր<br>2. Սեղմում է «**Իրադարածություն**» դաշտը, բացված պատուհանի աջ անկյունում «Ավելացնել» կոճակի միջոցով ցուցադրվում է «Ավելացնել իրադարձություն» պատուհան, որտեղ լրացնում է անհրաժեշտ տվյալները (Անվանում (գնումներ ի համակարգողների որակավորման քննություն), Տեքստ, Ամսաթիվ, Մասնակիցների քանակ, Կարգավիճակ) և սեղմում «Պահել» կոճակը: Տվյալները լրացնելուց և պահելուց հետո որակավորման շնորհման քննության տվյալները արտացոլվում են procquali.minfin.am համակարգում. իրադարձություններ դաշտում ցուցադրվում է ազատ քննության օրը, ինչպես նաև տվյալները ավտոմատ փոխանցվում են ՀՀ ՖՆ procurement.am պաշտոնական կայքի «Որակավորում» դաշտի «Դիմել որակավորման» հատվածում:<br>3. procquali.minfin.am համակարգի «Իրադարձություն» պատուհանի «**Մանրամասներ**» դաշտում բացվում են տվյալ օրվա համար որակավորման քննությանը դիմած մասնակիցների տվյալները (հ/հ, Անուն, Հանրային ծառայության համար, Հեռախոս, Էլեկտրոնային փոստ, Հասցե, Իրադարձություն (գնումների համակարգողի որակավորման քննություն), կարգավիճակ (այս փուլում ակտիվ է լինում):<br>4. Բացված պատուհանում յուրաքանչյուր մասնակցի համար «Մանրամասներ» դաշտը սեղմելով ՀՀ ՖՆ գնումների քաղաքականության վարչության աշխատակիցը (այսուհետ՝ Աշխատակից) ստուգում է որակավորման քննությանը դիմած մասնակիցների տվյալները և սեղմում է «Խմբագրել» կոճակը: Բացված պատուհանում երևում են «Ակտիվ», «Պասիվ», «Մերժել», «հաստատել» կարգավիճակով ընտրովի դաշտերը. եթե մասնակցի ներկայացրած հայտը և փաստաթղթերը համապատասխանում են օրենսդրության պահանջներին, ապա Աշխատակիցը տեքստային դաշտում լրացնում է հաստատման վերաբերյալ տեղեկատվությունը և սեղմում է «Հաստատել» և «պահել» ու հաղորդագրություն է ուղարկում Մասնակցին համակարգի և էլեկտրոնային փաստի միջոցով՝ նշելով քննության օրվա հետ կապված մանրամասները: Եթե մասնակցի ներկայացրած տվյալները չեն համապատասխանում օրենսդրության պահանջներին, ապա Աշխատակիցը տեքստային դաշտում նշում է մերժման պատճառը սեղմում է «Մերժել» ընտրանքը և սեղմում է «Պահել», որից հետո Մասնակցին էլեկտրոնային փաստի միջոցով հաղորդագրություն է ուղարկում մերժման վերաբերյալ: |

| | |
|---|---|
| | 5. Բոլոր հաստատված մասնակիցների տվյալները (քննության անցկացման ամսաթվի, ժամի և վայրի վերաբերյալ) Աշխատակիցը պատճենում է .excel ձևաչափով փաստաթղթում և հրապարակում է տեղեկագրում քննության անցկացման օրվանից առնվազն 3 աշխատանքային օր առաջ, ինչպես նաև «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի միջոցով ուղարկում է ՀՀ ՖՆ Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին՝ ՀՀ ՖՆ minfin.am պաշտոնական կայքում հրապարակելու նպատակով:<br>6. «**Դիմորդ**» դաշտում արտացոլվում են մասնակիցների տվյալները (Անուն, Հանրային ծառայության համար, Հեռախոս, Էլ փոստ, հասցե, Իրադարձություն (գնումների համակարգողի որակավորման քննություն), կարգավիճակ (այս փուլում ակտիվ է լինում):<br>7. «**Դեր**» դաշտում արտացոլվում է ադմինիստրատորի միջերեսը (Անվանում/Արտոնություն/Կարգավիճակ (ադմինիստրատոր 1, ադմինիստրատոր 2), ակտիվ, խմբագրել, ավելացնել):<br>8. «**Արտոնություն**» դաշտում ցուցադրված են «Անվանում», «Մոդուլ» (sysadmin), «Գործառույթ» (user, event, add_event, edit_user etc..), «Պատկերակ», «Կարգավիճակ» (ակտիվ), ավելացնել դաշտերը, սակայն չեն կիրառվում Աշխատակցի կողմից:<br>9. «**Օգտատեր**» դաշտում ներառված են ՀՀ ՖՆ այն աշխատակիցների ցուցակը, ովքեր իրականացրել(ում) են ադմինիստրատորի ֆունկցիաները (Անուն, Օգտատորիջ տեսակ, Դեր, Կարգավիճակ (ակտիվ, կասեցված, պասիվ)), ավելացնել:<br>10. Մասնակիցների հայտերը հաստատելուց հետո Աշխատակիցը քննությունից առաջ կազմում է քննության թեստերը: Թեստերը կազմելու համար մուտք է գործում https//armeps.am/exam/login.xhtml/ համակարգ, մուտքագրում է իր օգտվողի անունը և գաղտնաբառը: Բացված պատուհանում սեղմում է «Թեստեր» դաշտը, որտեղ արտացոլվում են «թեստի անուն», «թեստի տեսակ», «թեստի օր», «հանձնաժողովի անդամներ», «մասնակիցներ», «հարցաթերթիկ», «արդյունքները», «խմբագրում», «ջնջել», «արխիվացնել» դաշտերը: Դաշտում հնարավոր է նաև իրականացնել որոնում ըստ «Թեստի անուն», «Թեստի օր», «Թեստի տեսակ», «Թեստի վիճակ» ընտրանքների: Աշխատակիցը սեղմում է «Ստեղծել թեստ» կոճակը, բացված պատուհանում մուտքագրում է թեստի անունը, թեստի տեսակը ընտրում է «Գնումների համակարգողի որակավորում» դաշտը, ընտրվում է օրը «Թեստի օր» դաշտից և սեղմում է «Ստեղծել» կոճակը: Սեղմելուց հետո թեստը ավելանում է https//armeps.am/exam/login.xhtml/ համակարգի հիմնական էջում:<br>11. Թեստի հարցերը ներմուծելու համար սեղմում է «Հարցաթերթիկ» կոճակը, լրացնում ենք բաժինները՝ բաժին 1-30, բաժին 2-11, բաժին 3-3, բաժին 4-3, բաժին 5-3 (ընդհանուր 50 հարց) և սեղմում «լրացնել» կոճակը: Որից հետո «choose file» կոճակի միջոցով ընտրում ենք քննության հարցաշարի .excel ֆայլը և ներմուծել կոճակի միջոցով ներմուծում ենք հարցաշարը և վերադառնում:<br>12. Գնումների համակարգողի որակավորման շնորհման քննությունը կազմակերպող և անցկացնող ստորաբաժանումը և ստորաբաժանման աշխատակիցների ցանկը սահմանվում է ՀՀ ֆինանսների նախարարի հրամանով (Խմբի ղեկավար և 2 աշխատակից): Քննության անցկացմանը պարտադիր կերպով մասնակցում են ստորաբաժանման առնվազն 2 աշխատակից, հակառակ դեպքում քննության անցկացումը հետաձգվում է և մինչև հաջորդող աշխատանքային օրը տեղեկագրում տեղեկատվություն է հրապարակվում վերջինիս անցկացման նոր ժամկետի մասին: Խմբի ղեկավարի բացակայության դեպքում նրան փոխարինում է ըստ խմբում ընդգրկման առաջնահերթության խմբի ղեկավարից հետո նշված գործընթացին ներկա հաջորդ աշխատողը: Աշխատակիցը https//armeps.am/exam/login.xhtml/ «Անդամներ» կոճակի միջոցով ստեղծում էլ հանձնաժողովի նախագահի և անդամներ, լրացնելով անհրաժեշտ տվյալները (Անուն, Ազգանուն, Պաշտոն) և սեղմում է «Ստեղծել» կոճակը ու վերադառնում:<br>13. «Մասնակիցներ» բաժնում «Ստեղծել մասնակից» կոճակի միջոցով յուրաքանչյուր մասնակցի համար լրացնում ենք անհրաժեշտ դաշտերը (ՀԾՀ, անուն, ազգանուն, հայրանուն) և «ստեղծել» կոճակի միջոցով ստեղծում ենք մասնակցին |

և վերադառնում: Որից հետո «ակտիվացնել» կոճակի միջոցով տպվում է յուրաքանչյուր մասնակցի համար pdf ձևաչափի փաստաթուղթ որտեղ նշված է մասնակցի անունը, ազգանունը, հայրանունը, ՀԾՀ-ն և կոդը-լատինատառ սիմվոլներով: Նշված փաստաթուղթը քննության ժամանակ տրամադրվում է մասնակցին և վերջինս համակարգ է մուտք գործում նշելով ՀԾՀ-ն և կոդը՝ իր համար գեներացված առանձին թեստը լրացնելու համար:

14. Թեստը հանձնելուց հետո յուրաքանչյուր մասնակցի արդյունքները ցուցադրվում են «Մասնակիցներ» միջերեսի «Արդյունքներ» դաշտում:
15. Քննության ավարտից հետո Աշխատակիցը սեղմում է «Թեստեր» դաշտի «Արդյունքներ» կոճակի վրա և բեռնում է փաստաթուղթը, որը ստորագրվում է Հանձնաժողովի նախագահի ու անդամների կողմից:
16. Քննությունը հաջող ավարտած մասնակիցների տվյալները Աշխատակիցը լրացնում է .excel ձևաչափի փաստաթղթում և 5 աշխատանքային օրվա ընթացքում հրապարակում տեղեկագրում, ինչպես նաև «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի միջոցով ուղարկում է ՀՀ ՖՆ Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին՝ ՀՀ ՖՆ minfin.am պաշտոնական կայքում հրապարակելու նպատակով:

Մուտքագրվող տվյալներ

**Գ27-1/Մ**

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|
| Իրադարձություն | Տեքստային դաշտ |
| Դիմորդ | Տեքստային դաշտ |
| Դեր | Տեքստային դաշտ |
| Արտոնություն | Տեքստային դաշտ |
| Օգտատեր | Տեքստային դաշտ |

**Գ27-2/Մ**

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|
| Անվանում | Քննության լրացված անվանում |
| Տեքստ | Օրենսդրությամբ սահմանված պարտադիր և այլ օժանդակող տեղեկատվություն |
| Ամսաթիվ | Ընտրված քննության օր և ժամ/ օրացուցային դաշտ |
| Մասնակիցների քանակ | Քննության մասնակիցների առավելագույն քանակ |

| | |
|---|---|
| Կարգավիճակ | Քննության համապատասխան կարգավիճակ («Ակտիվ», «Պասիվ») |
| Մանրամասներ | Ընտրովի դաշտ |

**Գ27-3/Մ**

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|
| Անուն/Ազգանուն | Տեքստային դաշտ |
| Հանրային ծառայության համար | Տեքստային դաշտ |
| Հեռախոս | Տեքստային դաշտ |
| Էլեկտրոնային փոստ | Տեքստային դաշտ |
| Հասցե | Տեքստային դաշտ |
| Իրադարձություն (գնումների համակարգողի որակավորման քննություն) | Ընտրովի դաշտ |
| Կարգավիճակ | Ընտրովի դաշտ/ակտիվ, պասիվ/ |
| Մանրամասներ | Ընտրովի դաշտ |

**Գ27-4/Մ**

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|
| Թեստի անուն | Տեքստային դաշտ |
| Թեստի տեսակ | Տեքստային դաշտ |
| Թեստի օր | Օրացուցային դաշտ |
| Հանձնաժողովի անդամներ | Տեքստային դաշտ |

| | |
|---|---|
| Մասնակիցներ | Տեքստային դաշտ |
| Հարցաթերթիկ | Տեքստային դաշտ |
| Արդյունքներ | Տեքստային դաշտ |
| Խմբագրում | |
| Ջնջել | |
| Արխիվացնել | |

**Գ27-5/Մ**
*Հանձնաժողովի անդամներ*

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|
| Անուն/Ազգանուն | Տեքստային դաշտ |
| Պաշտոն | Տեքստային դաշտ |
| Խմբագրում | |
| Ջնջել | Տեքստային դաշտ |

**Գ27-6/Մ**

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|
| Անուն, ազգանուն, հայրանուն | Տեքստային դաշտ |
| ՀԾՀ | Թվային դաշտ |
| Խմբագրում | Տեքստային դաշտ |
| Հեռացնել | |
| Ակտիվացնել | |
| Արդյունքներ | Տեքստային դաշտ |

<table>
<tr><td>Ելքագրվող տվյալներ</td><td>

**Գ27-1/Ե**
Գ27-2/Մ, Գ27-3/Մ, Գ27-6/Մ տվյալներ

**Գ27-2/Ե**

<table>
<tr><th>Տվյալ</th><th>Նկարագրություն</th></tr>
<tr><td>Թեստի անուն</td><td>Գնումների համակարգողի որակավորման քննություն</td></tr>
<tr><td>Անցկացման օր</td><td>Տեքստային դաշտ</td></tr>
<tr><td>Մասնակիցների անուն/Ազգանուն/Հայրանուն</td><td>Տեքստային դաշտ</td></tr>
<tr><td>Գնահատական</td><td>Տեքստային դաշտ</td></tr>
</table>

</td></tr>
<tr><td>Վալիդացիա</td><td>Գնումների համակարգողի որակավորման շնորհման քննության կազմակերպման դեպքում իրականացվում է հետևյալ տվյալների ստուգում.<br>● Բոլոր դաշտերի պարտադիր մուտքագրում</td></tr>
</table>


procquali.minfin.am
Աշխատակից
Մուտք համակարգ
Համակարգ
Գ27-2/Մ տվյալներ
...ակավորման քննության անհր. տվյալների լրացում
Քննության տվյալների արտացոլում
Ինքնաշխատ հրապարակում տեղեկագրում
procurement.am կայք
procquali.minfin.am
հաստատման վերաբերյալ էլեկտրոնային փաստի միջոցով տեղեկատվության ուղարկում մասնակցին
Մուտք համակարգ
Քննությանը դիմած մասնակիցների ստուգում
այո
ոչ
Հաստատում
Տվյալների համապատասխանություն օրենսդրության պահանջներին
...աստատված մասնակիցների տվյալների հրապարակում
Ուղարկում հրապարակման minfin.am
Մերժում
Մասնակցին էլեկտրոնային փաստի միջոցով հաղորդագրության ուղարկում մերժման վերաբերյալ
Մասնակից
Mulberry համակարգ
minfin.am


armeps.am/exam
մուտք համակարգ
Գ27-4/Մ տվյալներ
excel
Անհրաժեշտ տվյալների մուտքագրում
Թեստի ստեղծում
Հարցաշարի ներմուծում
Հանձնաժողովի անդամների ստեղծում
Մասնակիցների թեստերի ստեղծում

| | |
|---|---|
| Ստորաբաժանում | Գնումների քաղաքականության վարչություն |
| Անվանում | Գ28- Գնումների համակարգողների շարունակական մասնագիտական վերապատրաստում |
| Նպատակ | Գնումների համակարգողների շարունակական մասնագիտական վերապատրաստում |
| Տիրույթ | ՀՀ ֆինանսների նախարարության գնումների քաղաքականության վարչություն, գնումների համակագող |
| Դերակատարներ | ՀՀ ֆինանսների նախարարության գնումների քաղաքականության վարչության աշխատակից, գնումների համակագող, www.procurement.am (gnumner.am) |
| Ընթացք 1 | 1. Գնումների համակարգողների շարունակական մասնագիտական վերապատրաստումը (այսուհետ` վերապատրաստում) նրանց մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների շարունակական և հետևողական կատարելագործումն է: Գնումների համակարգողը որակավորումն ստանալու տարվան հաջորդող յուրաքանչյուր երրորդ տարում պարտադիր պետք է անցնի վերապատրաստում: Վերապատրաստման գործընթացը կանոնակարգում, կազմակերպում և համակարգում է ՀՀ ֆինանսների նախարարությունը` ՀՀ պետական բյուջեի միջոցների, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին: Վերապատրաստման դասընթացների ընդհանուր տևողությունը պետք է կազմի առնվազն 12 ժամ:<br>2. Մինչև յուրաքանչյուր տարվա մարտի 15-ը ՀՀ ֆինանսների նախարարի հրամանով հաստատվում և տեղեկագրում (www.pro cu remen t.am) հրապարակվում են վերապատրաստման ծրագրերն ու թեմաները: Վերապատրաստման ենթակա գնումների համակարգողի ղեկավարը մինչև յուրաքանչյուր տարվա մարտի 1-ը ՀՀ ֆինանսների նախարարին ներկայացնում է գնումների համակարգողի հայտը համապատասխան գրությամբ: Այն ֆիզիկական անձինք, ովքեր ունեն գնումների համակարգողի որակավորում, սակայն չեն հանդիսանում որևէ պատվիրատուի կամ գնումների համակարգողի ծառայություններ մատուցող կազմակերպության աշխատող, վերապատրաստման դասընթացներին մասնակցելու համար գրավոր դիմում են ներկայացնում ՀՀ ֆինանսների նախարարին` կցելով անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը:<br>3. Մինչև յուրաքանչյուր տարվա ապրիլի 1-ը ՀՀ ՖՆ գնումների քաղաքականության վարչության աշխատակիցը, ստանալով վերապատրաստմանը մասնակցելու ենթակա անձանց տվյալները, խմբավորում է մասնակիցներին` հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի հրամանով հաստված վերապատրաստման ծրագրերը և թեմաները (էլեկտրոնային եղանակով գնումներ կատարող պատվիրատուների գնումների համակարգողներ, թղթային եղանակով գնումներ կատարող պատվիրատուների գնումների համակարգողներ, գնումների համակարգողի ծառայություններ մատուցող կազմակերպությունների աշխատակիցների և գնումների համակարգողի որակավորում ունեցող ֆիզիկական անձիք) և իր անմիջական ղեկավարի միջոցով «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգով ներկայացնում է ՀՀ ֆինանսների նախարարի հաստատմանը գնումների համակարգողների շարունակական մասնագիտական վերապատրաստման հրամանի նախագիծը: ՀՀ ֆինանսների նախարարի կողմից հաստատվելուց հետո ՀՀ ՖՆ գնումների քաղաքականության վարչության կողմից տեղեկագրում (www.procurement.am) հրապարակվում են վերապատրաստման դասընթացների անցկացման ժամանակացույցը և խմբերը` ըստ մասնակիցների:<br>4. Գնումների համակարգողները սահմանված ժամանակացույցին համաձայն, անհրաժեշտ փաստաթղթերով ներկայանում են ՀՀ ՖՆ կողմից նախապես հաստատված վայր` վերապատրաստման նպատակով: |

5. Եթե գնումների համակարգողը չի մասնակցել վերապատրաստման դասընթացի որևէ թեմայի, ապա նրան հնարավորություն է ընձեռվում մասնակցելու նույն թեմայով անցկացվող հաջորդ երեք դասընթացներից որևէ մեկին, բայց ոչ ուշ, քան տվյալ տարվա ավարտը:
6. Եթե գնումների համակարգողը չի դիմել վերապատրաստման դասընթացներին մասնակցելու համար կամ չի մասնակցել վերապատրաստման դասընթացի ընդհանուր տևողության առնվազն 80 տոկոսին, ապա վերջինիս որակավորումը համարվում է դադարեցված: Դադարեցման մասին համապատասխան փաստաթղթերը տեղեկագրում հրապարակվում են ՀՀ ՖՆ գնումների քաղաքականության վարչության կողմից:

Մուտքագրվող տվյալներ

**Գ28-1/Մ**

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|
| Անուն/Ազգանուն/Հայրանուն | Տեքստային դաշտ |
| Անձնագրի համար | Տեքստային դաշտ |
| Ում կողմից | Տեքստային դաշտ |
| Քննության անցկացման ամսաթիվ | Տեքստային դաշտ |
| ՀԾՀ | Տեքստային դաշտ |

Ելքագրվող տվյալներ

**Գ28-1/Ե**

| Տվյալ | Նկարագրություն |
|---|---|
| Մասնակցի անուն/ազգանուն | Տեքստային դաշտ |
| Պատվիրատուի անվանում | Տեքստային դաշտ |
| ՀԾՀ | Տեքստային դաշտ |
| Պաշտոն | Տեքստային դաշտ |
| Հեռախոսահամար | Տեքստային դաշտ |
| Էլ. փոստի հասցե | Տեքստային դաշտ |
| Ժամ | Տեքստային դաշտ |
| Ստորագրություն | Գնումների համակարգողի  ստորագրություն |

**Գ28-2/Ե**

Գ28-1/Մ տվյալներ

| | |
|---|---|
| Վալիդացիա | Գնումների համակարգողների շարունակական մասնագիտական վերապատրաստման դեպքում իրականացվում է հետևյալ տվյալների ստուգում.<br>● «ՀԾՀ» դաշտի արժեքի պարտադիր ստուգում<br>● «Անձնագրի համար» դաշտի արժեքի ստուգում |



Մասնակից
Մինչև հունվարի 15-ը վերապատրաստման ծրագրի հրապարակում
ՀՀ ՖՆ վերապատրաստման հայտի ստացում
Եթե օրենսդրությամբ նախատեսված ժամկետներում չի ներկայացրել վերապատրաստման վերաբերյալ տեղեկատվություն
Որակավորման դադարեցում
ոչ
մինչև մարտի 1-ը դիմում ներկայացվել է
այո
Հայտերի ներկայացում, իսկ ֆիզիկական անձանց դեպքում՝ դիմումի ներկայացում Mulberry համակարգի կամ ՀՀ ՖՆ էլ. փոստի միջոցով
Հայտերի Ներկայացում
ՀՀ ֆինանսների նախարարություն
procurement.am
Գ28-1/Ե տվյալներ
Տվյալների հրապարակում
ՀՀ ՖՆ գնումների քաղաք. մեթոդ. վարչության աշխատակից
Ոչ
Մերժում
Հայտերի ստացում, ստուգում
Օրենսդրության պահանջներին համապատասխանություն
Այո
Ընդունում, խմբավորում
Նախագծի ստեղծում, հաստատման ուղարկում
ՀՀ ՖՆ հրամանի հրապարակում
Նախարար
Նախագծի ստացում, հաստատում

| | |
|---|---|
| Ստորաբաժանում | Գնումների քաղաքականության վարչություն |
| Անվանում | Գ29- Գնումների համակարգողների որակավորման դադարեցում |
| Նպատակ | Գնումների համակարգողի որակավորման դադարեցում |
| Տիրույթ | ՀՀ ֆինանսների նախարարության գնումների քաղաքականության վարչություն, գնումների համակագող |
| Դերակատարներ | ՀՀ ֆինանսների նախարարության գնումների քաղաքականության վարչության աշխատակից, գնումների համակագող, www.procurement.am (gnumner.am) |
| Ընթացք 1 | 1. Գնումների համակարգողի որակավորումը դադարեցվում է լիազորված մարմնի (ՀՀ ֆինանսների նախարարություն) ղեկավարի կամ նրա կողմից լիազորված պաշտոնատար անձի կողմից՝ հետևյալ փաստերից որևէ մեկի հայտնի դառնալու դեպքում՝ 1) քննությանը մասնակցելու նպատակով կեղծ փաստաթղթեր կամ ոչ արժանահավատ տեղեկություններ ներկայացնելը. 2) հերթական շարունակական մասնագիտական վերապատրաստման ծրագիրը հաջողությամբ չավարտելը. 3) մեկ օրացուցային տարվա ընթացքում միևնույն պատվիրատուի մոտ տվյալ գնումների համակարգողի կողմից, որպես գնահատող հանձնաժողովի քարտուղար, գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ վերապահված լիազորությունների ոչ պատշաճ կատարման արդյունքում գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացված և բավարարված բողոքների քանակը գերազանցում է այդ համակարգողի կողմից կազմակերպված գնման ընթացակարգերի ընդհանուր քանակի 30 տոկոսը:<br>2. Գնումների համակագողը համարվում է վերապատրաստումը հաջողությամբ չավարտած և նրա որակավորումը դադարեցվում է, եթե չի մասնակցում վերապատրաստման դասընթացի ընդհանուր տևողության առնվազն 80 տոկոսին: Վերապատրաստման ենթակա, սակայն արձակուրդում, հղիության և ծննդաբերության, երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդում, պարտադիր զինվորական ծառայության կամ գործուղման մեջ գտնվող, ինչպես նաև ժամանակավոր անաշխատունակ գնումների համակարգողը ենթակա է վերապատրաստման աշխատանքի ներկայանալուց հետո վեցամսյա ժամկետում: Ընդ որում, նշված դեպքում երեք աշխատանքային օրվա ընթացքում անձը գրավոր տեղեկացնում է ՀՀ ՖՆ:<br>3. ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 29-ի N 759-Ն որոշմամբ հաստատված կարգի (Այսուհետ՝ կարգ) 24-րդ կետով նախատեսված փաստերից որևէ մեկի հայտնի դառնալու դեպքում ՀՀ ՖՆ գնումների քաղաքականության վարչության աշխատակիցը գրավոր ծանուցում է տվյալ գնումները համակարգողին (Պետական մարմինների դեպքում՝ «Mulberry» փաստաթղթաշրջանառության համակարգի միջոցով տեղեկացնում է մարմնի ղեկավարին) և միաժամանակ նշված ծանուցումը հրապարակում տեղեկագրում՝ նշելով հրապարկման ամսաթիվը: Եթե նշված ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում գնումները համակարգողը գրավոր չի ներկայացնում պարզաբանում կամ ներկայացված պարզաբանումը չի ընդունվում ՀՀ ՖՆ կողմից, ապա ՀՀ ՖՆ կողմից կայացվում է գնումների համակարգողի որակավորումը դադարեցնելու մասին որոշում, որն այն կայացվելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում հրապարակվում է տեղեկագրում: Անձի՝ գնումների համակարգողի որակավորումը համարվում է դադարած՝ կարգի 24-րդ կետում նշված որոշումը տեղեկագրում հրապարակվելու օրվանից: Որոշումը ներառում է տեղեկատվություն որակավորման դադարեցման հիմքերի վերաբերյալ: Անձը գնումների համակարգողի որակավորումը դադարեցված անձանց ցուցակում ընդգրկվում է |

<table>
<tr><td></td><td>365 օրացուցային օր ժամկետով: Անձի՝ գնումների համակարգողի որակավորումը դադարեցվելու դեպքում վերջինս նոր որակավորում ստանալու դիմում կարող է ներկայացնել միայն դադարեցման օրվանից հաշված 365 օրացուցային օր հետո: Ընդ որում, կարգի 24-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված պայմանի հիմքով՝ (Հերթական շարունակական մասնագիտական վերապատրաստման ծրագիրը հաջողությամբ չավարտելը) գնումների համակարգողի որակավորումը դադարեցնելու դեպքում, սույն կետով սահմանված ժամկետը չի կիրառվում, եթե տվյալ անձը շարունակական մասնագիտական վերապատրաստման ծրագիրը անցնելու ժամանակահատվածում, չի հանդիսանում պատվիրատուի աշխատող:</td></tr>
<tr><td>Մուտքագրվող տվյալներ</td><td>Գ29-1/Մ<table>
<tr><td>Անուն/Ազգանուն/Հայրանուն</td><td>Տեքստային դաշտ</td></tr>
<tr><td>Անձնագրի համար</td><td>Տեքստային դաշտ</td></tr>
<tr><td>Ում կողմից</td><td>Տեքստային դաշտ</td></tr>
<tr><td>Քննության անցկացման ամսաթիվ</td><td>Տեքստային դաշտ</td></tr>
<tr><td>Զբաղեցրած պաշտոն</td><td>Տեքստային դաշտ</td></tr>
<tr><td>ՀԾՀ</td><td>Տեքստային դաշտ</td></tr>
<tr><td>Զբաղեցրած պաշտոն</td><td>Տեքստային դաշտ</td></tr>
<tr><td>Դադարեցման հիմքեր</td><td>ՀՀ ֆինանսների նախարարի հրաման</td></tr>
</table></td></tr>
<tr><td>Ելքագրվող տվյալներ</td><td>Գ29-1/Ե<br>Գ29-1/Մ տվյալներ</td></tr>
<tr><td>Վալիդացիա</td><td>Գնումների համակարգողների որակավորման դադարեցման դեպքում իրականացվում է հետևյալ տվյալների ստուգում.<br>● «ՀԾՀ» դաշտի արժեքի պարտադիր ստուգում<br>● «Անձնագրի համար» դաշտի արժեքի ստուգում</td></tr>
</table>


ՀՀ ՖՆ Գնումների քաղաքականության մեթոդաբանության վարչություն
Գնումների համակարգողների վերապատրաստման դասընթացներին դիմած/չներկայացած մասնակիցների ծանուցում
Այլ մարմիններ, ֆիզիկական անձիք
Պետական մարմին
Էլ. փոստի հասցեներին ծանուցում
Mulberry-ով ծանուցում
Եթե ՀՀ ՖՆ նախարարի սահմանված ժամկետներում չեն ներկայացել վերապատրաստման
Հրապարակում տեղեկագրում
Պարզաբանումների ստացում
Դադարեցվում է պարզաբանումը չներկայացրած, պարզաբանումը ՀՀ ՖՆ-ի կողմից չընդունված և լրացուցիչ խմբին չներկայացված մասնակիցների որակավորումը
Պարզաբանման ընդունում
ոչ
այո
Որակավորման դադարեցում ՀՀ ՖՆ նախարարի հրամանով
Լրացուցիչ վերապատրաստմանը մասնակցելու հնարավորություն
ՀՀ ՖՆ նախարարի հրամանի կազմում և հրապարակում
procurement.am
Գնումների համակարգող
Ծանուցման ստացում
Պարզաբանման ներկայացում
այո
ոչ
Պարզաբանման ներկայացում ՀՀ ՖՆ
Որակավորման դադարեցում

## Տվյալների փոխանակում ԿՖԿՏՀ այլ մոդուլների և արտաքին աղբյուրների հետ

| Տվյալների տրամադրում | Տվյալների ստացում | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | **Բյուջետավորում** | **Գանձապետական** | **Գնումներ** | **Պետական պարտք** | **Հանրային հատվածի հաշվապահական հաշվառում** | **Ներքին աուդիտ **** | **Մակրոտնտեսական քաղաքականություն** | **Արտաքին աղբյուրներ** |
| Բյուջետավորում | | 1. Ծրագիր, միջոցառում<br>2. Առաջիկա տարվա հաստատված բյուջեի պլան<br>3. Պլանի վերաբաշխում<br>4. *Եկամտային/ծախսային հաշիվների բացման վերաբ. տեղեկատվություն<br>5. Հաստատված եռամսյակային համամասնություններ<br>6. *Պետական բյուջեի տարեկան հաշվետվության «Սոցիալ-տնտեսական զարգացման և հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունները» բաժնի | 1. Տարեկան գնումների պլան /ծրագիր, միջոցառում, տնտեսագիտական հոդված/ | 1. *մուրհակների մարումների, տրամադրված վարկերի և փոխատվությունների վերադարձից մուտքերի, Արցախի Հանրապետությանը տրամադրվելիք միջպետական վարկի, վարկերի և փոխատվությունների տրամադրումից մուտքերի, ինչպես նաև արտաքին վարկերի ծավալների կանխատեսումները | | 1. *Բյուջետային ծրագրեր (արդյունքային, ֆինանսական, ոչ ֆինանսական ցուցանիշներ)<br>2. *Բյուջեների վերաբաշխումներ<br>3. *Բյուջետային ծրագրերի կատարում | 1. *այլ եկամուտների և պաշտոնական դրամաշնորհների գծով կանխատեսումներ<br>2. * ծախսերի տնտեսագիտական բացվածքի գծով կանխատեսումներ | 1. * ՏԿեն-ին համայնքների բյուջեների նախագծերի կազմման մեթոդական ցուցումներ,<br>2. *ՏԿԵՆ-ին «Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող՝ ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների եկամուտների կորուստների հաշվարկման հիմքում դրվող ելակետային տվյալների ցանկի, դրանք հաշվարկելու կարգի, ներկայացման ձևի, այն լրացնելու կարգի |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | համապատասխան ենթաբաժինը (տվյալ տարվա բյուջետային ուղերձին համապատասխան) | | | | | | և ներկայացնելու ժամկետի մասին» ՀՀ ֆինանսների նախարարի հրամանի նախագծը, 3. * Արդարադատության նախարարությանը «Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող՝ ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների եկամուտների կորուստների հաշվարկման հիմքում դրվող ելակետային տվյալների ցանկի, դրանք հաշվարկելու կարգի, ներկայացման ձևի, այն լրացնելու կարգի և ներկայացնելու ժամկետի մասին» ՀՀ ֆինանսների նախարարի հրամանի նախագծը, |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | 4. * ՀՀ Վարչապետին- ՄԺԾԾ նախագծի տրամադրում |
| Գանձապետարան | 1. Փաստացի ստացված եկամուտների վերաբերյալ տեղեկատվություն<br>2. Փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ տեղեկատվություն<br>3. Պահուստի ստեղծում /բյուջեի նվազեցման դեպքում/<br>4. *Ծախսերի չափաքանակի բացման հայտ/գրություն<br>5. *Պահուստային ֆոնդի կարգավիճակ /տեղեկանք/<br>6. Ծախսերի կատարման նախահաշիվներ<br>7. *Փոխանցելի մուրհակների և հաշվարկված տոկոսագումարնե | | 1. Գանձապետական ծախսային հաշվեհամարներ | 1. GFS հաշվետվության տվյալներ<br>2. *Կանխիկ հոսքերի կանխատեսումներ<br>3. *Պետական բյուջեի կատարման մասին ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվություններ/ տեղեկատվություն | 1. Տրամադրված ֆինանսավորում<br>2. Հաշիվների մնացորդ<br>3. Վճարումների վերաբերյալ տվյալներ | 1. Գանձապետական գործարքների տվյալներ (LS Finance)<br>2. *Պետական բյուջեի կատարման մասին եռամսյակային և տարեկան հաշվետվություններ/ տեղեկատվություն | 1. *ՀՀ պետական բյուջեի կատարման վերաբերյալ տարեկան հաշվետվության մասով տվյալներ<br>2. *Պետական բյուջեի կատարման մասին ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվություններ/ տեղեկատվություն | 1. Վճարային տվյալների տրամադրում ԿԲ և առևտրային բանկերին<br>2. *Պետական բյուջեի կատարման մասին եռամսյակային և տարեկան հաշվետվությունների ներկայացում Վարչապետի աշխատակազմ և հրապարակում նախարարության պաշտոնական կայքում<br>3. *Պետական բյուջեի կատարման մասին ամսական, եռամսյակային և տարեկան տեղեկատվություն Վիճակագրական կոմիտեին<br>4. *Համախմբված բյուջեի |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | րի վերաբերյալ տեղեկանք<br>8. *Վարկերի դիմաց մուտքերի վերաբերյալ տեղեկանք<br>9. *Թերակատարումների վերաբերյալ հաշվետվություն<br>10. *Տեղեկանք բյուջեի կատարման վերաբերյալ | | | | | | | կատարման մասին եռամսյակային և տարեկան տեղեկատվություն Վիճակագրական կոմիտեին, Եվրասիական տնտեսական հանձնաժողովին, Եվրասիական զարգացման բանկին<br>5. *Պետական բյուջեի պարզեցված տարեկան հաշվետվության հրապարակում նախարարության պաշտոնական կայքում<br>6. *Պետական բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ ամսական տեղեկատվության հրապարակում նախարարության պաշտոնական կայքում<br>7. *Պետական մարմինների արտաբյուջետային միջոցների եռամսյակային և տարեկան |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | հաշվետվությունների հրապարակում նախարարության պաշտոնական կայքում<br>8. *Համայնքների բյուջեների կատարման մասին եռամսյակային և տարեկան ամփոփ հաշվետվությունների հրապարակում նախարարության պաշտոնական կայքում<br>9. *Պետական բյուջեի վերջին երեք տարիների կատարման մասին տեղեկատվության հրապարակում նախարարության պաշտոնական կայքում հայերեն և անգլերեն լեզուներով<br>10. *Պետական բյուջեի ամսական (կուտակային) ցուցանիշների հրապարակում նախարարությա |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | ն պաշտոնական կայքում |
| Գնումներ | 1. *Գնումների պլանի բացվածք /ըստ ծրագրի, միջոցառման, տնտեսագիտական հոդվածի/ | 1. Գնումների պլանի փոփոխություն, լրացումներ<br>2. Կնքված պայմանագրերի ու դրանց շրջանակում համաձայնագրերի փոփոխություն<br>3. *Պետական բյուջեի տարեկան հաշվետվության «Սոցիալ-տնտեսական | | | | | | 1. Մասնակիցներ-Հրավեր, պայմանագրեր |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | զարգացման և հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունները» բաժնի համապատասխան ենթաբաժինը (տվյալ տարվա բյուջետային ուղերձին համապատասխան) | | | | | | |
| Պետական պարտք | 1. *Դեֆիցիտի ֆինասավորման աղբյուրների վերաբերյալ տեղեկատվություն<br>2. *Կառավարության պարտքի կառավարման միջնաժամկետ ռազմավարություն<br>3. *Առաջիկա երեք տարիներին ստացվելիք բյուջետային մուտքերի (տոկոսավճար, մայր գումարի մարում) գծով կանխատեսումներ<br>4. *Շրջանառության մեջ գտնվող | 1. *Ուղղակի վճարումների տվյալներ<br>2. *Ավանդադրման հայտ<br>3. *Գանձապետական պահառուի համակարգի միջոցով վաճառված պարտատոմսերի մուտքի վերաձևակերպման համար գրություն<br>4. *Պետական գանձապետական պարտատոմսերի սպասարկման ու մարման վճարումների փաստաթղթեր<br>5. *Խնայողական արժեկտրոնային պարտատոմսերի արժեկտրոնի վճարումների | | | | 1. *Պարտքային գործիքների գրանցման, պարտքի ներգրավման, մարման և սպասարկամ պրոցեսներում առկա տեղեկատվություն<br>2. *ԳՄՀ-ում ազատ միջոցների ԿԲ-ում ավանդադրման պրոցեսներում առկա տեղեկատվություն<br>3. *ԿԲ-ում առկա ավանդի մարման պրոցեսներում առկա տեղեկատվություն | | 1.ՀՀ Կենտրոնական դեպոզիտարիա –<br>– *Պարտապոմսերի ԱՄՏԾ (ISIN) կոդի շնորհման համար անհրաժեշտ տվյալ՝ ԱՄՏԾ-ի շնորհման հայտ<br>2. ՀՀ ԿԲ –<br>– *Պարտատոմսերի գրանցման համար տեղեկատվություն՝ «Գրանցվող պետական պարտատոմսի տվյալներ» փաստաթուղթ<br>– *ԳՄՀ ժամանակավորապես ազատ |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | պարտատոմսերի վճարումների ժամանակացույցի ու դրանց գծով պարտքային պորտֆելը բնութագրող ցուցանիշների (պարտքի ծավալ, միջին տոկոսադրույք, ժամկետ և այլն) հիման վրա կատարված կանխատեսումներ առաջիկա երեք տարիների համար<br>5. *Առաջիկա երեք տարիներին Միջազգային ֆինանսական կազմակերպությունների կապիտալին բաժանորդագրության գծով վճարվելիք գումարների գծով կանխատեսումներ | փաստաթղթեր<br>6. *Վարկի մասհանման գումարի ստացման ժամանակ միջնորդավճարի գանձման մասին տեղեկատվություն<br>7. *Կատարված վարկի մասհանումը ԳԳՕ համակարգում գրանցելու նպատակով ներքին փաստաթուղթ<br>8. *Տոկոսավճարների կապիտալիզացման գործարքների գրանցումը ԳԳՕ համակարգում ապահովելու համար տեղեկատվություն<br>9. *Եռամսյակային/տարեկան կտրվածքով հաշվետվություն տարեսկզբից աճողական արտարժութային պարտքի սպասարկման և մարման գծով փաստացի կատարված վճարումների մասին` | | | | | | միջոցների ավանդադրման հայտ<br>- * ԿԲ-ում առկա ավանդի վաղաժամկետ մարման հայտ<br>3. ՀՀ Ֆոնդային Բորսա (QUIK համակարգ) -<br>- *«Հայտարարություն պետական գանձապետական պարտատոմսերի տեղաբաշխման (հետգնման) աճուրդի կազմակերպման մասին» փաստաթուղթ<br>- Թողարկողի հայտ<br>- *Լրացուցիչ աճուրդի կազմակերպման հայտարարություն<br>4. Վարկատուների հարթակներ<br>- *Համաստորագրողների մասին գրություն<br>- Մասհանման հայտ |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | համադրելով պլանային ցուցանիշների հետ<br>10. *Հաստատված վճարման հանձնարարական անակցեպտ գանձված գումարների մանրամասներով (վճարման տեսակ, գումար, ենթահաշիվ, բյուջետային դասակարգում և այլն)<br>11. *Տարեկան պետական բյուջեում և եռամսյակային համամասնություններում վերաբաշխումներ կատարելու առաջարկություն<br>12. *Շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի վճարումների ժամանակացույցի ու դրանց գծով պարտքային պորտֆելը բնութագրող ցուցանիշների (պարտքի ծավալ, միջին տոկոսադրույք, | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ժամկետ և այլն) հիման վրա կատարված կանխատեսումներ առաջիկա երեք տարիների համար<br>13. *Արտարժութային պարատատոմսերի վճարման պահանջագիր<br>14. *Առաջիկա երեք տարիներին Միջազգային ֆինանական կազմակերպություններ ների կապիտալին բաժանորդագրությ ան գծով վճարվելիք գումարների գծով կանխատեսումներ<br>15. *Տեղեկանքներ հաշվետվություննե րի կազմման համար<br>16. *Բյուջեի դեֆիցիտի ֆինասավորման կանխատեսում<br>17. * Բյուջետային փոխանցագիր/վճա րման հանձնարարագիր | | | | | | |
| Հանրային հատվածի հաշվապահակ ան հաշվառում | | 1. *Պետական բյուջեի տարեկան հաշվետվության «Սոցիալ-տնտեսական | | 1. *ՊՈԱԿ-ների գծով համախմբված դրամական հոսքերի մասին | | 1. *Ամփոփ տեղեկատվությու ն ՀՀ պետական բաժնեմասնակցո ւթյամբ առևտրային | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | զարգացման և հարկաբյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունները» բաժնի համապատասխան ենթաբաժինը (տվյալ տարվա բյուջետային ուղերձին համապատասխան) | | հաշվ.՝ խմբավորված ըստ գործառնական դասակարգիչների | | կազմակերպությունների կողմից տարեկան գործունեության արդյունքներով յուրաքանչյուր տարի պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերի և տարեվերջի դրությամբ առկա չմարված պարտավորությունների մասին | | |
| Ներքին աուդիտ ** | 1. *Բյուտջետային տարբեր ծրագրերի արդյունավետության գմահատանման աուդիտի հաշվետվություններ | 1. *Գանձապետական տարբեր պրոցեսների համապատասխանության աուդիտի հաշվետվություններ | 1. *Գնումների պլանավորման աուդիտի հաշվետվություններ<br>2. *Գնումների կատարման աուդիտի հաշվետվություններ | 1. *Պետական պարտքի կառավարման արդյունավետության գնահատման աուդիտի հաշվետվություն | 2. *Համապատասխանության աուդիտի հաշվետվություն | | 1. *Մակրոտնտեսական կանխատեսումների արդյունավետության գնահատման աուդիտի հաշվետվություն | 1. *Ըստ պահանջի հայցվող տեղեկատվության տրամադրում, եթե այն չի հանդիսանում զգայուն կամ գաղտնի (կազմակերպության ղեկավարի միջոցով) |
| Մակրոտնտեսական քաղաքականություն | 1. *Մակրոտնտեսական և հարկաբյուջետային շրջանակներ (հիմնականցուցանիշների կանխատեսումներ)<br>2. *Պետական | 1. *Պետական բյուջեի եռամսյակային և տարեկան հաշվետվություններ «Հարկաբյուջետային և մակրոտնտեսական ամփոփագիր» և | | 1. *Առաջիկա միջնաժամկետ հատվածի համար տարեկան մակրոտնտեսական շրջանակը՝<br>- ՀՆԱ-ն,<br>ԱՄՆ դոլարի փոխարժեքը | | 1. *Մակրոտնտեսական կանխատեսումների համար հիմք հանդիսացող ցուցանիշներ<br>2. *Մակրոտնտեսական | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | բյուջեի ուղերձի և ՄԺԾԾ-ի համապատասխա ն բաժիններ | «ՀՀ մակրոտնտեսական և հարկաբյուջետային զարգացումներ» բաժինները, տարեկան հաշվետվության «Սոցիալ-տնտեսական զարգացման և հարկաբյուջետային քաղաքականությա ն հիմնական ուղղությունները» բաժնի ներածությունը | | տարեվերջին, ԱՄՆ դոլարի միջին տարեկան փոխարժեքը, գնաճը, ՀՀ արտաքին պահուստները | | կանխատեսումն արի համար կիրառվող մոդելներ | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Արտաքին աղբյուրներ | 1. * ԲԳԿ մարմիններից բյուջետային հյատեր՝ եկամուտների և ծախսերի մասով,<br>2. ՏԿԵՆ կայքից ՀՀ համայնքների բյուջեների եկամուտների հավաքագրման վերաբերյալ տեղեկատվություն ,<br>3. * ՄԺԾԾ քննարկումների արձանագրություններ,<br>4. * ՀՀ Վարչապետի աշխատակազմը ներկայացնում է պաշտոնական դրամաշնորհների հայտը | 1. Վճարային տվյալների ստացում ԿԲ-ից և առևտրային բանկերից (LS Finance)<br>2. *ԿԲ-ից փոխարժեքների, քաղվածքների ստացում (Lotus Nodes)<br>3. ՊԵԿ-ից միասնական հաշվից հարկերի վերադարձի հանձնարարական /վեբ ծառայության միջոցով/<br>4. *Գրություն պետական մարմիններից հաշիվների արգելադրումների կամ բռնագանձումների մասին<br>5. *ԴԱՀԿ-ից գրություն բռնագանձված գումարի վերադարձի մասին<br>6. *Մաքսային մարմիններից ԱԱՀ-ի վերադարձի գրություններ<br>7. ՊՌԱԿ-ների կողմից մատուցված ծառայությունների դիմաց ՀԴՄ | 1. Մասնակիցներ – Պայմանագրեր, Հանձնման-ընդունման անհրաժեշտ փաստաթղթեր, համաձայնագրեր<br>2. Մասնակիցների կողմից համակարգ ներբեռնվող հայտի փաթեթներ | <u>1. ՀՀ Կենտրոնական դեպոզիտարիա –</u><br><u>*Պարտապոմսերի ԱՄՏԾ (ISIN) կոդ</u><br><u>2. ՀՀ ԿԲ –</u><br><u>– *Պարտատոմսերի գրանցման տեղեկատվություն,</u><br><u>– *Պարտատոմսերի երկրորդային շուկայում մասնակիցների ցուցանիշներ</u><br><u>3. ՀՀ Ֆոնդային Բորսա (QUIK համակարգ) –</u><br><u>– *Պետական Պարտատոմսերի աճուրդի արդյունքների տվյալներ (հայտարարություն, հաշվետվություն),</u><br><u>– *Պարտատոմսերի առաջնային</u> | | Տարբեր մոդուլներում տարատեսակ աուդիտի իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվություն արտաքին համարագերից՝ ՊԵԿ, ԻԱՊՌ, ԲՊՌ, ԿԲ և այլ պետական գերատեսչական և/կամ կոմերցիոն կառույցներ | 1. * Ոլորտային նախարարություններից կանխատեսումներ համապատասխան ոլորտի հիմնականցուցանիշների վերաբերյալ,<br>2. * Տեղեկատվություն ՀՀ ՊԵԿ-ից հարկային եկամուտների փաստացի ցուցանիշների և դրանց բազաների վերաբերյալ<br>3. * ՀՀ ՊԵԿ-ից հարկային եկամուտների՝ ըստ հարկատեսակների կանխատեսումներ,<br>4. * Տեղեկատվություն ՀՀ ԿԲ-ից դրամավարկային հատվածի փաստացի օպերատիվ ցուցաիշների վերաբերյալ,<br>5. * Գնաճի | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | սարքերի կամ POS տերմինալներով վճարված գումարների մուտքագրում գանձապետական հաշիվներին Ամերիաբանկի միջոցով<br>8. E-payments համակարգից վճարումների ընդունում<br>9. ԻԱ գրանցման տվյալներ (Իրավաբանական անձանց պետական ռեգիստր)<br>10. Հաշվարկային փաստաթղթերի տվյալներ (ՊԵԿ-ի E-invoicing համակարգ)<br>11. ԲԳԿ-ներից պետական բյուջեի կատարման վերաբերյալ ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվություննե ր<br>12. *Որոշ ԲԳԿ-ներից համայնքների հաշվետվություննե րի ընդունման համար անհրաժեշտ տվյալներ | | շուկայում մասնակիցների ցուցանիշներ<br><br>4. Depend - Գրանցված ԽԱՊ-երի տվյալներ<br>5. gp.minfin.am - Գնված ԽԱՊ-երի տվյալներ<br>6. Վարկատուներ ի հարթակներ - Մասհանման հայտի կարգավիճակի մասին տեղեկություն - Վճարման պահանջագիր | | | կանխատեսումնե ր ՀՀ ԿԲ-ից | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 13. *ԲԳԿ-ներից պետական բյուջեի տարեկան հաշվետվությունների վերլուծական մաս, հավելվածներ, տեղեկանքներ, պետական հիմնարկի կողմից եկամուտների հավաքման մասին հաշվետվություններ (ձև Հ-1) | | | | | | |
| | | | | | | | | |
| **Ամբողջական տվյալները և դրանց կառուցվածքը ներկայացված են յուրաքանչյուր բիզնես գործընթացի նկարագրության մեջ** | | | | | | | | |
| | | | | | | | | |
| *** նշված են այն տվյալները, որոնք փոխանակվում են .xls կամ .word ձևաչափերով ֆայլերի տեսքով: Մյուս բոլոր տվյալները փոխանակվում են էլեկտրոնային համակարգերի միջոցով:** | | | | | | | | |
| **** Նշված տեղեկատվությունը Ներքին աուդիտը ստանում է բացառապես ներքին աուդիտի առաջադրանք պլանավորելու և իրականացնելու ժամանակ և դրա արդյունքում տրամադրում է համապատասխան հաշվետվություններ:** | | | | | | | | |